ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



ՀՀ Կենտրոնական Բանկ

ԱՄ Փարթնըրզ
Քոնսալթինգ Քամփնի

Բովանդակություն

1 ՆԱԽԱԲԱՆ 2

1.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳԼՈԲԱԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ .. 2

1.2 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ 4

1.2.1 Նպատակ 4

1.2.2 Խնդիրներ 4

2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ 6

2.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 6

2.1.1 Ֆինանսական կարողությունների բնորոշումը ԱՄՆ-ում 6

2.1.2 Ֆինանսական կարողությունների բնորոշումը Մեծ Բրիտանիայում 8

2.1.3 Ֆինանսական կարողությունների բնորոշումը ՏՀԶԿ-ի կողմից 9

2.1.4 Ֆինանսական կարողությունների բնորոշումը Համաշխարհային Բանկի կողմից 10

2.2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ 11

2.2.1 Գիտելիքներ 11

2.2.2 Հմտություններ 12

2.2.3 Վերաբերմունք 13

2.2.4 Վարքագիծ 15

2.3 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՒՅՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 16

3 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 18

3.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 19

3.2 ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԳՐԱԳԵՏ ՄԱՐԴՈՒ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՏՐԻՑ 20

3.3 ՀԱՐՑԱԾԱՐԸ ՈՐՊԵՍ ՖԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԻՔ 24

3.4 ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ 27

4 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ 28

4.1 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 28

4.1.1 Ֆինանսական կարողությունների ինդեքսի հաշվարկման համակարգը 28

4.1.2 Ֆինանսական կարողությունների ինդեքսի հաշվարկման մոտեցումները 30

4.2 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄՈԴՈՒԼ 32

4.2.1 Ռեսպոնդենտների պատասխանների վիճակագրության վերծանում 32

4.2.2 Ռեսպոնդենտների պատասխանների արտահայտումը մեկ ցուցանիշով 33

4.2.2.1 Բնակչության ՖԿԻ հաշվարկման մոդուլի կառուցվածքը 33

4.2.2.2 Առանձին հարցերի պատասխանների արտահայտումը մեկ ցուցանիշով 35

4.2.3 Բնակչության ֆինանսական կարողությունների ենթաինդեքսների եւ ընդհանուր ինդեքսի հաշվարկում 45

5 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ 48

5.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ 48

5.1.1 Հետազոտության աշխարհագրությունը 48
5.1.2 Թիրախային խումբը 48
5.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆՔԸ 49
5.2.1 Ընտրանքի չափը 49
5.2.2 Ընտրանքի ձեւավորումը 51
5.2.2.1 Հետազոտության համայնքների ընտրությունը 51
5.2.2.2 Հարցազրույցների փեղամասերի ընտրությունը 58
5.2.2.3 Տնային փնտրեսությունների ընտրությունը 58
5.2.2.4 Ռեսպոնդենտի ընտրությունը 61
5.2.3 Ընտրանքի քվոտավորում. կողմ եւ դեմ հանգամանքներ 62
5.2.4 Առաքելություն «գտնել ռեսպոնդենտին» 63
5.3 ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 64
5.3.1 Հարցազրուցավարների ընտրությունը եւ մեթոդավորումը 64
5.3.2 Հարցազրուցավարների աշխատանքի վերահսկողությունը 65

6 ԱՄՓՈՓԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 66

7 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 67
7.1 ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ՆԱԽԱԳԻԾ 67
7.2 ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ 67
7.3 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՖԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄՈԴՈՒԼ 67

Հապավումների ցանկ

ԱՎԾ	Ազգային Վիճակագրական Ծառայություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԿԲ	Կենտրոնական Բանկ
ՀԲ	Համաշխարհային Բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՏՀԶԿ	Տնտեսական Համագործակցության եւ Զարգացման Կազմակերպության
ՖԿԱՌ	Ֆինանսական կրթման ազգային ռազմավարության
ՖԿԻ	Ֆինանսական կարողությունների ինդեքս

Հայաստանում բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման մեթոդաբանությունը մշակվել է ԱՄ Փարթնըրզ խորհրդատվական ընկերության կողմից՝ ի դեմս ընկերության խորհրդատուներ Վարդան Աղբալյանի եւ Վահե Մամբրեյանի:

Աշխատանքի պատվիրատուն ՀՀ Կենտրոնական Բանկն է, որի նպատակն է միջազգային փորձի եւ ձեռքբերումների հիման վրա ստեղծել բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման ունիվերսալ մեթոդաբանություն, որի մեխը կազմում է ֆինանսական կարողությունների ինդեքսի հաշվարկումը:

Մեթոդաբանության ունիվերսալ բնույթը կայանում է նրանում, որ այն կարելի է ադապտացնել եւ կիրառել տարբեր երկրներում, առանձին երկրների տարբեր ռեգիոններում: Միասնական մեթոդաբանության հիման վրա ձեռքբերված տվյալները կլինեն համադրելի, իսկ դրանց հիման վրա հաշվարկված ֆինանսական կարողությունների ինդեքսները թույլ կտան համեմատություններ անցկացնել տարբեր երկրների բնակչության ֆինանսական կարողությունների մակարդակների միջեւ:

1 ՆԱԽԱԲԱՆ

1.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳԼՈԲԱԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Մարդկության զարգացման ընթացքում ֆինանսական միջոցների նկատմամբ հասանելիությունը միշտ աճել է: Մարդկության պատմության ներկայիս հանգրվանը բնորոշվում է նրանով, որ **ֆինանսները մուտք են գործել յուրաքանչյուր մարդու առօրյա գործունեության բոլոր ոլորտները՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն, սպառում եւ այլն:** Այսօր մարդիկ սեփական եւ փոխառու ֆինանսական միջոցներով լուծում են ամենատարբեր խնդիրներ, սկսած սովորական (լայն սպառման) ապրանքների ձեռքբերումից եւ վերջացրած սեփական սոցիալական ինքնապահովության հարցերով, սկսած սովորական ժամկետային ավանդի մեջ ներդրումից եւ վերջացրած ֆոնդային բորսաներում արժեթղթերի առքուվաճառքով: Այս համատեքստում, ժամանակակից մարդու կյանքում **ֆինանսների կառավարումը հանդիսանում է սեփական կենսագործունեությունը կազմակերպելու կարեւորագույն ունակություններից մեկը**: Մեր օրերում, անկախ կրթությունից, տարիքից, սոցիալական կարգավիճակից, մարդիկ պետք է ունենան ֆինանսների կառավարման նվազագույն ունակություններ, քանի որ վերջիններս ուղղակիորեն ազդում են մարդկանց ֆինանսական բարեկեցության վրա: Եվ դա ամենեւին կապ չունի ֆինանսների քանակի հետ. **ամենափոքր քանակությամբ փողը եւս կարիք ունի գրագետ կառավարման:**

Ֆինանսների կառավարման ունակությունների առկայությունը մարդկանց կարող է թույլ տալ ֆինանսական համակարգի հնարավորությունները ծառայեցնել իրենց շահերին եւ կերտել սեփական բարեկեցությունը: Իսկ դրանց բացակայությունն, ընդհակառակը, կարող է մարդկանց համար ստեղծել այնպիսի ռիսկեր եւ մարտահրավերներ, որոնց հաղթահարումը վեր է նրանց ուժերից: Ասվածի լավագույն ապացույցը եւ ամենաթարմ դասը գլոբալ հանրությունը ստացավ 2008թ.-ին՝ ի դեմս համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի: Այդ ճգնաժամը բացահայտեց ֆինանսների կառավարման հարցում պետությունների եւ առանձին մարդկանց մոտ առկա բազմաթիվ թերություններ: Հատկապես առանձին մարդկանց դեպքում թերությունների մեծ մասը վերջին հաշվով հանգում է նրանց **ֆինանսական գրագիտության (financial literacy) ցածր մակարդակին:**

Մարդկանց հսկայական զանգվածների շրջանում տարրական ֆինանսական գիտելիքների եւ հմտությունների բացակայությունը բացառում կամ սահմանափակում է սեփական ֆինանսական բարեկեցության ապահովման նպատակով ճիշտ եւ կշռադատված որոշումների կայացումը: **Միկրոմակարդակում** մարդկանց ֆինանսական գրագիտության ցածր մակարդակը առաջացնում է նույն մարդկանց՝ որպես սպառողների, իրավունքների պաշտպանության խնդիրներ, պարտքային գերբեռնվածության, խնայողությունների կառավարման եւ նպատակային բաշխման խնդիրներ եւ այլն: **Մակրոտնտեսական** մակարդակում մարդկանց ֆինանսական գրագիտության ցածր մակարդակը խոչընդոտում է ֆինանսական շուկաների զարգացմանը, խանգարում է ֆինանսական հաստատությունների եւ պետության կարգավորիչ գործառույթների նկատմամբ վստահության միջավայրի ձեւավորմանը, հանգեցնում է տնտեսական աճի դանդաղեցման եւ այլն: Գիտակցելով այս խնդիրները, գլոբալ տնտեսական հարաբերությունները կարգավորող երկրները, ի դեմս G20-ի մասնակից երկրների, բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացումը դասել են հետեւողական լուծման ենթական գլոբալ նշանակության հարցերի շարքին: Մասնավորապես, 2012թ.-ի հունիսի 18-19 մեքսիկական Լոս Կաբոսում կայացած G20-ի մասնակից երկրների առաջնորդների 7-րդ գագաթաժողովի եզրափակիչ դեկլարացիայի 50-րդ կետը խնդրին անդրադառնում է հետեւյալ կերպ[1].

[1]Աղբյուր՝ http://www.oecd.org/g20/meetings/los-cabos/2012-0619-loscabos.pdf

Անգլերեն տեքստը	Ռուսերեն թարգմանությունը
50. We welcome the progress made by the Global Partnership for Financial Inclusion (GPFI) on implementing the five recommendations set out in its 2011 report and call on the GPFI to continue working towards their full implementation. We endorse the G20 Basic Set of financial inclusion indicators developed by the GPFI. Recognizing the key role that SMEs play in economic development, and poverty reduction, we welcome the launch of the SME Finance Compact that will support developing innovative models and approaches to address the specific access to finance challenges and constraints faced by developing countries with regards to SME finance. We welcome the forthcoming GPFI conference on standard setting bodies and financial inclusion as a means of helping to create an enabling regulatory environment, and we call on the GPFI to report progress to our Finance Ministers and Central Bank Governors in November. Finally, we support the ongoing effort to create a fourth GPFI subgroup that will focus on consumer protection and financial literacy issues.	*50. Мы приветствуем успехи Глобального партнерства по расширению доступа к финансовым услугам (GPFI) в реализации пяти рекомендаций, указанных в отчете за 2011 год, и призываем GPFI продолжать работу по их полной реализации. Мы одобряем основной набор показателей «Группы двадцати» по расширению доступа к финансовым услугам, разработанный GPFI. Признавая ключевую роль малого и среднего бизнеса в развитии экономики и сокращении бедности, мы приветствуем внедрение программы микрофинансирования предприятий малого и среднего бизнеса, которая поддержит разработку инновационных моделей и методов урегулирования финансовых проблем и ограничений, с которыми сталкиваются развивающиеся страны в связи с финансированием малого и среднего бизнеса. Мы приветствуем предстоящую конференцию GPFI по органам, устанавливающим стандарты, и по расширению доступа к финансовым услугам, как способ создания благоприятной нормативно-правовой среды, а также призываем GPFI представить доклад о проделанной работе нашим министрам финансов и управляющим центральных банков в ноябре. Наконец, мы поддерживаем непрерывные усилия по созданию четвертой подгруппы GPFI, которая сосредоточится на вопросах защиты прав потребителей и финансовой грамотности.*

Ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացումը, ի թիվս ֆինանսական կրթման եւ սպառողների շահերի պաշտպանության, Եվրոպական Հանձնաժողովի, Տնտեսական Համագործակցության եւ Զարգացման Կազմակերպության[2] (ՏՀԶԿ) կողմից սահմանվել է որպես հասարակական զարգացման առաջնահերթ խնդիր: ՏՀԶԿ-ի կողմից **ֆինանսական կրթումը սահմանվել է[3] որպես** *գործընթաց, որի արդյունքում անձիք բարելավում են ֆինանսական ապրանքների, հայեցակարգերի եւ ռիսկի մասին իրենց գիտելիքները; տեղեկատվության, ցուցումների եւ օբյեկտիվ խորհուրդների միջոցով ձեւավորում են հմտություններ եւ վստահություն, որպեսզի ըմբռնեն ֆինանսական ռիսկերը եւ հնարավորությունները, կատարեն իրազեկ ընտրություն, իմանան, թե որտեղից կարելի է օգնություն ստանալ, եւ կարողանան ձեռնարկել այլ արդյունավետ քայլեր՝ բարելավելու համար իրենց ֆինանսական բարեկեցությունը եւ ապահովելու իրենց շահերի պաշտպանությունը*:

G20-ի մասնակից երկրները բնակչության ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացման գլոբալ քաղաքականության մշակման եւ իրականացման գործառույթը վերապահել են ՏՀԶԿ-ին եւ Համաշխարհային Բանկին (ՀԲ): G20 մասնակից երկրների Լոս Կաբոսի գագաթաժողովում (2012թ.) ՏՀԶԿ-ն ներկայացրել է իր Ֆինանսական Կրթության Միջազգային Ցանցի[4] (ՖԿՄՑ) կողմից մշակված ֆինանսական կրթության ռազմավարությունների բարձր մակարդակի սկզբունքները[5]: Այդ սկզբունքները G20-ի մասնակից երկրների եւ միջպետական միավորումների (մասնավորապես՝ Եվրոպական Միության

[2] Organisation for Economic Co-operation and Development - OECD (աղբյուր՝ http://www.oecd.org)

[3] Տես "Recommendation on Principles and Good Practices for Financial Education and Awareness", OECD, 2005 (աղբյուր՝ http://www.oecd.org/finance/financial-education/35108560.pdf)

[4] International Network on Financial Education - INFE (աղբյուր՝ http://www.financial-education.org)

[5] Տես "The High-level Principles on National Strategies for Financial Education", OECD/INFE, 2012 (աղբյուր՝ http://www.oecd.org/daf/financialmarketsinsuranceandpensions/financialeducation/OECD_INFE_High_Level_Principles_National_Strategies_Financial_Education_APEC.pdf)

(ԵՄ)) կողմից ընդունվել են որպես ֆինանսական կրթման ազգային ռազմավարությունների մշակման հիմք:

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) ֆինանսական կրթման ազգային ռազմավարության (ՖԿԱՌ) նախագիծը մշակվել է 2013թ.-ին՝ Ֆինանսական կրթման ազգային ռազմավարության մշակման եւ իրագործման հանձնաժողովի կողմից: ՀՀ ՖԿԱՌ-ի մշակումը նախատեսված է Եվրոպական հարեւանության քաղաքականության ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2012-2013թթ. միջոցառումներով եւ ՀՀ Կենտրոնական Բանկի (ԿԲ) 2011-2013թթ.-ի ռազմավարությամբ:

1.2 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.2.1 Նպատակ

ՀՀ ՖԿԱՌ-ում արձանագրված է, որ 2012թ.-ին ՀԲ-ի կողմից իրականացված «Հայաստանում ֆինանսական ունակությունների հետազոտությունը»[6] թույլ է տալիս մոտավոր պատկերացումներ կազմել բնակչության ֆինանսական կարողությունների ցուցանիշների մասին եւ ամբողջությամբ հարմարեցված չէ ՀՀ ՖԿԱՌ-ի պահանջներին՝ որպես նրա իրագործման մոնիտորինգի գործիք: Ուստի սույն փաստաթուղթը պետք է ծառայի որպես հետազոտության մեթոդաբանություն, որով հնարավոր կլիներ իրականացնել ՖԿԱՌ-ի չափելի նպատակների հաշվարկում եւ մոնիտորինգ: Այս ենթատեքստում՝ Հայաստանում բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման մեթոդաբանության մշակման նպատակը հետեւյալն է.

- **ստեղծել պարզ եւ ունիվերսալ գործիք՝** Հայաստանում բնակչության ֆինանսական կարողությունների պարբերական գնահատման եւ հանրային հաշվետվողականությունը ապահովելու համար,
- **ունենալ օբյեկտիվ եւ հիմնավոր տեղեկատվություն՝** Հայաստանում ֆինանսական կարողություններին առնչվող խնդիրների վերաբերյալ, ինչպես նաեւ բնակչության ֆինանսական կարողությունների բարձրացման նպատակով թիրախավորված եւ հրատապություն պահանջող գործողությունների մշակման եւ իրականացման համար,
- **ունենալ ելակետային տվյալներ՝** Հայաստանում բնակչության ֆինանսական կարողությունների բարձրացման նպատակով իրականացվող գործողությունների մոնիտորինգի եւ գնահատման համար:

1.2.2 Խնդիրներ

Հայաստանում բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման մեթոդաբանության մշակման գլխավոր խնդիրն է **մշակել գործիքակազմ, որը թույլ կտա ամբողջությամբ եւ ճշգրտորեն գնահատել Հայաստանի բնակչության ֆինանսական կարողությունները**: Այդ գործիքակազմն իրենից ներկայացնում է լուծումների համակարգ՝ ներառելով բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման համար անհրաժեշտ հետեւյալ բաղադրիչները.

- **Ֆինանսական կարողությունների եւ դրա տարրերի** (գիտելիքներ, հմտություններ, վերաբերմունք եւ վարքագիծ) հստակ եւ հիմնավոր **բնորոշում**, որը հիմնված է ֆինանսական կարողությունների ժամանակակից հայեցակարգերի եւ լավագույն փորձի վերլուծության վրա: Ֆինանսական կարողությունների ճիշտ կամ ընդունելի բնորոշումը պայմանավորում է դրանց

[6] Աղբյուր՝ https://www.finlitedu.org/measurement/wb/projects/armenia/

գնահատման նպատակով անցկացվելիք հետազոտության գործիքի՝ հարցաշարի բովանդակությունը:

- **Ֆինանսապես գրագետ մարդու նվազագույն անհրաժեշտ հատկանիշների բնորոշումը**, որը հնարավորություն կտա հետազոտության արդյունքները համադրել սահմանված չափանիշների հետ:
- Բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման նպատակով անցկացվելիք հետազոտության գործիքի՝ **հարցաշարի** մշակում, որը թույլ կտա ստանալ բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման համար անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը:
- Բնակչության **ֆինանսական կարողությունների ենթաինդեքսների մատրիցի եւ ամբողջական ինդեքսի դուրսբերումը**, որը թույլ կտա հարցաշարի մեջ եղած հարցերի պատասխանները թվայնացնել եւ ֆինանսական կարողությունների գնահատականը վերածել հաշվարկային ցուցանիշների՝ օգտագործելով այն սահմանված նպատակներին հասնելու համար:
- Բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման նպատակով անցկացվելիք հետազոտության **ընտրանքի եւ տվյալների հավաքման մեթոդի սահմանում**, որը թույլ կտա հետազոտությամբ ստացված տվյալները համարել Հայաստանի ամբողջ բնակչության համար ճիշտ եւ ներկայացուցչական:

2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանում բնակչության **ֆինանսական կարողությունների գնահատման մեթոդաբանությ**ան մեխը հանդիսանում է **«ֆինանսական կարողություններ» (financial capability)** ձեւակերպման իմաստային եւ բովանդակային ընկալումը, նրա հստակ սահմանումը եւ բնորոշումը: Դրա կարիքը թելադրված է այն հանգամանքով, որ ֆինանսական կարողությունների հասկացությունը հարաբերականորեն նոր հայեցակարգ է եւ այդ թեմային առնչվող բազմաթիվ հետազոտական կառույցների եւ փորձագետների շրջանում դրա բնորոշման վերաբերյալ կոնսենսուս չկա:

1990-ական թթ. վերջին եւ 2000-ական թթ. սկզբին մարդկանց՝ իրենց ֆինանսների կառավարման եւ արդյունավետ ֆինանսական որոշումներ կայացնելու ունակությունը բնորոշվել է որպես **«ֆինանսական գրագիտություն» (financial literacy)**: Սակայն տարբեր երկրներում մարդկանց ֆինանսական գրագիտության գնահատման բազմաթիվ հետազոտությունների անցկացման եւ փորձի կուտակման արդյունքում ֆինանսական գրագիտության հասկացությունը ենթարկվել է էվոլյուցիայի եւ առաջ է եկել **«Ֆինանսական կարողություն» (financial capability)** հասկացությունը: Վերջինիս՝ մի շարք զարգացած երկրներում եւ միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացվող բնորոշումներին անդրադարձ է կատարված ստորեւ:

2.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

2.1.1 Ֆինանսական կարողությունների բնորոշումը ԱՄՆ-ում

Ամերիկյան RAND Corporation հետազոտական կենտրոնի[7] կողմից 2009թ.-ին մշակված մի փաստաթղթում[8] ներկայացված է 2000-ական թթ.-ին տարբեր կառույցների եւ փորձագետների կողմից ֆինանսական գրագիտության մի շարք բնորոշումներ.

Աղյուսակ1 - Ֆինանսական գրագիտության մասնագիտական բնորոշումներ

Աղբյուր	Տարեթիվ	Բնորոշում
Hilgert, Hogarth, & Beverley	2003	Ֆինանսական ***գիտելիքներ***
FINRA	2003	Ներդրողի գրագիտությունը - դա շուկայական սկզբունքների, գործիքների, կազմակերպությունների եւ կանոնակարգերի վերաբերյալ սովորական ներդրողների ***ընկալումն*** է
Moore	2003	Մարդիկ համարվում են ֆինանսապես գրագետ, եթե իրազեկ են եւ կարող են ցուցադրել, որ իրենք օգտագործել են իրենց ստացած գիտելիքը: Ֆինանսական գրագիտությունը հնարավոր չէ ուղղակիորեն չափել, հետեւաբար պետք է կիրառվեն փոխարինող մոտեցումներ: Գրագիտությունը ձեռք է բերվում պրակտիկ ***փորձի*** եւ ***գիտելիքի*** ակտիվ ինտեգրման միջոցով: Որքան մարդիկ դառնում են ավելի գրագետ, նրանք դառնում են ֆինանսապես ավելի փորձառու, եւ ենթադրվում է, որ սա կարող է նաեւ նշանակել, որ մարդը հնարավոր է ավելի իրազեկ է:
National Council on Economic	2005	Հիմնական տնտեսագիտական սկզբունքներին մասին

[7] Աղբյուր՝ www.rand.org

[8] Տես "Defining and Measuring Financial Literacy", Angela A. Hung, Andrew M. Parker, Joanne K. Yoong, RAND Corporation / 2009 September (աղբյուր՝ http://www.rand.org/pubs/working_papers/WR708.html)

Education (NCEE)		***իմացություն***, երկրի տնտեսության մասին ***գիտելիքներ*** եւ որոշ առանցքային տնտեսագիտական տերմինների ***ընկալում***:
Mandell	2007	Ֆինանսական գրագիտությունը - դա մարդկանց ***ունակությունն*** է՝ գնահատելու նոր եւ համալիր ֆինանսական գործիքները եւ անելու իրազեկ դատողություններ եւ՝ գործիքների ընտրության, եւ՝ դրանց գործածման չափերի վերաբերյալ, որոնք լավագույնս կծառայեին իրենց երկարաժամկետ շահերին:
Lusardi and Mitchell	2007	Ամենահիմնական տնտեսագիտական հայեցակարգերի մասին ***իմացություն***, որոնք անհրաժեշտ են խելամիտ խնայողական եւ ներդրումային որոշումների կայացման համար:
Lusardi and Tufano	2008	Կենտրոնանալով ֆինանսական գրագիտության մի բաղադրիչի՝ պարտքի կառավարման գրագիտության վրա, սահմանում է, որ այն փոխառության պայմանագրերի վերաբերյալ հասարակ որոշումներ կայացնելու ***ունակությունն*** է, մասնավորապես թե ինչպես է տվյալ անձը իր հիմնարար գիտելիքներն օգտագործում տոկոսների հաշվարկման դեպքում:
ANZ Bank, drawn from Schagen	2008	Մարդկանց իրազեկ դատողություններ անելու եւ փողերի օգտագործման եւ կառավարման արդյունավետ որոշումներ կայացնելու ***ունակություն***:
Lusardi	2008	Հիմնական ֆինանսական հայեցակարգերի վերաբերյալ ***գիտելիքներ***, ինչպիսիք են՝ տոկոսի հաշվարկման կարգը, անվանական եւ իրական արժեքների տարբերությունը եւ ռիսկի դիվերսիֆիկացիայի հիմնարար սկզբունքները:
PACFL	2008	Ֆինանսական գրագիտությունը - ֆինանսական ռեսուրսների կառավարման համար ***գիտելիքների*** եւ ***հմտությունների*** արդյունավետ օգտագործման ***ունակությունն*** է՝ միտված ֆինանսական բարեկեցության ապահովմանը

Աղբյուր՝ "Defining and Measuring Financial Literacy", Angela A. Hung, Andrew M. Parker, Joanne K. Yoong, RAND Corporation / 2009 September

Ներկայացված բնորոշումներից նկատելի է, որ մինչեւ 2008թ.-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ֆինանսական գրագիտության հիմքը կազմել են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են գիտելիքը, տեղեկացվածությունը, իմացությունը եւ իրազեկվածությունը: Դրանց գործնական կիրառության վրա, որն իրենից ներկայացնում է **մարդու վարքագծային հատկանիշ**, փորձագետների կողմից առանձնապես ակցենտ դրված չէ: Մինչդեռ PACFL[9]-ի բնորոշումը առանձնահատուկ է նրանով, որ ֆինանսական գրագիտությունն այն համարում ոչ թե սոսկ «գիտելիքների եւ տեղեկությունների պաշար», այլ գործիք՝ մարդու կյանքի ընթացքում ֆինանսական բարեկեցության հասնելու համար: Իսկ դա պարունակում է մարդու կողմից իր ֆինանսական գրագիտության կիրառության եւ օգտագործման հետեւյալ ուղերձը. **ֆինանսապես գրագետ է այն անձը, որը ոչ միայն ունի ֆինանսական գիտելիքներ, այլ նաեւ այդ գիտելիքները կիրառելով եւ օգտագործելով կյանքում՝ դրանք ծառայեցնում է իր ֆինանսական բարեկեցության ապահովմանը:** Սա նշանակում է **անցում** ֆինանսական գրագիտության **«գիտելիքային» հայեցակարգից** դեպի **«վարքագծային» հայեցակարգի**: Ներմուծելով **«ֆինանսական կարողություններ»** հասկացությունը՝ ամերիկյան փորձագետները փորձել են մարդկանց ֆինանսների

[9] PACFL - US President's Advisory Council on Financial Literacy (աղբյուր՝ http://www.treasury.gov/resource-center/financial-education/Pages/Advisory.aspx)

կառավարման ունակությունների բնորոշման համար սահմանել ավելի ընդգրկուն ձեւակերպում, որն իր մեջ ներառում է ֆինանսական գրագիտության բոլոր տարրերը:

> **Դիտարկում 1. *Հետաքրքիր փաստ***
> ԱՄՆ Նախագահին կից **Ֆինանսական գրագիտության** խորհրդատվական խորհուրդը (US President's Advisory Council on Financial Literacy (PACFL)) ստեղծվել է 2008թ.-ին եւ գործել է մինչեւ 2010թ.-ը: Նրա ստեղծման նպատակն է *բոլոր ամերիկացիների համար հասանելի ֆինանսական գործիքների եւ ռեսուրսների մասին տեղեկացվածության բարձրացման միջոցով օգնել, որպեսզի նրանք ավելի լավ ընկալեն եւ կառավարեն իրենց ֆինանսները*: 2010թ.-ին PACFL-ի բազայի վրա կազմավորվել է նոր կառույց, որը կոչվում է ԱՄՆ Նախագահին կից **Ֆինանսական կարողությունների** խորհրդատվական խորհուրդ (US President's Advisory Council on Financial Capability (PACFC)): PACFC-ի ստեղծման նպատակն է *աջակցել Ամերիկայի ժողովրդին՝ ըմբռնելու ֆինանսական հարցերը եւ ընդունելու կշռադատված ֆինանսական որոշումներ՝ դրանով նպաստելով ֆինանսական կայունության ապահովմանը:*

2.1.2 Ֆինանսական կարողությունների բնորոշումը Մեծ Բրիտանիայում

Մեծ Բրիտանիայի ֆինանսական ծառայությունների շուկայի վերահսկող եւ կարգավորող մարմնի (Financial Services Authority (FSA)) կողմից 2005թ.-ին մշակված մի փաստաթղթում[10] նշված է, որ ֆինանսական գրագիտության / կարողությունների բնորոշման համար FSA-ը հիմք է ընդունել հետեւյալ կարծիքները.

> *National Foundation for Educational Research / Noctor et al, 1992*
> *Ֆինանսական գրագիտությունը բնորոշվում է որպես փողերի օգտագործման եւ կառավարման հարցում իրազեկ դատողություններ անելու եւ արդյունավետ որոշումներ կայացնելու ունակություն:*

Կրթական հաստատություններում սույն բնորոշման կիրարկման/օգտագործման համար մշակված ուղեցույցը հստակեցնում է, թե այդ բնորոշման ներքո ով է ֆինանսապես կարողունակ անձը.

> *Ֆինանսապես կարողունակ են այն անձիք, ովքեր ունակ են կայացնելու իրազեկ ֆինանսական որոշումներ: Նրանք գրառում եւ կազմում են բյուջե, կառավարում են փողերը արդյունավետորեն: Նրանք գիտեն վարկի եւ փոխառության կառավարման ձեւը: Նրանք ունակ են գնահատելու ապահովագրության եւ պաշտպանության իրենց կարիքները: Նրանք կարող են գնահատել տարբեր ռիսկերը եւ տարբեր խնայողական եւ ներդրումային սխեմաներից գոյացող եկամուտները: Նրանք ըմբռնում են, թե որքան լայն են ֆինանսների էթիկական, սոցիալական, քաղաքական եւ միջավայրային ասպեկտների շրջանակները:*

> *C. Mason and R. Wilson, 2000*
> *Ֆինանսական գրագիտությունը բնորոշվում է որպես ֆինանսական որոշում կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության ստացման, ընկալման եւ գնահատման ունակություն՝ գիտակցմամբ, թե ինչ ֆինանսական հետեւանքներ կարող է ունենալ այդ որոշումը:*

Հիմնվելով այս երկու բնորոշումների վրա, 2005թ.-ին FSA-ը մշակել է ֆինանսական կարողությունների իր մոդելը, որը բաղկացած է հետեւյալ 3 բաղադրիչներից. 1) գիտելիք եւ ընկալում, 2) հմտություններ, 3) վստահություն եւ վերաբերմունք: FSA-ի մոտեցումն այն, որ **մարդու նշված երեք հատկանիշներն են պայմանավորում նրա ֆինանսական որոշումներ կայացնելու վարքագիծը**:

2006թ.-ին բրիտանացի գիտնականներ Թ. Վեբի (Thomas Llewelyn Webb) եւ Պ. Շիրանի (Paschal Sheeran) կողմից առաջ քաշվեց միտք, որ մարդկանց կրթական (որպես գիտելիքի աղբյուր) եւ տեղեկատվական (որպես իրազեկման հետեւանք) զինվածության մակարդակները բավարար չեն գնահատական տալու նրանց այս կամ այն ունակությանը, այդ թվում՝ ֆինանսական

[10] Տես "Measuring financial capability: an exploratory study", FSA / Personel Finance Reserch Centre, University of Bristol, 2005 June (աղբյուր՝ www.fsa.gov.uk/pubs/consumer-research/crpr37.pdf)

կարողունակությանը: Կարող են լինել բազմաթիվ գործոններ, որոնք մարդկանց կխանգարեն պրակտիկ կյանքում կիրառել կամ օգտագործել իրենց ֆինանսական գիտելիքները, ինչի արդյունքում հնարավոր չի լինի հասնել մարդկանց ֆինանսական գրագիտության բարձրացման քաղաքականության նպատակներին:

Այդ պատճառով Մեծ Բրիտանիայում ֆինանսական կարողությունների 2013թ.-ի հետազոտության[11] նպատակով օգտագործվել է ֆինանսական կարողությունների նոր մոդել, որտեղ մարդու ֆինանսական որոշումներ կայացնելու վարքագիծը պայմանավորած է հետեյալ 5 բաղադրիչներով՝ 1) գիտելիք, 2) հմտություններ, 3) վերաբերմունք, 4) մոտիվացիա, 5) հնարավորություն:

2.1.3 Ֆինանսական կարողությունների բնորոշումը ՏՀԶԿ-ի կողմից

ՏՀԶԿ-ն ակտիվորեն ներգրավված է բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացման գլոբալ քաղաքականության մեջ: Ֆինանսական կրթման ազգային ռազմավարությունների պրակտիկ կիրառության խնդրի լուծման շրջանակներում ՏՀԶԿ-ն 2012թ.-ին 14 երկրներում իրականացրել է ֆինանսական գրագիտության չափման փորձնական հետազոտություն[12]: Ֆինանսական գրագիտությունը սահմանելով որպես հետազոտության առարկա, հետազոտության հեղինակները (Atkinson եւ Messy) այն բնորոշել են հետեյալ կերպ.

> *Ֆինանսական գրագիտությունը - դա հիմնավորված ֆինանսական որոշումների ընդունման/կայացման համար անհրաժեշտ տեղեկացվածության, գիտելիքի, հմտությունների, վերաբերմունքի եւ վարքագծի համադրությունն է, որը միտված է անհատական ֆինանսական բարեկեցության ապահովմանը:*

Ֆինանսական կարողությունների գնահատման բազմաթիվ հետազոտություններում հեղինակները անխուսափելիորեն սահմանում են, թե իրենց հետազոտության համատեքստում ինչ է նշանակում ֆինանսական գրագիտությունը կամ կարողությունը: Դրանով նրանք ցույց են տալիս, թե այդ տերմինների բացատրության ինչպիսի հայեցակարգ (գիտելիքային կամ վարքագծային) են իրենք հիմք ընդունում: Որպես կանոն, այդ **տերմինների բնորոշումները բառացիորեն չեն համընկնում**: Մասնավորապես, նույն ՏՀԶԿ-ի կողմից իրականացվող մեկ այլ ծրագրի՝ Ուսանողների միջազգային գնահատման ծրագրի[13] շրջանակներում 2012թ.-ին իրականացվել է պատանիների ֆինանսական գրագիտության գնահատման միջազգային հետազոտություն, որի հաշվետվության[14] մեջ ֆինանսական գրագիտությանը տրվել է հետեյալ բնորոշումը.

> *Ֆինանսական գրագիտությունը - դա ֆինանսական հայեցակարգերի եւ ռիսկերի վերաբերյալ գիտելիքն ու ընկալումն է՝ արդյունավետ ֆինանսական որոշումներ կայացնելու համար դրանց կիրառման/օգտագործման ունակությունը, մոտիվացիան եւ վստահությունը, որոնք միտված են մարդու եւ հասարակության ֆինանսական բարեկեցության եւ տնտեսական կյանքում մասնակցության ապահովմանը:*

ՏՀԶԿ-ի կողմից ընդունելի այս երկու բնորոշումներից կարելի է հետեյալ երկու եզրակացությունները.

[11] Տես “The Financial Capability of the UK”, Money Advice Service, 2013 (աղբյուր՝ https://www.moneyadviceservice.org.uk/en/static/the-financial-capability-of-the-uk)

[12] Տես Atkinson, A. and F. Messy (2012), “Measuring FinancialLiteracy: Results of the OECD / INFE (աղբյուր՝ http://dx.doi.org/10.1787/5k9csfs90fr4-en)

[13] Programme for International Student Assessment - PISA (աղբյուր՝ http://www.oecd.org/pisa/)

[14] Տես “Financial Literacy Framework”, PISA 2012 (աղբյուր՝ http://www.oecd.org/finance/financial-education/PISA2012FrameworkLiteracy.pdf)

- չնայած հանգամանքին, որ ՏՀԶԿ-ն շարունակում է գործածության մեջ պահել ֆինանսական գրագիտություն ձեւակերպումը, այնուամենայնիվ այս կառուցի մոտեցումը հիմնված է խնդրի վարքագծային հայեցակարգի վրա, որի համար ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում եւ Համաշխարհային Բանկի կողմից օգտագործվում է ֆինանսական կարողություններ ձեւակերպումը,
- ֆինանսական գրագիտության (կամ կարողության) բազմաթիվ բնորոշումների մեջ կարեւորը ոչ թե բնորոշման շարադրանքն է (շարադրանքի տարբերությունը չի նշանակում հայեցակարգերի տարբերություն), այլ նրա բովանադակային ասպեկտը, որից հստակորեն բխում է ֆինանսական գրագիտության (կամ կարողության) էությունը:

2.1.4 Ֆինանսական կարողությունների բնորոշումը Համաշխարհային Բանկի կողմից

Բնակչության ֆինանսական կարողությունների հզորացման գլոբալ քաղաքականությանն աջակցող մեկ այլ կարեւոր կառույց է ՀԲ-ն: Վերջինս ակտիվ ներգրավվածություն ունի ֆինանսական կարողությունների գնահատման մեթոդաբանական փաստաթղթերի մշակման եւ բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման հետազոտությունների իրականացման գործընթացում:

Ֆինանսական կարողությունների բնորոշման հարցում ՀԲ-ն ունի բավականին կոնկրետ դիրքորոշում: Այստեղ **ֆինանսական գրագիտությունը հավասարեցված է գիտելիքի հետ** եւ սահմանված է, որ **ֆինանսական կարողությունները, որպես ավելի ընդգրկուն ձեւակերպում, ներառում են նաեւ ֆինանսական գրագիտության տարրերը**:

2013թ.-ին ՀԲ-ն իրականացրել է ֆինանսական կարողությունների եւ գրագիտության չափման գործիքների հետազոտություն[15], անդրադարձ կատարելով մոտ 20 երկրների/կազմակերպությունների կողմից օգտագործված փորձին: Հետազոտության հաշվետվության մեջ ֆինանսական կարողությունների համար տրված է հետեւյալ բնորոշումը.

> *Ֆինանսական կարողությունը - դա տվյալ սոցիալ-տնտեսական միջավայրում անձի կողմից իր ֆինանսական շահերը լավագույնս պաշտպանելու ունակությունն է:Այն ներառում է սպառողների կողմից իրենց ռեսուրսների կառավարման համար անհրաժեշտ գիտելիքները, վերաբերմունքը, հմտությունները եւ վարքագիծը, իրենց կարիքներին բավարարող ֆինանսական ծառայությունների ընկալումը, ընտրությունը եւ օգտագործումը:*

Ֆինանսական կարողությունների Համաշխարհային Բանկի մոդելը կառուցված է անձի՝ ֆինանսական որոշումներ կայացնելու եւ իրագործելու հետեւյալ 4 հատկանիշների վրա. 1) գիտելիք, 2) հմտություններ, 3) վերաբերմունք, 4) վարքագիծ:

Հարկ է նշել, որ ՀԲ-ի կողմից վերաբերմունքի ընկալման շրջանակներում ներառված է նաեւ մոտիվացիային եւ հնարավորություններին վերաբերվող հարցերը: Այս առումով պետք է համարել, որ ֆինանսական կարողությունների բրիտանական FSA-ի եւ ՀԲ-ի մոդելները գրեթե նույնն են. տարբերությունը կայանում է նրանում, որ FSA-ի կողմից վերաբերմունքի շրջանակներից մոտիվացիան եւ հնարավորություններն առանձնացված են որպես ֆինանսական կարողությունների առանձին բաղադրիչներ, սակայն դա ընդամենը հարցի մոտեցման խնդիր է եւ դրանից ֆինանսական կարողությունների էությունը չի փոխվում:

[15] Տես “Financial Capability Surveys around the World: A Review of Existing Financial Capability and Literacy Measurement Instruments”, World Bank, 2013 (աղբյուր՝ http://responsiblefinance.worldbank.org/~/media/GIAWB/FL/Documents/Misc/Financial-Capability-Review.pdf)

2.2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Ակնհայտ է, որ զարգացած պետություններում եւ հեղինակավոր միջազգային կազմակերպություններում ֆինանսական կարողությունների համար ընդունելի բնորոշումները հիմնված են վարքագծային հայեցակարգի վրա: Ուստի սույն մեթոդաբանության համատեքստում ֆինանսական կարողությունների բնորոշման հարցը հանգում է միայն նրա շարադրանքին: Համադրելով ֆինանսական կարողությունները վերը բերված բոլոր բնորոշումները, սույն մեթոդաբանության համատեքստում ֆինանսական կարողությունների համար տրվում է հետեւյալ բնորոշումը.

> **Ֆինանսական կարողությունների բնորոշումը**
>
> ***Մարդու ֆինանսական կարողությունը - դա արդյունավետ ֆինանսական որոշումներ կայացնելու նրա ունակությունն է, որն ամենօրյա գիտակցված գործադրման միջոցով նպաստում է տվյալ անձի ֆինանսական բարեկեցության ապահովմանը կամ ֆինանսական ռիսկերից պաշտպանությանը: Արդյունավետ ֆինանսական որոշումներ կայացնելու ունակությունը հանդիսանում է մարդու անձնական հատկանիշների համակարգ՝ բաղկացած նրա գիտելիքներից, հմտություններից, վերաբերմունքից եւ վարքագծից:***

Ֆինանսական կարողությունների վերոհիշյալ բնորոշումը համահունչ է զարգացած երկրներում եւ հեղինակավոր միջազգային կազմակերպություններում օգտագործվող բնորոշումներին, իսկ շարադրանքի առումով ավելի նման է ՀԲ-ի բնորոշմանը: Այս մոդելը կառուցված է անձի՝ ֆինանսական որոշումներ կայացնելու եւ իրագործելու հետեւյալ 4 հատկանիշների վրա. 1) գիտելիք, 2) հմտություններ, 3) վերաբերմունք, 4) վարքագիծ:

Ֆինանսական կարողությունների գնահատման տեսանկյունից շատ կարեւոր է հասկանալ դրանց բաղկացուցիչ մասը կազմող անձնական հատկանիշներից յուրաքանչյուրի ծագման եւ ձեւավորման միջավայրի առանձնահատկությունները:

2.2.1 Գիտելիքներ

Գիտելիքները մարդու՝ այս կամ այն հարցի, թեմայի կամ առարկայի վերաբերյալ **ստացված եւ մտապահված տեղեկությունների պաշարն է**: Գիտելիքները, որպես ֆինանսական կարողությունների առաջին եւ շատ կարեւոր բաղկացուցիչ, ձեւավորվում են հետեւյալ եղանակներով. ա) կրթության եւ թրեյնինգների միջոցով, բ) փորձի միջոցով, գ) տարբեր աղբյուրներից (ծանոթներից, ԶԼՄ-ներից) ստացվող տեղեկատվական հոսքերի միջոցով: Գիտելիքների աղբյուր հանդիսացող նշված երեք եղանակներն էլ իրենցից ներկայացնում են տեղեկությունների ստացման/փոխանցման ուղիներ: Դրանց միջոցով ստացվող տեղեկությունների մի մասն ընկալվում եւ յուրացվում է մարդկանց կողմից, իսկ մի մասն էլ չի ընկալվում եւ չի հասկացվում, եւ որպես հետեւանք՝ մոռացվում է: Տեղեկություններից այն, ինչը չի մոռացվում՝ համալրում է մարդու գիտելիքները:

Ֆինանսական կարողությունների շրջանակներում գիտելիքների գնահատումը միտված է հանրության առանձին խմբերի շրջանում ֆինանսական գիտելիքների բացակայության կամ սակավության խնդիրների՝ այսպես կոչված «թույլ օղակների» հայտնաբերմանը, որոնք պետք է հիմք հանդիսանան հատուկ կրթական ծրագրերի մշակման եւ իրականացման համար: Հիմք ընդունելով ՀԲ-ի վերլուծությունը[16], միեւնույն ժամանակ՝ առաջնորդվելով ավելի կոնկրետ եւ միանշանակ

[16] Տես “Making Sense of Financial Capability Surveys around the World: a Review of Existing Financial Capability and Literacy Measurement Instruments”, WB, 2013 (աղբյուր՝ http://responsiblefinance.worldbank.org/~/media/GIAWB/FL/Documents/Misc/Financial-Capability-Review.pdf)

ձեւակերպումներով հանդես գալու մոտեցմամբ, սույն մեթոդաբանության շրջանակներում ֆինանսական գիտելիքների գնահատման համար առանձնացվել են հետեւյալ սկզբունքները.

1. *Գիտելիքներ ֆինանսական տերմինների եւ հայեցակարգերի մասին* (որոնք են ֆինանսական համակարգի մասնակից կառույցները, ինչ է բյուջեն, գնաճը (ինֆլյացիան), վարկը, ավանդը, տոկոսադրույք (այդ թվում՝ բարդ տոկոսը), հարկերը, ռիսկ եւ դրա դիվերսիֆիկացիա, եւ այլն)
2. *Տեղեկացվածություն ֆինանսական հաստատությունների եւ ապրանքների/ծառայությունների մասին* (որոնք են բանկերի, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ֆոնդերի գործառույթները, ինչպիսի ֆինանսական ապրանքներ եւ ծառայություններ են առաջարկում ֆինանսական հաստատությունները (վարկ, ավանդ, բանկային հաշիվ, դրամական փոխանցում, անկանխիկ եւ կանխիկ վճարումներ եւ այլն)

Ֆինանսական գիտելիքների գնահատման համար առանձնացված նշված բաժինների բովանդակությունը կախված է լոկալ միջավայրի ֆինանսական համակարգի զարգացման մակարդակից: Զարգացած ֆինանսական համակարգեր ունեցող երկրներում մարդիկ օբյեկտիվորեն (հիմնված փորձի վրա) կարող են ունենալ ավելի շատ գիտելիքներ եւ տեղեկացվածություն, ինչպես նաեւ, կախված տվյալ ֆինանսական շուկայում ֆինանսական ծառայությունների թվից, նրանց տրվելիք հարցերը կարող են ներառել շատ ավելի մեծ թվով թեմաներ, քան թույլ զարգացած ֆինանսական համակարգերով երկրներով: Համապատասխանաբար, Հայաստանում բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման հարցաշարը պետք է կառուցված լինի Հայաստանի ֆինանսական համակարգի արդի իրողությունների ըմբռնմամբ, բացառելով շատ տեսական եւ հիպոթետիկ հարցերի արծարծումը, որի միջոցով կարելի է խուսափել ֆինանսական կարողությունների մակարդակի սխալ գնահատականից եւ հետագայում ֆինանսական կրթմանն ուղղված ոչ արդյունավետ գործողություններից:

2.2.2 Հմտություններ

Ֆինանսական որոշում կայացնելու համար **ֆինանսական գիտելիքների կիրառման ունակությունը** FSA-ը սահմանում է որպես **հմտություն**: ՀԲ-ն էլ ավելի լայն է պատկերացնում գիտելիքների շրջանակները՝ դրանում ներառելով ֆինանսական ապրանքներից/ծառայություններից օգտվելու մասին **պրակտիկ գիտելիքները** եւ որի տակ հասկանում է հետեւյալը. ա) ինչպես կատարել վճարում, բ) որտեղից ներգրավել փոխառու միջոցներ, գ) որտեղ ներդնել խնայողությունները, դ) որտեղ ստանալ ֆինանսական խորհրդատվություն, ե) ում դիմել իրավունքների պաշտպանության նպատակով, եւ այլն: Թվարկված օրինակները վկայում են այն մասին, որ գիտելիքները եւ հմտությունները կարելի է շփոթել իրար հետ, եթե դրանց գնահատման նպատակով հարցադրման ձեւը ճիշտ չլինի: Գիտելիքների եւ հմտությունների տարանջատման համար պետք է նկատի ունենալ, որ **գիտելիքը՝ դա տեղեկատվություն է, իսկ հմտությունը՝ այդ տեղեկատվությունը գործադրելու ունակություն**: Ստորեւ բերված մի քանի օրինակները ցույց են տալիս, թե ինչպես կարելի է տարբերել հմտությունները գիտելիքներից:

ԳԻՏԵԼԻՔ		ՀՄՏՈՒԹՅՈՒՆ
1. Մարդը գիտի, թե ինչպես հաշվել տոկոս	→	1. Կարող է հաշվել իր ակնկալվող եկամուտի չափը՝ իր խնայողությունները ժամկետային ավանդի մեջ ներդնելու պարագայում
2. Մարդը գիտի, որ գոյություն ունի իր բանկային հաշիվը օնլայն կառավարելու հնարավորություն,	→	2. Կարող է առանց բանկ գնալու իրականացնել դրամական փոխանցում կամ կատարել կոմունալ

and Literacy Measurement Instruments", World Bank, 2013 Feb (աղբյուր՝ www.responsiblefinance.worldbank.org/~/.../Financial-Capability-Review.pdf)

որը կոչվում է օնլայն (ինտերնետ) բանկ ծառայության		ծախսերի վճարում
3. Մարդը գիտի, որ իր խնայողությունը բանկային ավանդի մեջ ներդնելու հաշվին կարող է ստանալ լրացուցիչ եկամուտ	→	3. Գիտի, որ խնայողությունները տարբեր արժույթներով պահելու (զամբյուղ) դեպքում կարող է խուսափել փոխարժեքի տատանումների արդյունքում հնարավոր կորուստներից

ՀԲ-ը հմտությունների ներքո օգտագործում է երկու պայմանական հասկացություններ՝ «հաշվելու» եւ «կարդալու» հմտություններ: Այստեղ այնքան կարեւոր չէ հմտությունների խմբավորման եւ պայմանական անուն տալու հանգամանքը, որքան դրանց բովանդակային ընդգրկումը: *«Հաշվելու» հմտությունները* չեն հանգում սոսկ տարրական թվաբանական գործողությունների իմացությանը: Խոսքը գնում է վերլուծական տարրեր պարունակող գործողությունների մասին, ինչպիսիք են տոկոսների հաշվարկը, թվաբանական գործողություններով համեմատությունների անցկացումը եւ այլն: «Հաշվելու» հմտության օրինակներ կարող են ծառայել բարդ տոկոսի, վարկի արժեքի կամ արդյունավետ տոկոսադրույքի, զեղչերի հաշվարկման ունակությունները:

«Հաշվելու» հմտության գնահատման հարցի օրինակ 1 (աղբյուր՝ FSA)
Պատկերացրեք, որ դուք նույն հեռուստացույցը վաճառքում տեսել եք երկու տարբեր խանութներում, եւ երկու տեղում էլ առաջարկվում են զեղչեր: Հեռուստացույցի սկզբնական արժեքը 250 ֆունտ է: Մի խանութում սկզբնական արժեքից առաջարկվող զեղչը կազմում է 30 ֆունտ, իսկ մյուս խանութում՝ 10%: Ո՞ր առաջարկն է ավելի լավը - 30 ֆու՞նտը, թե՞ 10%-ը:

«Հաշվելու» հմտությունների գնահատման հարցերը պետք է ձեւակերպել այնպես, որ սոցիալ-մշակութային տվյալ համակարգում (միջավայրում) ապրող մարդը հարցը լսելիս եւ դրան պատասխանելիս անհարմար չզգա: Այլ կերպ ասած՝ հարցը պետք է լինի հասարակ եւ հեշտ ընկալելի, բայց ոչ պրիմիտիվ: Քանի որ Հայաստանի չափահաս բնակչության ավելի քան 90%-ն ունի միջնակարգ եւ ավելի բարձր կրթություն, սույն հետազոտության հարցաշարը կազմվել է՝ հիմնվելով հարցերի ձեւակերպման վերը բերված մոտեցման վրա: Այս առումով Քենիայի օրինակը կիրառելի չէ, քանի որ այն չափազանց պարզ է.

«Հաշվելու» հմտության գնահատման հարցի օրինակ 2 (աղբյուր՝ Քենիայում ֆինանս. հասանելիության հետազոտ.)
Պատկերացրեք, որ դուք ունեք մանգոներ, իսկ ձեր հարեւանը՝ լոլիկներ: Դուք պայմանավորվում եք կատարել ապրանքափոխանակություն՝ 1 մանգոյի դիմաց 3 լոլիկ սկզբունքով: Քանի՞ հատ լոլիկ պետք է տա ձեր հարեւանը, եթե դուք նրան տաք 40 հատ մանգո:

Նմանապես՝ *«կարդալու» հմտությունների* պարագայում խնդիրը չի հանգում սոսկ տառաճանաչության: Դա մարդու՝ տեղեկատվություն փնտրելու, գտնելու, կարդալու, համեմատելու, ընտրություն անելու անձնական հատկանիշների համակարգ է: «Կարդալու» հմտությունների տակ պետք է հասկանալ պայմանագրեր եւ այլ ֆինանսական փաստաթղթեր կարդալու եւ ընկալելու ունակությունը, սեփական իրավունքների պաշտպանության նպատակով բողոքի ձեւակերպման ունակությունը, ֆինանսական բնույթի տեղեկատվության փնտրելու եւ գտնելու ունակությունը, տարբեր ֆինանսական ծառայությունների միջեւ համեմատություն անցկացնելու եւ իրազեկ/գիտակցված ընտրություն կատարելու ունակությունը եւ այլն:

2.2.3 Վերաբերմունք

Միայն գիտելիքները եւ հմտությունները բավարար չեն, որպեսզի մարդիկ կարողանան կայացնել պատասխանատու ֆինանսական որոշումներ: Գիտելիքների, սեփական փորձի, օբյեկտիվ եւ սուբյեկտիվ հանգամանքների բերումով մարդկանց մոտ ձեւավորվում են ֆինանսական համակարգի եւ

ծառայությունների նկատմամբ կարծիքներ, դիրքորոշումներ, ընկալումներ, որոնք կարեւոր մասնակցություն ունեն անձանց ֆինանսական որոշումներ կայացման հարցում: Եթե ամենը խմբավորվենք **վերաբերմունք** տերմինի ներքո, ապա կարելի է սահմանել, որ **վերաբերմունքը - դա մարդու՝ իր գիտելիքները եւ հմտությունները կիրառելու/գործադրելու համար ժամանակ եւ այլ ռեսուրսներ հատկացնելու ցանկությունն ու պատրաստակամությունն է**[17]**:**

Վերաբերմունքի գնահատման հարցերը կոչված են բացատրելու եւ լուսաբանելու մարդու վարքագծի (ֆինանսական կարողությունների մյուս բաղադրիչի) նախադրյալները եւ պատճառները: Ստորեւ ներկայացված են մի քանի պայմանական օրինակներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես կարող է այս կամ այն հարցի վերաբերյալ մարդու վերաբերմունքը ձեւափոխվել վարքագծի.

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ		ՎԱՐՔԱԳԻԾ
4. Մարդը չի վստահում ֆինանսական համակարգին, մասնավորապես բանկերին	→	2. Չունի բանկային հաշիվ, ազատ դրամական միջոցները ավանդ չի ներդնում, այլ պահում է տանը
5. Մարդը չի վստահում կառավարությանը	→	4. Դեմ է արտահայտվում կառավարության կողմից իրականացվող կենսաթոշակային բարեփոխումներին եւ չի ցանկանում ընտրել կենսաթոշակային ֆոնդ
6. Մարդն ապրում է այսօրվա օրով եւ չի մտածում վաղվա մասին	→	5. Չի կատարում խնայողություններ եւ ամբողջ եկամուտը ծախսում է ընթացիկ կարիքների վրա
7. Մարդը ժամանակ եւ հետեւողականություն չունի՝ զբաղվելու սեփական ֆինանսների հաշվառմամբ	→	6. Չի վարում սեփական եկամուտների եւ ծախսերի բյուջե, չի կատարում գրառումներ, չի պահում ֆինանսական փաստաթղթեր եւ այլն
8. Մարդը դժվարությամբ է դիմանում (կամ չի դիմանում) «ավելի բարձր եկամտաբեր սխեմաների» գայթակղությանը	→	7. Ավելի բարձր եկամուտ ստանալու համար մտնում է ոչ ֆորմալ հարաբերությունների մեջ, իր սեփականությունը (դրամական միջոցների) դնում է ռիսկի տակ

Մարդկանց վերաբերմունքի հարցերի շրջանակը ձեւավորելիս պետք է հաշվի առնել, թե ինչ գործոններ են ազդում այդ վերաբերմունքի ձեւավորման վրա: **Անձի ներքին հոգեբանական վիճակով պայմանավորված ազդեցությունը պետք է համարել ունիվերսալ գործոն**: Այն ունիվերսալ է այն առումով, որ բնույթով չափազանց զգույշ (պահպանողական) կամ ամբիցիոզ, ակտիվ (նախաձեռնող) կամ պասիվ, հեռատես կամ օրով ապրող, լավատես կամ վատատես մարդիկ առկա են բոլոր սոցիալ-մշակութային միջավայրերում՝ զարգացած եւ աղքատ երկրներում, տարբեր կրոնական համայնքներում, դեմոկրատական, ավտորիտար կամ բռնապետական ռեժիմներում: Ուստի մարդկանց ներքին հոգեբանական վիճակի գնահատման հարցերը կամ կարելի է ներառել ցանկացած երկրում կամ երկրների խմբում անցկացվող ֆինանսական կարողությունների գնահատման հարցաթերթերում, կամ էլ կարելի է իսպառ շրջանցել:

Արտաքին միջավայրի եւ անձի վերահսկողությունից դուրս իրադարձությունները (մասնավորապես՝ ֆինանսատնտեսական ճգնաժամեր, պատերազմներ, հասարակարգի փոփոխություն) **վերաբերմունք ձեւավորող յուրահատուկ գործոն են**: Տարբեր երկրներում իրականացվող հետազոտություններում վերաբերմունքի գնահատման մասով հարցաշարում կարելի է ավելի մեծ ակցենտ դնել տվյալ երկրի

[17] Տես “Measuring financial capability: an exploratory study”, FSA / Personel Finance Reserch Centre, University of Bristol, 2005 June (աղբյուր՝ www.fsa.gov.uk/pubs/consumer-research/crpr37.pdf)

համար յուրահատկություն կամ հրատապություն ներկայացնող հարցերի վրա: Օրինակ՝ ԱՄՆ-ում այդպիսի թեմա է հիփոթեքային վարկավորումը, նախկին ԽՍՀՄ երկրներում՝ ԽՍՀՄ վերջին տարիներին ավանդների փոշիացումը եւ այլն:

2.2.4 Վարքագիծ

Վարքագիծը եզրափակում է ֆինանսական կարողությունների առաջարկվող մոդելը՝ որպես **գործողությունների համակարգ, որը ձեւավորվում է առօրյա կյանքում գիտելիքների, հմտությունների եւ վերաբերմունքի փաստացի գործադրման արդյունքում:** FSA-ի եւ ՀԲ-ի վերլուծությունների հիման վրա կարելի է առանձնացնել վարքագծի դրսեւորման 4 ուղղություններ. ա) ֆինանսների կառավարում, բ) երկարաժամկետ (հեռանկարային) պլանավորում, գ) ֆինանսական ապրանքների (ծառայությունների) ընտրություն, եւ դ) մասնագիտական խորհրդատվության օգտագործում եւ իրավունքների պաշտպանություն:

Ֆինանսների կառավարման վարքագիծը մարդու գործողությունների այն համակարգն է, որի շրջանակներում նա վարում է բյուջե (իրականացնում է իր/ընտանիքի ծախսերի եւ եկամուտների հաշվառում), ծախսում է ոչ ավելին, քան իր/ընտանիքի եկամուտներն են, հաշիվները վճարում է ժամանակին, փոխառություն կամ վարկ է վերցնում խելամիտ չափով, օգտագործում եւ կառավարում է բանկային հաշիվ եւ այլն:

Երկարաժամկետ (հեռանկարային) պլանավորման վարքագիծը մարդու գործողությունների այն համակարգն է, որի առանցքը կազմում է մարդու *խնայողական* վարքագիծը, որն էլ ներառում է խնայելու հաճախականությունը, նպատակային ժամկետայնությունը (օրինակ՝ խնայում է բնակարան գնելու համար, որը պետք է իրականացվի 2-3 տարի հետո, եւ/կամ խնայում է ապահով ծերության համար, որին հասնելու համար դեռ 30 տարի ժամանակ կա): Երկարաժամկետ (հեռանկարային) պլանավորման վարքագիծ է այն, թե ինչպես են մարդիկ արձագանքում իրենց եկամուտների անսպասելի ընդհատման կամ նվազման իրավիճակին (որը կարող է խառնել բյուջեի եկամուտների եւ ծախսերի կատարման պլանները), ինչպիսի քայլեր են նրանք ձեռնարկում կյանքի անսպասելի եւ դժվար իրավիճակները հաղթահարելու համար (օրինակ՝ օգտվում են ապահովագրական սխեմաներից):

Ֆինանսական ապրանքների (ծառայությունների) ընտրության վարքագիծը մարդու *«կարդալու» հմտությունների* գործադրման եւ օգտագործման գործողություններն են: Ֆինանսական համակարգի զարգացման եւ ֆինանսական ապրանքների (ծառայությունների) հասանելիության ներկայիս պայմաններում սպառողների առջեւ դրված են բազմաթիվ առաջարկներ: Այդ առաջարկներից որեւէ մեկի ընդունման ողջ գործընթացը (փնտրել, գտնել, վերլուծել, համեմատել, ընտրել) համարվում է մարդու՝ ֆինանսական ապրանքների (ծառայությունների) ընտրության վարքագծի բաղադրիչ: FSA-ի հետազոտողները ֆինանսապես կարողունակ են համարում ոչ թե այն մարդուն, ով կարող է վարկ ստանալ, այլ այն մարդուն, ով կարող է մերժել այդ վարկի առաջարկը՝ նրա վաճառքի խրախուսման եւ գայթակղիչ գովազդի մեթոդներով հանդերձ: Ֆինանսապես կարողունակ է այն մարդը, ով չնայած ֆինանսական հաստատությունների բազմաթիվ հնարամտություններին, ինչպիսիք են վարկային պայմանագիրը շատ փոքր տառաչափերով գրելը, վարկի պայմանները (տոկոսադրույքները, կոմիսիոն վճարները, սպասարկման վճարները) կամ բանկային սպասարկման սակագները հիմնական պայմանագրից առանձին հավելվածով ներկայացնելը, հետեւողականորեն ճշտում է կամ իր աչքով տեսնում է իրեն առաջարկվող ֆինանսական ապրանքի (ծառայության) բոլոր պայմանները եւ հատկապես նրանք, որոնք առաջացնում են ֆինանսական հետեւանքներ:

Մասնագիտական խորհրդատվության օգտագործման եւ իրավունքների պաշտպանության վարքագիծը մարդու գործողությունների այն համակարգն է, որի շրջանակներում մարդն օգտագործելով այլ մասնագետների, մասնագիտական եւ իրավասու կազմակերպությունների խորհրդատվությունը, փորձում է լրացնել այն բացը, որն առկա է իր գիտելիքների եւ հմտությունների դաշտում: Նմանատիպ գործողություններ են խորհրդատվական (բիզնես, հարկային, իրավաբանական) կազմակերպությունների ծառայություններից օգտվելը, սպառողների իրավունքների պաշտպանության ենթակառուցվածքներից (դատարան, ֆինանսական հաշտարարի գրասենյակ, մարդու իրավունքների պաշտպան) օգտվելը եւ այլն:

2.3 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՒՅՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Նախորդ բաժնում ներկայացված ֆինանսական կարողությունների մոդելը կառուցված է անձի՝ ֆինանսական որոշումներ կայացնելու եւ իրագործելու 4 հատկանիշների՝ գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի եւ վարքագծի վրա: Սակայն դրանք վերացական հասկացություններ չեն, այլ ունեն կոնկրետ կիրառության եւ գործադրման ուղղություններ, ինչպիսիք են անձնական բյուջեի վարումը, խնայողությունների պլանավորումը, պարտքի կառավարումը եւ այլն:

ՀԲ-ի մասնագիտական խորհրդատվության հիման վրա ՀՀ ՖԿԱՌ-ում տրվել է **ֆինանսապես գրագետ կամ կարողունակ անձի** սահմանումը՝

> **<u>Ֆինանսապես գրագետ անձի սահմանումը</u>[18]**
> ***Ֆինանսապես գրագետ անձն այն անձն է, ով ունի գիտելիքներ, կարողություններ, հմտություններ եւ մշակույթ, որոնք նրան հնարավորություն են տալիս լինել տեղեկացված, իր անձնական ֆինանսների վերաբերյալ կայացնել պատասխանատու որոշումներ, ձեռնարկել իրավիճակին համապատասխան ճիշտ գործողություններ:***

ՀՀ ՖԿԱՌ-ը սահմանում է նաեւ այն հիմնական թեմատիկ ուղղությունները, որոնք հիմք են ծառայել սույն մեթոդաբանության մշակման համար: Որպես հիմք ընդունվել են հետեւյալ 7 թեմատիկ ուղղությունները.

A. Ֆինանսական եւ մակրոտնտեսական հասկացությունների մասին պատկերացում,
B. Անձնական բյուջեի արդյունավետ կառավարում,
C. Խնայողություններ եւ երկարաժամկետ պլանավորում,
D. Պարտքի արդյունավետ կառավարում,
E. Ֆինանսական ծառայություններից օգտվելիս տեղեկությունների հավաքագրում (այդ թվում՝ մասնագիտական խորհրդատվության կարեւորում եւ օգտագործում), համեմատում եւ պատասխանատու որոշումների կայացում,
F. Սեփական իրավունքների պաշտպանություն,
G. Անձնական ֆինանսների ռիսկերի կառավարում ու ֆինանսական գործիքներից անվտանգ օգտվելու վերաբերյալ պատկերացում (զեղծարարություններ եւ խարդախություններ):

Այսպիսով, համադրելով ֆինանսական կարողությունների 4 բաղադրիչները եւ 7 թեմատիկ ուղղությունները, սույն մեթոդաբանության համատեքստում ֆինանսական կարողությունների համակարգը կունենա հետեւյալ կառուցվածքը.

[18] Մեջբերում ՀՀ ՖԿԱՌ-ից, որտեղ օգտագործված է «ֆինանսապես գրագետ անձ» ձեւակերպումը: Սահմանման համար հիմք է ընդունվել միջազգային փորձագետների կարծիքը՝ ի դեմս ֆինանսական կրթման մկիջազգային փորձագետ Շոն Մունդիի

		Ֆինանսական որոշումներ կայացնելու եւ իրագործելու 4 հատկանիշները			
		A. ԳԻՏԵԼԻՔ	B. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	C. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	D. ՎԱՐՔԱԳԻԾ
Գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների ԿԻՐԱՌՄԱՆ ԵՒ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	A. Ֆինանսական եւ մակրոտնտեսական հասկացություններ	AA	AB	AC	AD
	B. Անձնական բյուջեի արդյունավետ կառավարում	BA	BB	BC	BD
	C. Խնայողություններ եւ երկարաժամկետ պլանավորում	CA	CB	CC	CD
	D. Պարտքի արդյունավետ կառավարում	DA	DB	DC	DD
	E. Տեղեկությունների հավաքագրում, համեմատում եւ որոշումների կայացում	EA	EB	EC	ED
	F. Սեփական իրավունքների պաշտպանություն	FA	FB	FC	FD
	G. Ֆինանսական գործիքներից անվտանգ օգտվել (զեղծարարություն եւ խարդախություններ)	GA	GB	GC	GD

Ներկայացված համակարգը ենթադրում է, որ գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների **կիրառման եւ գործադրման ուղղություններից** յուրաքանչյուրի վերաբերյալ մարդիկ պետք է **ունենան գիտելիք**, ունենան այդ գիտելիքն օգտագործելու **հմտություն**, համապատասխան **վերաբերմունք** (ցանկություն եւ պատրաստակամություն) ունենան կոնկրետ ուղղության նկատմամբ եւ դրսեւորեն համապատասխան **վարքագիծ**՝ կոնկրետ ուղղությամբ գործողություններ անելու ձեւով: Ստորեւ բերված օրինակը ավելի պարզորոշ է դարձնում ֆինանսական կարողությունների համակարգի ընկալումը.

Դիցուք գնահատման առարկան (ուղղությունը) ***խնայողությունների*** թեման է: Այն ներառված է գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների **կիրառման եւ գործադրման «C» ուղղության** մեջ: Խնայողությունների հետ կապված անձի՝ **ֆինանսական որոշումների կայացման եւ իրագործման** 4 (A,B,C,D) **հատկանիշների** բացահայտման համար կարելի է անել հետեւյալ հարցադրումները (պայմանական օրինակներ).

Ֆինանսական որոշումներ կայացնելու եւ իրագործելու 4 հատկանիշները			
A. ԳԻՏԵԼԻՔ	B. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	C. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	D. ՎԱՐՔԱԳԻԾ
CA. Ի՞նչ է խնայողությունը՝ խնայողության ի՞նչ ձեւեր կան:	CB. Ինչպե՞ս գնահատել տարբեր խնայողության ձեւերի եկամտաբերությունը:	CC. Ինչպե՞ս եք վերաբերվում խնայողություն կատարելուն:	CD. Դուք խնայու՞մ եք եւ եթե այո, ապա ի՞նչ ձեւով:

3 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն նշվել է, բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման նոր մեթոդաբանություն մշակելու համար ՀՀ ԿԲ-ը առաջնորդվել է այս ոլորտում առկա միջազգային փորձով եւ հիմնական սկզբունքային մոտեցումներով: Ֆինանսական կարողությունների գնահատման համար գոյություն ունեն 2 հիմնական սկզբունքային մոտեցումներ՝ նորմատիվ եւ պոզիտիվ: Նորմատիվ սկզբունքային մոտեցումը ֆինանսական կրթման քաղաքականության շրջանակներում գիտելիքը, հմտությունները եւ վերաբերմունքը համարում է մարդկանց վարքագծի հիմնական շարժիչ ուժերը: Այս մոտեցման ժամանակ հիմնական հասկացությունները սահմանվում են նախքան հետազոտություն կատարելը եւ հետազոտություն կատարելուց հետո վերլուծվում է առկա իրավիճակի համապատասխանությունը սահմանված հասկացություններին: Այսպիսի մոտեցման օրինակ կարող է հանդիսանալ 2011 թ. ՏՀՀԿ-ի կողմից իրականացված փորձնական հետազոտությունը մի քանի երկրներում: Ֆինանսական կարողությունների գնահատման պոզիտիվ մոտեցումը ենթադրում է, որ գիտելիք, հմտություններ, վերաբերմունք եւ վարքագիծ բաղադրիչների միջեւ առկա փոխազդեցությունները միանշանակ չեն: Այսինքն գիտելիքը կարող է նպաստել վարքագծին, ինչպես նաեւ վարքագիծը իր հերթին կարող է ազդել գիտելիքի վրա: Այս մոտեցումը ենթադրում է հետզոտության անցկացում, հետագայում ստացված տեղեկատվության վրա գոյություն ունեցող փոխկապակցությունների բացահայտում եւ վերլուծում:

Ուսումնասիրելով այս մոտեցումները, ՀՀ ԿԲ-ը որդեգրել է առավել ճկուն մոտեցում, որն իր մեջ ներառում է տարրեր վերը նկարագրված մոտեցումներից: Մի կողմից, հետեւելով նորմատիվ մոտեցմանը, սույն մեթոդաբանության շրջանակներում մշակվել է ֆինանսապես գրագետ մարդու նվազագույն հատկանիշների մատրիցը, որը հիմք է ծառայելու հետագայում հետազոտության արդյունքները վերլուծելու համար: Մյուս կողմից պոզիտիվ մոտեցման սկզբունքների համաձայն ֆինանսական կարողությունների բաղադրիչների միջեւ փոխկապակցությունները պետք է վերլուծել հետազոտության ավարտից հետո, քանի որ դրանց միջեւ կապերը միանշանակ չեն:

Բացի այս, սույն մեթոդաբանությունը հիմնված է նաեւ ՀՀ ՖԿԱՌ-ի հիմնական առաջնահերթությունների վրա, մասնավորապես որպես հիմք ընտրվել են 7 թեմատիկ ուղղություններ: Այս թեմատիկ ուղղությունները ներառում են եւ միջազգային հետազոտություններում կիրառվող 4 հիմնական ուղղությունները[19], եւ այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են ֆինանսական եւ մակրոտնտեսական հասկացությունների, սեփական իրավունքների պաշտպանության եւ ֆինանսական ծառայություններից անվտանգ օգտվելու (ֆինանսական զեղծարարություններ եւ խանդախություններ) ուղղությունները:

Այսպիսով, ֆինանսական կարողությունների գնահատման սույն մեթոդաբանությունը բաղկացած է 4 հիմնական մասերից.

- **Ֆինանսապես գրագետ մարդու նվազագույն հատկանիշների մատրից** - Հայաստանում ֆինանսական կարողությունների մակարդակը գնահատելու նպատակով ՀՀ ԿԲ-ն մշակել է ֆինանսապես գրագետ մարդու նվազագույն հատկանիշների մատրից, որը հիմք է ծառայելու հետագայում հետազոտության արդյունքների վերլուծության համար:
- **Ֆինանսական կարողությունների գնահատման ենթաինդեքսների մատրից** - Երկրում ֆինանսական կարողությունների մակարդակի ընդհանուր պատկերը ստանալու նպատակով՝ մշակվել է ենթաինդեքսների մատրից-համակարգ, որը հնարավորություն կտա վերլուծել թույլ եւ ուժեղ կողմերը՝ սահմանելով ֆինանսական կրթման առավել արդյունավետ քաղաքականություն:

[19] Տես “Measuring financial capability: a new instrument and results from low- and middle-income countries”, World Bank and Russian Trust Fund, June 2013

- **Ֆինասական կարողությունների ինդեքս** - Այլ երկրների հետ համեմատությունը ապահովելու նպատակով ձեւավորվել է ֆինանսական կարողությունների ինդեքսը, որը պարզ գնահատականի միջոցով նկարագրում է ֆինանսական կարողությունների ընդհանուր մակարդակը երկրում:
- **Հարցաշար** - Հաշվի առնելով սույն մեթոդաբանության հիմնական նպատակները եւ խնդիրները՝ մշակվել է հետազոտության հիմնական գործիքը, որը հնարավորություն է տալիս ստանալ ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը առավել հարմար ֆորմատով:

3.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Չնայած ֆինանսական կարողությունների գնահատման բազմաթիվ մոտեցումների առկայությանը, այս առումով չափազանց դժվար է համեմատել երկրները, քանի որ բացակայում է ֆինանսական կարողությունների գնահատման միասնական սկզբունքները: Գոյություն ունեցող մոտեցումները չեն տրամադրում ֆինանսական կարողությունների գնահատման ընդհանուր ցուցանիշներ, ինդեքսներ կամ գնահատականներ, որոնք կնկարագրեն երկրում առկա իրավիճակը ֆինանսական կրթման քաղաքականություն մշակողների համար առավել թիրախավորված եւ արդյունավետ ռազմավարություն նախագծելու եւ իրականացվող ռազմավարությունը գնահատելու համար: Մատնանշելով առկա բացերը՝ ՀԲ-ը նույնպես կարեւորում է ֆինանսական կարողությունների գնահատման ցուցանիշների եւ ինդեքսների ստեղծումը առավել արդյունավետ քաղաքականություն իրականացնելու համար[20]:

Կարեւորելով վերը նշված խնդիրները՝ սույն մեթոդաբանությունը առաջարկում է այնպիսի սկզբունքներ, որոնք հնարավորություն կտան ֆինանսական քաղաքականություն մշակողներին իրականացնել առավել արդյունավետ առաջնահերթությունների ընտրություն, թիրախավորում, քաղաքականության արդյունավետության գնահատում եւ հանրային հաշվետվելիության ապահովում: Սրա հիմքում ընկած է այսպես կոչված «ջերմաչափի» սկզբունքը: Ինչպես նշեցինք, այն իրենից ներկայացնում է սահմանափակ թվով ենթաինդեքսների համակարգ, որը հնարավորություն է տալիս վերլուծել ֆինանսական կարողությունների բնագավառում առկա ուժեղ եւ թույլ կողմերը, դրանց համապատասխանությունը սահմանված չափանիշներին տվյալ պահի դրությամբ եւ դրանց հիման վրա մշակել ռազմավարական նախագծեր: Հետագայում, կրկնելով նույն հետազոտությունը, հնարավոր կլինի այդ նույն «ջերմաչափի» սկզբունքի համաձայն գնահատել արդեն իսկ իրականացված ռազմավարական նախագծերի ընդհանուր արդյունավետությունը:

Բացի այս, ինչպես արդեն նշվեց, ֆինանսական կարողությունների բաղադրիչների միջեւ փոխկապակցությունները գնահատելու եւ մյուս սկզբունքների կիրառելիությունը ապահովելու համար չափազանց կարեւոր է այն, որ ֆինանսական կարողությունների բաղադրիչները սույն մեթոդաբանության շրջանակներում չեն կշռվում:

Սույն մեթոդաբանության կիրառման համար չափազանց կարեւոր է հաշվի առնել նաեւ տվյալ երկրում ֆինասնական կարողությունների գնահատման վրա ազդող այլ խնդիրները: Այս խնդիրները հիմնականում կապված են այնպիսի առանձնահատուկ բաների հետ, որոնք հիմնականում չեն կարող ուղղակիորեն կառավարվել ֆինանսական կրթման քաղաքականությունը մշակողների կողմից: Այսպիսի խնդիրները հիմնականում ներառում են՝

- **Ֆինանսական ծառայությունների նկատմամբ հասանելիություն:** Այս խնդիրը հիմնականում կապված է ֆինանսական կարողությունների վարքագծային բաղադրիչի հետ, քանի որ շատ

[20] Տես “Financial Capability Surveys around the world: Why Financial Capability is important and how surveys can help”, World Bank and Swiss Confederation, August 2013

մարդիկ օբյեկտիվորեն չեն կարող օգտվել որոշ ֆինանսական ծառայություններից՝ դրանց բացակայության պատճառով: Օրինակ որեւէ գյուղում բանկոմատի բացակայությունը օբյեկտիվ պատճառ է, որ այդ գյուղի բնակիչները չօգտվեն բանկոմատից: Որպեսզի գնահատելի լինի այս խնդրի ազդեցությունը ֆինանսական կարողությունների ենթաինդեքսների վրա հարցաշարում հատուկ հարցեր են ձեւակերպվել, որոնք հնարավորություն կտան վերլուծություն կատարելու ընթացքում գնահատել այս գործոնի ազդեցությունը:

- **Եկամուտների ցածր մակարդակ:** Այս խնդիրը նույնպես օբյեկտիվորեն ազդում է մարդկանց՝ ֆինանսական ծառայություններից օգտվելու հնարավորությունների վրա: Այն դեպքում երբ մարդիկ հնարավորություն չունեն հոգալ իրենց առօրյա տարրական կարիքները, ավելորդ է քննարկել նրանց կողմից խնայողություններ կատարելու հետ կապված ֆինանսական կարողության բաղադրիչները: Եկամուտների ցածր մակարդակի ազդեցությունը գնահատելու համար նույնպես տրվել է հարցաշարային լուծում հետագայում համապատասխան վերլուծությունները կատարելու համար:
- **Մշակույթային գործոններ:** Ֆինանսական կարողությունները գնահատելու համար պետք է հաշվի առնել նաեւ այն բոլոր օբյեկտիվ եւ սուբյեկտիվ մշակույթային դրդապատճառները, որոնք կարող են ազդել վերլուծությունների վրա: Օրինակ՝ եթե դիտարկվի վստահությունը ֆինանսական հաստատությունների նկատմամբ, ապա ներկայումս Հայաստանում այն բավականին ցածր է, քանի որ անկախացումից հետո բնակչության մի ստվար զանգված կորցրել է իր խնայողությունները նախկին խորհրդային բանկերում: Այս խնդիրները մեծապես նպաստում են մարդկանց վերաբերմունքի վրա:
- **Կրթական եւ աշխատանքնային գործոններ:** Մարդկանց կրթական եւ աշխատանքային ոլորտները նույնպես նպաստում են իրենց ֆինանսական կարողությունների վրա, մասնավորապես ենթադրվում է, որ այն մարդիկ, ովքեր աշխատում են բանկային ոլորտում, պետք է ունենան ավելի բարձր ֆինանսական կարողություններ: Սակայն այդ ամենը առավել հստակ գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել հետազոտության արդյունքում ստացված տեղեկատվությունը ըստ կրթական եւ աշխատանքնային գործոնների:
- **Միգրացիոն գործոններ:** Միգրացիոն հոսքերի խնդիրը առավել արդիական է Հայաստանում ֆինանսական կարողությունների գնահատումը իրականացնելու համար, քանի որ տարվա ընթացքում տարբեր պահերի ակտիվ միգրացիոն հոսքերի պատճառով կարելի է ունենալ որակական տարբեր ընտրանք: Բազմաթիվ տղամարդիկ մեկնում են արտագնա աշխատանքի եւ որպեսզի հնարավոր լինի ստանալ ֆինանսական կարողությունների առավել ճշգրիտ պատկեր, սեռային ստրատիֆիկացիա չի կիրառվել հետազոտության անցկացման համար:

3.2 ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԳՐԱԳԵՏ ՄԱՐԴՈՒ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՏՐԻՑ

Սույն մեթոդաբանության մեջ «ֆինանսապես գրագետ անձի» նկարագիրը սահմանելիս հիմք է ընդունվել ՀՀ ՖԿԱՌ-ում ներկայացված մոտեցումներ: Հաշվի է առնվել Հայաստանի ֆինանսական համակարգի զարգացման առանձնահատկությունները, ՀՀ ՖԿԱՌ-ի իրականացման եւ Հայաստանի բնակչության ֆինանսական կրթման գործում ՀՀ ԿԲ-ի բացառիկ դերակատարությունը եւ առաքելությունը եւ դրանից բխող՝ նրա առանձնահատուկ պահանջները: Արդյունքում, համադրելով ֆինանսական կարողությունների բաղադրիչները եւ հիմնական թեմատիկ ուղղությունները, ստեղծվել է ստորեւ ներկայացված մատրիցը.

Աղյուսակ 2 - Ֆինանսապես կրթված մարդու նկարագիրը

	Ֆինանսապես կրթված մարդը պետք է նվազագույնը…			
	A. ԳԻՏԵԼԻՔ	B. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	C. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	D. ՎԱՐՔԱԳԻԾ
A. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	▸ Իմանա ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները ▸ Իմանա ֆինանսական ծառայությունների տեսակները ▸ Իմանա ՀՀ Կենտրոնական Բանկի հիմնական խնդիրը ▸ Իմանա մակրոտնտեսական տարրական հասկացությունները, այդ թվում՝ - գնաճը - արտարժույթի փոխարժեքը, - ռեպո տոկոսադրույքը - վարկերի եւ ավանդների տոկոսադրույքներ	▸ Կարողանա ըմբռնել գնաճի ազդեցությունն իր կենսամակարդակի վրա ▸ Կարողանա հաշվարկել իր ֆինանսների վրա արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը ▸ Կարողանա գնահատել ռեպո տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը վարկերի տոկոսադրույքների վրա	▸ Վստահի ֆինանսական համակարգին ▸ Կարեւորի ֆինանսական եւ տնտեսական հիմնական ցուցանիշներին հետեւելը	▸ Օգտվի ֆորմալ ֆինանսական ծառայություններից ▸ Հետեւի ֆինանսական եւ տնտեսական կարեւոր ցուցանիշներին
B. ԱՆՁՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	▸ Իմանա, թե ինչ է բյուջեն ▸ Իմանա եկամուտների տեսակները, դրանք տարբերի ֆինանսական մուտքերից ▸ Իմանա ծախսերի տեսակները, դրանք տարբերի ֆինանսական ելքերից ▸ Իմանա փոփոխուն եւ հաստատուն ծախսերը, դրանք տարբերի իրարից ▸ Իմանա, թե ինչ է զուտ եկամուտը ▸ Իմանա, թե ինչ գործողություններ կարող է անել տարածված ֆինանսական գործիքներով՝ բանկային հաշվով եւ վճարային քարտերով ▸ Իմանա իր անձնական ֆինանսների կառավարման վրա ազդող ֆինանսական հիմնական ռիսկերը ▸ Իմանա ապահովագրական	▸ Կարողանա քայլեր ձեռնարկել իր բյուջեի դեֆիցիտի ծածկման ուղղությամբ ▸ Կարողանա ծախսերը դասակարգել ըստ առաջնահերթության ▸ Կարողանա իրականացնել բյուջեի հսկողություն (մոնիտորինգ) ▸ Ըմբռնի ռիսկի եւ եկամտաբերության միջեւ եղած կապը ▸ Կարողանա կատարել ապահովագրական ծառայության կշռադատված ընտրություն	▸ Կարեւորի բյուջետավորումը եւ պլանավորումը ▸ Կարեւորի եկամուտների եւ ծախսերի գրառումը՝ որպես դրանց հսկողության (մոնիտորինգի) ձեւ ▸ Կարեւորի ապահովագրական ծառայությունների օգտագործումը	▸ Կարողանա ճիշտ կառավարել սեզոնային եկամուտները ▸ Նախապես կազմի բյուջե եւ կատարի պլանավորում ▸ Ծախսերը կատարի համաձայն պլանավորածի և վերահսկի բյուջեն՝ գրառելով եկամուտները եւ ծախսերը ▸ Ունենա բանկային հաշիվ ▸ Ունենա վճարային քարտ ▸ Հետեւի իր բանկային / վճարային քարտային հաշվի քաղվածքներին ▸ Օգտվի անհրաժեշտ ապահովագրական ծառայություններից ռիսկերը կառավարելու համար

	Ֆինանսապես կրթված մարդը պետք է նվազագույնը…			
	A. ԳԻՏԵԼԻՔ	B. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	C. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	D. ՎԱՐՔԱԳԻԾ
	ծառայությունների տեսակները			
C. ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ	▸ Իմանա խնայողություններ կատարելու նպատակը ▸ Իմանա, որ խնայողությունների հաշվին ներդրումներ անելով կարելի է ստանալ հավելյալ եկամուտներ ▸ Իմանա, թե ինչի մեջ կարելի է ներդնել խնայողությունները ▸ Իմանա դիվերսիֆիկացիան ինչ է ▸ Իմանա տոկոս հաշվելու սկզբունքը ▸ Իմանա բարդ տոկոսն ինչ է ▸ Իմանա կապիտալացումն ինչ է ▸ Իմանա Հայաստանում ավանդների երաշխավորման համակարգի մասին ▸ Իմանա արժեթղթերի տեսակները ▸ Իմանա այն մասին, որ կուտակային կենսաթոշակային համակարգը խնայողությունների ներդրման ձեւ է	▸ Կարողանա իրականացնել ռիսկերի դիվերսիֆիկացիա ▸ Կարողանա կատարել ավանդի կշռադատված ընտրություն ▸ Կարողանա կիրառել տոկոսի հաշվարկման իր գիտելիքները ▸ Կարողանա հաշվարկել բարդ տոկոս ▸ Ըմբռնի կապիտալացման ազդեցությունը եկամտաբերության վրա ▸ Իմանա ավանդների հատուցման չափը ▸ Կարողանա կատարել արժեթղթերի ձեռքբերման կշռադատված ընտրություն ▸ Իմանա անհատական կենսաթոշակային հաշվի կառավարման մեթոդները	▸ Հակված լինի կատարել խնայողություններ ցանկացած դեպքում ▸ Կարեւորի երկարաժամկետ խնայողությունների կատարումը ▸ Հակված լինի խնայողությունների հաշվի ներդրումներ կատարել ▸ Կարեւորի խնայողությունները տարբեր ֆինանսական գործիքների մեջ ներդնելը	▸ Կատարի խնայողություններ ցանկացած դեպքում ▸ Ապահովի խնայողությունների նպատակայնությունը ▸ Խնայողությունները ներդնի ֆինանսական գործիքների մեջ ▸ Ունենա անհատական կենսաթոշակային հաշիվ ▸ Պարբերաբար կառավարի իր անհատական կենսաթոշակային հաշիվը
D. ՊԱՐՏՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	▸ Իմանա պարտքի տեսակները ▸ Իմանա պարտք վերցնելու աղբյուրները ▸ Իմանա վարկերի տեսակները ▸ Իմանա եւ տարբերի վարկի անվանական եւ փաստացի տոկոսադրույքները ▸ Իմանա վարկի ապահովության միջոցները ▸ Իմանա վարկային բյուրոյի մասին	▸ Կարողանա պարտք վերցնել իր հնարավորությունների չափով ▸ Վարկ ստանալիս կարողանա կատարել կշռադատված ընտրություն ▸ Իմանա վարկային բյուրոյի կողմից իր անձնական տվյալների՝ այլ անձանց տրամադրման կարգը ▸ Իմանա պարտքի մարման ձեւերը	▸ Կարեւորի եւ նախընտրի ֆորմալ աղբյուրներից պարտք վերցնելը ▸ Չընդունի պարտքով պարտք մարելու երեւույթը ▸ Կարեւորի պարտքերի մարման ժամանակացույց կազմելը	▸ Օգտվի պարտք վերցնելու ֆորմալ աղբյուրներից ▸ Պարտք վերցնի իր հնարավորությունների չափով ▸ Պրակտիկայում պարտքով պարտք չմարի ▸ Ունենա պարտքի մարման ժամանակացույց ▸ Պարտքերը մարի ժամանակին
E. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, ՀԱՄԵՄԱՏՈՒՄ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ	▸ Իմանա ֆինանսական ծառայությունների տեսակների եւ պայմանների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները	▸ Կարողանա կարճ ժամկետում եւ տարբեր աղբյուրներից հայթայթի ֆինանսական տեղեկատվություն ▸ Կարողանա հարկ եղած դեպքում պարզաբանում ստանալ ֆինանսական	▸ Կարեւորի եւ նախընտրի տեղեկատվության ֆորմալ աղբյուրները ▸ Կարեւորի ֆինանսական տեղեկատվության համեմատության	▸ Ֆինանսական ծառայության ընտրության նպատակով հավաքի եւ համեմատի ֆինանսական տեղեկատվություն ▸ Ֆինանսական տեղեկատվություն

	Ֆինանսապես կրթված մարդը պետք է նվազագույնը…			
	A. ԳԻՏԵԼԻՔ	B. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	C. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	D. ՎԱՐՔԱԳԻԾ
		տեղեկատվության վերաբերյալ	անցկացումը ▸ Կարեւորի ֆինանսական մասնագի-տական խորհրդատվության դերը ▸ Հակված լինի վճարել ֆինանսական մասնագիտական խորհրդատվության համար	հավաքի տարբեր աղբյուրներից ▸ Հետեւի ֆինանսական տեղեկատվության աղբյուրներին ▸ Հարկ եղած դեպքում օգտվի ֆինանսական մասնագիտական խորհրդատվությունից
F. ՍԵՓԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	▸ Իմանա իրավունքների պաշտպանության պաշտոնական / իրավական ուղիները ▸ Իմանա Ֆինանսական Համակարգի Հաշտարարի մասին	▸ Ունենա սեփական իրավունքների պաշտպանության ձեւերի հստակ պատկերացում ▸ Իրավունքների խախտման դեպքում իմանա արդյունավետ քայլերի հերթականությունը	▸ Իրավունքների պաշտպանության հարցում կարեւորի պաշտոնական / իրավական ուղիները ▸ Վստահի իրավունքների պաշտպանության պաշտոնական / իրավական ուղիներին ▸ Կարեւորի Ֆինանսական Համակարգի Հաշտարարի դերը	▸ Պայմանագիր ստորագրելիս կարդա եւ ըմբռնի նրա ամբողջ բովանդակությունը ▸ Ֆինանսական հաստատության հետ վեճ ունենալիս ձեռնարկի այդ վեճի լուծման քայլեր ▸ Ֆինանսական հաստատության հետ վեճ ունենալիս առաջնորդվի պաշտոնական / իրավական ուղիներով
G. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻՑ ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏՎԵԼԸ (ՁԵՂՁԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ)	▸ Իմանա ֆինանսական զեղծարարության կամ խարդախության հիմնական ձեւերը (օրինակները)	▸ Իմանա ֆինանսական զեղծարարությանը բնորոշ տեղեկությունները (ազդակները)	▸ Կարեւորի ֆինանսական զեղծարարության կամ խարդախության մասին տեղեկացված լինելը ▸ Չվստահի անծանոթ աղբյուրից ստացված գրավիչ ֆինանսական առաջարկները	▸ Ուշադրություն դարձնի ֆինանսական զեղծարարությունների եւ խարդախությունների վերաբերյալ տեղեկատվությանը ▸ Մերժի անծանոթ աղբյուրից ստացված գրավիչ ֆինանսական առաջարկները

Վերոհիշյալ մատրիցում ներկայացված Ֆինանսապես կրթված մարդու նվազագույն ունակությունների բացահայտման համար մշակվել է Հայաստանում բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման հետազոտության գլխավոր գործիքը՝ հարցաշարը:

3.3 ՀԱՐՑԱՇԱՐԸ ՈՐՊԵՍ ՖԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԻՔ

Հարցաշարի մշակման ժամանակ հաշվի են առնվել այն բոլոր նպատակները, ինչին պետք է ծառայի այդ հարցաշարը եւ այն բոլոր հանգամանքները, որոնց պայմաններում պետք է կիրառվի այդ հարցաշարը: Հետազոտության գործիքը հանդիսանում է **ստանդարտացված հարցաշար՝** նախատեսված **դեմ առ դեմ հարցազրույցների** անցկացման համար:

Հարցաշարի մշակման հիմքում ընկած են 2 մոտեցումներ.

1. Բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման հետազոտությունների անցկացման համաշխարհային փորձի ձեռքբերումները,
2. ՀՀ ՖԿԱՌ-ում ներկայացված «ֆինանսապես գրագետ անձին» բնորոշ հատկանիշների համակարգը:

Ֆինանսական կարողությունների գնահատման հետազոտությունների անցկացման **համաշխարհային փորձը** հարուստ նյութ է կուտակել՝ հետազոտությունների մեթոդաբանություններ եւ հարցաշարեր մշակելու առումով: Օգտագործողների տրամադրության տակ այսօր առկա են հարյուրավոր հետազոտություններ, որոնք անցկացվել են առանձին երկրների, երկրների առանձին ռեգիոնների, բնակչության առանձին խմբերի մասշտաբով: Ֆինանսական կարողությունների գնահատման հետազոտությունների անցկացման համաշխարհային փորձի ուսումնասիրության գլխավոր եզրահանգումն այն է, որ **բոլոր հետազոտություններն էլ յուրահատուկ են, իրարից որոշակի տարբերություններով**: Կիրառված մեթոդոլոգիաների տարբերությունները պայմանավորված են հետազոտությունների անցկացման թիրախային նպատակներով: Կիրառված հարցաշարերի տարբերությունները պայմանավորված են հետազոտության պատվիրատուի մոտ *ֆինանսական գրագիտության* կամ *ֆինանսական կարողությունների հասկացությունների* յուրահատուկ ընկալումներով: Անգամ նույն երկրում պարբերաբար (2-3 տարին մեկ անգամ) իրականացվող ամեն հաջորդ հետազոտությունում հարցաշարերը որոշակիորեն նորացվել են՝ պայմանավորված ֆինանսական կարողությունների, որպես տնտեսագիտական կատեգորիայի, էվոլյուցիայի հետ: Մինչեւ 2000-ական թթ. վերջերը գտնել ֆինանսական գրագիտության (կարողությունների) գնահատման հարցաշարեր, որոնք բաղկացած են նույն հարցերից՝ գործնականում անհնար է: 2013թ.-ի փետրվարին ՀԲ-ը թողարկել է մի փաստաթուղթ, որտեղ իրականացվել է բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման գոյություն ունեցող մոտեցումների համադրություն[21]: Փաստաթղթում հստակ ներկայացված է տարբեր տարիներին տարբեր երկրներում իրականացված ֆինանսական կարողությունների գնահատման բովանդակային կառուցվածքը: Եզրահանգումը մեկն է. յուրաքանչյուր հետազոտություն առանձնահատուկ է եւ իրականացվել է այդ պահի խնդիրներից, նպատակներից եւ առաջնահերթություններից ելնելով: Այդպիսի հետազոտությունները շատ կարեւոր են, սակայն կրում են լոկալ բնույթ:

Ներկայումս առկա է բնակչության ֆինանսական կարողությունների մակարդակը ցուցանիշով արտահայտելու միտում: Քանի որ բնակչության ֆինանսական կարողությունների բարձրացումը

[21] Տես “Making Sense of Financial Capability Surveys around the World: a Review of Existing Financial Capability and Literacy Measurement Instruments”, WB, 2013 (աղբյուր՝ http://responsiblefinance.worldbank.org/~/media/GIAWB/FL/Documents/Misc/Financial-Capability-Review.pdf)

սահմանվել է որպես գլոբալ առաջնահերթություն, ուստի այդ հարցում առանցքային դերակատարություն ունեցող միջազգային կազմակերպությունները սկսել են մշակել մեթոդոլոգիաներ, որոնցով բնակչության ֆինանսական կարողությունների հետազոտություններ են անցկացվում տարբեր երկրներում: Դա թույլ է տալիս տարբեր երկրների համար ունենալ համադրելի տվյալներ եւ կատարել ըստ երկրների բնակչության ֆինանսական կարողությունների մակարդակի համեմատություններ: Ընդհանուր կիրառության մեթոդոլոգիաների մշակման հարցում հսկայական աշխատանք են տարել ՀԲ-ն եւ ՏՀԶԿ-ն:

2011-2013թթ.-ին ՀԲ-ը մշակեց եւ իրականացրեց Financial Capability Measurement Ծրագիրը, որի շրջանակներում 1-ին փուլով 6, իսկ 2-րդ փուլով՝ եւս 3 երկրներում (այդ թվում՝ Հայաստանում) իրականացրեց բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման հետազոտություններ: Դրանք փորձնական հետազոտություններ էին, որոնց նպատակն էր բնակչության ցածր եւ միջին եկամուտներով երկրների համար մշակել ֆինասական կարողությունների գնահատման հետազոտության **միասնական մեթոդոլոգիա**՝ իր ողջ գործիքակազմով՝ մեթոդական ուղեցույցով, հարցաշարով, հարցաշարի լրացման ուղեցույցով, եւ այլն[22]: ՀԲ-ի հարցաշարի կարեւոր առանձնահատկությունն այն է, որ հարցերի թիվը մեծ է (ավելի քան 140), սակայն այն բաղկացած է **բացառապես փակ հարցերից, հարցերի զգալի մասը կրում են թեստային բնույթ**: Դա թույլ է տվել այդպիսի ծավալուն հարցաշարով հարցազրույցն անցկացնել միջինը 40 րոպեի ընթացքում:

2013թ.-ի սեպտեմբերին ՏՀԶԿ-ն շրջանառության մեջ է դրել նոր փաստաթուղթ[23], որպես ֆինանսական գրագիտության չափման պրակտիկ գործիք, ներառյալ մեթոդաբանությունը եւ հարցաշարը: Նրանում ներկայացված հարցաշարը եւս բաղկացած է **միայն փակ հարցերից**, հագեցած է ավելի **բովանդակային հարցերով** (փոքրիկ խնդիրներով), ավելի մեծ շեշտադրություն է արված **վարքագծային հարցերի** վրա, իսկ ռեսպոնդենտների հոգեբանական նկարագրի հարցերը արծարծված չեն (ի տարբերություն ՀԲ-ի հարցաշարի):

Սույն հետազոտության տեսանկյունից ՀԲ-ի եւ ՏՀԶԿ-ի հարցաշարերն ունեցել են կարեւոր աջակցող նշանակություն: Հատկապես կարեւոր նշանակություն են ունեցել **հարցաշարի տրամաբանական կառուցվածքի, հարցերի եւ պատասխանների ձեւակերպման տեխնիկայի** լուծումները: Դրանք ամբողջությամբ համապատասխանում են հետազոտության արդյունքների հիման վրա **բնակչության ֆինանսական կարողությունների ինդեքսի հաշվարկման** պահանջին:

Հայաստանում բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման **հարցաշարի բովանդակային մասը** ածանցվում է «ֆինանսապես գրագետ անձի» նկարագրից, որը ներկայացված է **Աղյուսակ 2**-ում:

Հարցաշարը կառուցվել է այն մոտեցմամբ, որ նրանում տեղ գտած ամեն մի հարցով բացահայտվի **ֆինանսապես կրթված մարդու նկարագրի մի առանձին բաղադրիչ**:

[22] ՀԲ-ի Financial Capability Measurement Ծրագրի նկարագրությունը կարելի է տեսնել ՀԲ-ի վեբ-կայքում (https://www.finlitedu.org/measurement/wb/), որտեղ ներկայացված են նաեւ ֆինանսական կարողությունների հետազոտության բոլոր գործիքները՝ տնային տնտեսությունների հարցաշարը, հարցազրուցավարի ուղեցույցը եւ այլն

[23] Փաստաթուղթը կոչվում է "OECD/INFE Toolkit to Measure Financial Literacy and Financial Inclusion: Guidance, Core Questionnaire and Supplementary Questions", OECD/FLIT, 2013 (աղբյուր՝ http://www.oecd.org/finance/financial-education/Toolkit-to-measure-fin-lit-2013.pdf): Այս փաստաթուղթը շրջանառության մեջ է դրվել G20 մասնակից երկրների 2013թ.-ի սեպտեմբերի 5-6 Սանկտ Պետերբուրգում (ՌԴ) կայացած գագաթաժողովի ժամանակ եւ հավանության է արժանացել G20 երկրների Ֆինանսների նախարարների եւ Կենտրոնական Բանկերի նախագահների կողմից

Հետազոտության գործիքն ավելի ճիշտ է անվանել **հարցաթերթ**, քանի որ այն իրականում ավելի մեծ փաստաթուղթ է, որի մեջ հարցաշարը մի մասն է միայն: Հարցաթերթը բաղկացած է 2 մասից՝ **Տիտղոսաթերթից** եւ բուն **Հարցաշարից:**

Տիտղոսաթերթը նախատեսված է հետեւյալ գործողությունների համար.

- Հարցազրույցի անցկացման մարզը, համայնքը եւ ընտրված տնային տնտեսության հասցեն արձանագրելու համար:
- Ընտրված տնային տնտեսություն այցելության արդյունքները արձանագրելու համար՝ կապված հարցազրույցի կայացման կամ չկայացման պատճառների հետ:
- Ընտրված տնային տնտեսության չափահաս անդամների կազմից ռեսպոնդենտի ընտրության կատարման համար (սույն փաստաթղթի 5.2.2.4 բաժնում («Ռեսպոնդենտի ընտրությունը», էջ 61) նախատեսված գործողությունը կատարելու համար):

Տիտղոսաթերթը պետք է լրացվի հարցազրույցի համար ընտրված յուրաքանչյուր տնային տնտեսության համար, անկախ նրանից, այդ տնային տնտեսության անդամի հետ հարցազրույցը կկայանա, թե ոչ: Տիտղոսաթերթի լրացման համար տվյալները պետք է տրամադրի տնային տնտեսության գլխավորը կամ պատասխանատու չափահաս անդամը: Ընտրված ռեսպոնդենտը կարող է լինել թե այն նույն անձը, ով պատասխանում է տնային տնտեսության անդամների ցուցակի մասի հարցերին, թե տնային տնտեսության այլ անդամ:

Հարցաշարը նախատեսված է տնային տնտեսության չափահաս անդամների կազմից՝ հարցազրույցի անցկացման համար ընտրված անձի՝ ռեսպոնդենտի հետ հարցազրույց անցկացնելու համար: Հարցաշարը պարունակում է **118 հարց**, որոնք բոլորն էլ «փակ» հարցեր են: Հարցաշարի հարցերը դասակարգվում են հետեւյալ թեմատիկ բաժինների մեջ.

- **Ռեսպոնդենտի նկարագիրը (Հարցեր 1.1-1.13)**
- **Ֆինանսական եւ մակրոտնտեսական հասկացություններ (Հարցեր 1-14[24])**
- **Անձնական բյուջեի արդյունավետ կառավարում (Հարցեր 15-39)**
- **Խնայողություններ և երկարաժամկետ պլանավորում (Հարցեր 40-68)**
- **Պարտքի արդյունավետ կառավարում (Հարցեր 69-86)**
- **Տեղեկությունների հավաքագրում, համեմատում եւ որոշումների կայացում (Հարցեր 87-98)**
- **Սեփական իրավունքների պաշտպանություն (Հարցեր 99-111)**
- **Ֆինանսական գործիքներից անվտանգ օգտվելը (զեղծարարություն եւ խարդախություններ) (Հարցեր 112-118)**

Բոլոր թեմատիկ բաժիններում տեղ են գտել 4 տեսակի հարցեր, որոնք կոչված են գնահատելու ռեսպոնդենտի հետեւյալ հատկանիշները. ա) **Գիտելիք,** բ) **Հմտություն,** գ) **Վերաբերմունք** եւ դ) **Վարքագիծ[25]:**

Հարցաշարի օրինակը. - Տես Բաժին 7.1, «Հարցաթերթի Նախագիծ», էջ 67

[24] Հարց 14-ը բաղկացած է երկու առանձին հարցերից, որոնք թվագրված են 14.1 եւ 14.2

[25] Այսպիսով՝ բոլոր հարցերին կարելի է տալ 2 տառից բաղկացած պայմանական կոդավորում: Օրինակ՝ հարցի AA կոդը նշանակում է, որ հարցը վերաբերվում է վերաբերվում է A. թեմատիկ բաժնին (Ֆինանսական եւ մակրոտնտեսական հասկացություններ) եւ նախատեսված է գիտելիքի (A.) գնահատման համար: Կամ՝ հարցի DB կոդը նշանակում է, որ հարցը վերաբերվում է վերաբերվում է D. թեմատիկ բաժնին (Պարտքի արդյունավետ կառավարում) եւ նախատեսված է հմտության (B.) գնահատման համար:

3.4 ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման հետազոտության ժամանակ, հարցազրույցների (դաշտային աշխատանքների) փուլում հարցաթերթի անթերի կիրառման նպատակով հարցազրուցավարների համար մշակվել է հատուկ ուղեցույց: Հարցազրուցավարների ուղեցույցը նախատեսված է.

- *Հետազոտության ղեկավարի կամ համակարգողի համար*: Հարցազրուցավարի ուղեցույցը պարունակում է նրա աշխատանքի արձանագրման տվյալների դաշտեր, ռեսպոնդենտի ընտրության ուղեցույց եւ համապատասխան դաշտեր, հարցերի տալու եւ ստացված պատասխանների արձանագրման ցուցումներ: Որպեսզի հետազոտության ղեկավարը/համակարգողը կարողանա կատարել իր պարտականությունները, առաջին հերթին ինքը պետք է տիրապետի հարցազրուցավարի ուղեցույցի բովանդակությանը, բացատրություններին եւ մեթոդական ցուցումներին: Դաշտային աշխատանքների մեկնարկից առաջ հարցազրուցավարների նախատեսված մեթոդավորումն իրականացվելու է հարցազրուցավարի ուղեցույցի հիման վրա:
- *Վերահսկողների համար*: Ինչպես հետազոտության ղեկավարը, վերահսկողները եւս պետք է տիրապետեն հարցազրուցավարի ուղեցույցի բովանդակությանը, բացատրություններին եւ մեթոդական ցուցումներին: Դաշտային աշխատանքների փուլում հարցազրուցավարները տարբեր առիթներով կարող են կապվել իրենց վերահսկողների հետ եւ տալ հարցեր: Վերահսկողներն իրենց պատասխանները պետք է գտնեն հարցազրուցավարի ուղեցույցում:
- *Հարցազրուցավարների համար*: Հարցազրուցավարի ուղեցույցի կարիքն ամենից շատ ունեն հենց իրենք՝ հարցազրուցավարները: Հարցազրույցներ անցկացնելով տարբեր տնային տնտեսություններում եւ ամենատարբեր մարդկանց հետ, հաճախ կարող են հանդիպել դեպքեր եւ հարցերի պատասխաններ, երբ հարցազրուցավարը չի կարողանա անմիջապես կողմնորոշվել եւ լուծում գտնել կամ պատասխանն արձանագրել: Այդ դեպքում նրանց առաջին օգնականը հարցազրուցավարի ուղեցույցն է: Դաշտ դուրս գալուց առաջ յուրաքանչյուր հարցազրուցավար պետք է իր տրամադրության տակ ունենա հարցազրուցավարի ուղեցույցի տպագիր տարբերակը:

Հարցազրուցավարի ուղեցույցը. - Տես Բաժին 7.2, «Հարցազրուցավարի Ուղեցույց», էջ 67

4 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ

4.1 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

4.1.1 Ֆինանսական կարողությունների ինդեքսի հաշվարկման համակարգը

Հայաստանում բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման մեթոդաբանության գլխավոր նպատակը **ֆինանսական կարողությունների ինդեքսի (ՖԿԻ) հաշվարկումն է**: Դա մի ցուցանիշ է, որը հաշվարկվում է բնակչության ֆինանսական կարողությունների համակարգի հիման վրա, որը ներկայացված է Բաժին 2.3-ում (տես էջ 16): Այդ ամբողջ համակարգն ամփոփված է մի մատրիցի մեջ, որը բաղկացած է մի կողմից՝ ֆինանսական կարողությունների 7 թեմատիկ ուղղություններից, մյուս կողմից՝ ֆինանսական որոշումների կայացման եւ իրագործման 4 հատկանիշներից:

Ինչպես արդեն նշվեց, հարցաշարը կառուցվել է այն տրամաբանությամբ, որպեսզի հնարավոր լինի ռեսպոնդենտի հետ հարցազրույցի արդյունքում պատասխան ստանալ նրա ֆինանսական կարողությունների ցանկացած պարամետրի վերաբերյալ (տես Աղյուսակ 2): Արդյունքում, կախված իրենց թեմատիկ բովանդակությունից, հարցաշարում տեղ գտած հարցերը հստակ կարելի է տարանջատել եւ «տեղավորել» ֆինանսական կարողությունների գնահատման մատրից-համակարգի բոլոր վանդակներում:

Աղյուսակ 3 - Հարցաշարի հարցերի տեղաբաշխումն ըստ բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման մատրից-համակարգի վանդակների

	A. ԳԻՏԵԼԻՔ	B. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	C. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	D. ՎԱՐՔԱԳԻԾ
A. Ֆինանսական եւ մակրոտնտեսական հասկացություններ	Հ1 Հ2 Հ5 Հ7 Հ9 Հ11 Հ13	Հ8 Հ10 Հ12	Հ6 Հ14.1	Հ3 (Հ4)* Հ14.2
B. Անձնական բյուջեի արդյունավետ կառավարում	Հ15 Հ16 Հ17 Հ18 Հ21 Հ30 Հ32 Հ34 Հ36	Հ22 Հ23 Հ27 Հ35 Հ37	Հ24 Հ28 Հ38	(Հ19) Հ20 Հ25 Հ26 Հ29 Հ31 Հ33 Հ39
C. Խնայողություններ և երկարաժամկետ պլանավորում	Հ40 Հ43 Հ45 Հ46 Հ56 Հ58 Հ60 Հ62 Հ64 Հ66	Հ47 Հ55 Հ57 Հ59 Հ61 Հ63 Հ65 Հ67	Հ41 Հ42 Հ44 Հ48 (Հ54)	Հ49 Հ50 Հ51 (Հ52) Հ53 Հ68
D. Պարտքի արդյունավետ կառավարում	Հ69 Հ70 Հ73 Հ75 Հ76 Հ77	Հ71 Հ74 Հ78 Հ81	Հ72 Հ82 Հ84	Հ79 Հ80 Հ83 Հ85 Հ86
E. Տեղեկությունների հավաքագրում, համեմատում եւ որոշումների կայացում	Հ87	Հ89 Հ90	Հ88 Հ91 Հ95	Հ92 Հ93 Հ94 Հ96 Հ97 Հ98
F. Սեփական իրավունքների պաշտպանություն	Հ100 Հ110	Հ99 Հ101	Հ102 Հ103 (Հ104) Հ111	(Հ106) Հ105 Հ107 Հ108 (Հ109)
G. Ֆինանսական գործիքներից անվտանգ օգտվել (զեղծարարություն եւ խարդախություններ)	Հ112	Հ113	Հ114 Հ115	Հ116 (Հ117) Հ118

* - Մատրիցում փակագծերի մեջ վերցված հարցերը չեն մասնակցում բնակչության ֆինանսական կարողությունների ինդեքսի հաշվարկին

Ներկայացված աղյուսակից կարելի է նկատել, որ բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման մատրից-համակարգի տարբեր վանդակներում ներկայացված են տարբեր թվով հարցեր: Դա օրինաչափ է, քանի որ ֆինանսական կարողությունների 7 թեմատիկ ուղղություններից յուրաքանչյուրն ունի բովանդակային տարբեր խորություն եւ մասշտաբ: Այսպես, եթե «G. Ֆինանսական

գործիքներից անվտանգ օգտվելը» շատ կոնկրետ թեմա է եւ նրա հետ կապված ռեսպոնդենտի գիտելիքը («A. Գիտելիք») պարզելու/ստուգելու համար բավարար է տալ մեկ հարց, ապա «B. Անձնական բյուջեի արդյունավետ կառավարում» թեման բավականին լայն է եւ ներառում է եկամուտների, ծախսերի, բանկային/քարտային հաշիվների, ապահովագրության հետ կապված հարցեր եւ դրանց հետ կապված ռեսպոնդենտի գիտելիքը («A. Գիտելիք») պարզելու/ստուգելու համար կարիք է եղել տալ առնվազն 9 հարց: Այսպիսով, ռեսպոնդենտների ֆինանսական կարողությունների 28 պարամետրից («7 թեմատիկ ուղղություն» x «4 հատկանիշներ») յուրաքանչյուրի վերաբերյալ տրվել է տարբեր թվով հարցեր՝ առնվազն այնքան, որպեսզի հնարավոր լինի բավարար պատկերացում կազմել ռեսպոնդենտների ֆինանսական կրթվածության աստիճանի վերաբերյալ:

Հետեւաբար, անկախ բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման տարբեր վանդակներում հարցերի քանակից, այդ պատասխանների հիման վրա կարելի է հաշվարկել ռեսպոնդենտների ֆինանսական կարողությունների բոլոր 28 պարամետրերը կամ այսպես կոչված **ֆինանսական կարողությունների ենթաինդեքսները**[26]:

Աղյուսակ 4 - Բնակչության ՖԿԻ հաշվարկման համակարգը

	A. ԳԻՏԵԼԻՔ	B. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	C. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	D. ՎԱՐՔԱԳԻԾ	
A. Ֆինանսական եւ մակրոտնտեսական հասկացություններ	Ենթաինդեքս_**AA**	Ենթաինդեքս_**AB**	Ենթաինդեքս_**AC**	Ենթաինդեքս_**AD**	Ենթաինդեքս **A_**
B. Անձնական բյուջեի արդյունավետ կառավարում	Ենթաինդեքս_**BA**	Ենթաինդեքս_**BB**	Ենթաինդեքս_**BC**	Ենթա- ինդեքս_**BD**	Ենթաինդեքս **B_**
C. Խնայողություններ և երկարաժամկետ պլանավորում	Ենթաինդեքս_**CA**	Ենթաինդեքս_**CB**	Ենթաինդեքս_**CC**	Ենթաինդեքս_**CD**	Ենթաինդեքս **C_**
D. Պարտքի արդյունավետ կառավարում	Ենթաինդեքս_**DA**	Ենթաինդեքս_**DB**	Ենթաինդեքս_**DC**	Ենթաինդեքս_**DD**	Ենթաինդեքս **D_**
E. Տեղեկությունների հավաքագրում, համեմատում եւ որոշումների կայացում	Ենթաինդեքս_**EA**	Ենթաինդեքս_**EB**	Ենթաինդեքս_**EC**	Ենթաինդեքս_**ED**	Ենթաինդեքս **E_**
F. Սեփական իրավունքների պաշտպանություն	Ենթաինդեքս_**FA**	Ենթաինդեքս_**FB**	Ենթաինդեքս_**FC**	Ենթաինդեքս_**FD**	Ենթաինդեքս **F_**
G. Ֆինանսական գործիքներից անվտանգ օգտվել (զեղծարարություն եւ խարդախություններ)	Ենթաինդեքս_**GA**	Ենթաինդեքս_**GB**	Ենթաինդեքս_**GC**	Ենթաինդեքս_**GD**	Ենթաինդեքս **G_**
	Ենթաինդեքս **_A**	Ենթաինդեքս **_B**	Ենթաինդեքս **_C**	Ենթաինդեքս **_D**	**Ինդեքս**

Աղյուսակ 4-ում ներկայացված ենթաինդեքսներն իրենցից ներկայացնում են ռեսպոնդենտի ֆինանսական կարողությունները բնորոշող առանձին ցուցանիշներ, որոնք պետք է «կարդալ» հետեւյալ կերպ.

[26] Տվյալ պարագայում է հարկ է օգտագործել «ենթաինդեքսներ» տերմինը՝ շփոթություն չառաջացնելու համար, քանի որ դրանց հիման վրա էլ հետագայում հաշվարկվում է ֆինանսական կարողությունների ընդհանուր ինդեքսը

Ենթաինդեքս **AA**	▸	**Ֆինանսական եւ մակրոտնտեսական հասկացությունների** հարցում ռեսպոնդենտի **գիտելիքների** մակարդակը բնութագրող ցուցանիշ
Ենթաինդեքս **AB**	▸	**Ֆինանսական եւ մակրոտնտեսական հասկացությունների** հարցում ռեսպոնդենտի **հմտության** մակարդակը բնութագրող ցուցանիշ
. . .	▸	. . .
Ենթաինդեքս **CC**	▸	**Խնայողությունների եւ երկարաժամկետ պլանավորման** հարցերի նկատմամբ ռեսպոնդենտի **վերաբերմունքի** դրսեւորումները բնութագրող ցուցանիշ
. . .	▸	. . .
Ենթաինդեքս **DC**	▸	**Պարտքի արդյունավետ կառավարման** հարցերի նկատմամբ ռեսպոնդենտի **վերաբերմունքի** դրսեւորումները բնութագրող ցուցանիշ
Ենթաինդեքս **DD**	▸	**Պարտքի արդյունավետ կառավարման** հարցերի նկատմամբ ռեսպոնդենտի **վարքագիծը** բնութագրող ցուցանիշներ
. . .	▸	. . .
Ենթաինդեքս **FD**	▸	**Սեփական իրավունքների պաշտպանության** հարցերի նկատմամբ ռեսպոնդենտի **վարքագիծը** բնութագրող ցուցանիշներ
. . .	▸	. . .

Նշված տրամաբանությունը խոսում է այն մասին, որ հորիզոնական նույն տողում կամ ուղղահայաց նույն սյունյակում գտնվող ենթաինդեքսները եւս կարող են հանդիսանալ կարեւոր ցուցանիշներ: Մասնավորապես, բնակչության ՖԿԻ հաշվարկման համակարգի առաջին (A) տողում գտնվող 4 ենթաինդեքսներն (AA, AB, AC, AD) իրենց համախմբության մեջ հանդիսանում են **Ֆինանսական եւ մակրոտնտեսական հասկացությունների** հարցում ռեսպոնդենտի **ֆինանսական կարողությունների ընդհանուր մակարդակը** բնութագրող ցուցանիշ (ենթաինդեքս **A_**): Նույն կերպ՝ բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման ինդեքսի հաշվարկման համակարգի երկրորդ (B) սյունյակում գտնվող 7 ենթաինդեքսներն (AB, BB, CB, DB, EB, FB, GB) իրենց համախմբության մեջ հանդիսանում են **ֆինանսական կարողությունների բոլոր 7 թեմատիկ ուղղություններում** ռեսպոնդենտի **հմտությունների** ընդհանուր մակարդակը բնութագրող ցուցանիշ (ենթաինդեքս **_B**):

Այս նույն տրամաբանությամբ էլ պետք է մոտենալ բնակչության ՖԿԻ-ի հաշվարկմանը: Ֆինանսական կարողությունների 7 թեմատիկ ուղղություններից յուրաքանչյուրի մասով հաշվարկված ենթաինդեքսներն (A_, B_, C_, D_, E_, F_, G_) իրենց համախմբության մեջ հանդիսանում են բնակչության ֆինանսական կարողությունների մակարդակը բնութագրող ինդեքսը: Բացարձակ նույնը կարելի է ասել, եթե ՖԿԻ-ի հաշվարկը կառուցվի ռեսպոնդենտների՝ ֆինանսական որոշումների կայացման եւ իրագործման 4 հատկանիշներից (_A, _B, _C, _D) յուրաքանչյուրի ենթաինդեքսների համախմբության վրա:

4.1.2 Ֆինանսական կարողությունների ինդեքսի հաշվարկման մոտեցումները

Նախորդ բաժնում մի քանի անգամ օգտագործվեց «...ենթաինդեքսներն իրենց համախմբության մեջ հանդիսանում են այս կամ այն կարողության մակարդակը բնութագրող ցուցանիշ»: Դժվար չէ պատկերացնել, որ խոսքը գնում է մի քանի ենթաինդեքսներից մեկ ընդհանուր ինդեքս հաշվարկելու մասին: Սակայն ինչպե՞ս հաշվարկել այդ ընդհանուր ինդեքսը: Սա շատ կարեւոր հարց է, որի պատասխանը կանխորոշում է բնակչության ՖԿԻ հաշվարկման բանաձեւը:

Մարդու ֆինանսական կարողությունների համակարգը բարդ համակարգ է: Այն բաղկացած է 7 թեմատիկ ուղղություններից, անձնական հատկանիշների համակարգի 4 բաղադրիչներից: Այդ թեմատիկ ուղղությունների եւ անձնական հատկանիշների համակարգի առաջին կամ մակերեսային վերլուծությունը կարող է առաջացնել զգացումներ, թե դրանցից որոշներն ավելի կարեւոր են, իսկ որոշները՝ քիչ կարեւոր: Օրինակ՝ «B. Անձնական բյուջեի արդյունավետ կառավարում» թեմատիկ ուղղությունն անմիջապես կապված է մարդու ամենօրյա եւ շարունակական գործունեության հետ, ընդ որում՝ անմիջապես առնչվելով ֆինանսներին, իսկ «F. Սեփական իրավունքների պաշտպանության» հետ կապված կարողությունները մարդը կարող է տարիներ շարունակ չկիրառել (կարիք չլինելու պատճառով): Եվ այս դեպքում ոմանք կարող են կարողությունների «B.» թեմատիկ ուղղությունն ավելի կարեւոր համարել, քան «F.»-ը: Նմանապես, ֆինանսական կարողությունների տեսանկյունից ոմանք կարող են մարդու գիտելիքներն ավելի կարեւորել, քան հմտությունները կամ վարքագծի հետ կապված հարցերը, համարելով, որ կարողությունների տեսանկյունից հիմնարարը հանդիսանում են գիտելիքները, իսկ մարդու մյուս հատկանիշներն ածանցյալ են: Նման մոտեցման պարագայում բնակչության ՖԿԻ հաշվարման ժամանակ ենթաինդեքսներին պետք է տալ **կշիռներ**, իսկ ՖԿԻ-ն հաշվարկել որպես **կշռված միջին թվաբանական**:

Միեւնույն ժամանակ, ֆինանսական կարողությունների բաղադրիչներին կարեւորություն տալը խնդիրը տեղափոխում է սուբյեկտիվ դատողությունների դաշտ: Ֆինանսական կարողությունների գնահատման ցանկացած հետազոտության պարագայում, փոխելով նրա անցկացման վայրը (երկիրը կամ ռեգիոնը (որոնցից բխում է ֆինանսական համակարգի զարգացման աստիճանը)), թիրախային խումբը (ամբողջ բնակչությունը կամ բնակչության առանձին խմբեր (քաղաքաբնակներ/գյուղաբնակներ), տղամարդիկ/կանայք եւ այլն), անխուսափելիորեն կփոփոխվեն ֆինանսական կարողությունների վերաբերյալ դատողությունների եւ կարեւորությունների համակարգերը: Դա պայմանավորված է հետազոտության անցկացման վայրերում կրթական եւ ֆինանսական համակարգերի զարգացման տարբերություններով: Սեփական իրավունքների պաշտպանությունը մի երկրում (հասարակությունում) կարող է համարվել ոչ կարեւոր (ոչ հրատապ իմաստով), իսկ մեկ այլ երկրում՝ առաջնահերթ կարեւորության հարց: Այս իրավիճակում, բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման սույն մեթոդաբանությունը, եւ հատկապես նրա մաս կազմող հարցաշարը, չի կարող նույնությամբ օգտագործվել մեկ այլ հետազոտության համար, բնակչության ՖԿԻ-ն չի կարող հաշվարկվել ենթաինդեքսների նույն կշիռներով, իսկ տարբեր վայրերում եւ թիրախային խմբերի շրջանում, ինչպես նաեւ տարբեր ժամանակներում սույն մեթոդաբանությամբ անցկացված հետազոտությունների արդյունքները կարող են համադրելի չլինել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն մեթոդաբանությունն իր բնույթով ունիվերսալ է եւ նախատեսված է պարբերական օգտագործման համար, ուստի սուբյեկտիվ դատողություններից եւ տարակարծություններից խուսափելու համար պետք է որդեգրել հետեւյալ մոտեցումը.

! չկան շատ կարեւոր եւ քիչ կարեւոր հարցեր, բոլոր հարցերը կարեւոր են հավասարապես

Այս սկզբունքը ենթադրում է, որ հարցաշարի մեջ տեղ գտած բոլոր հարցերը կարեւոր են հավասարապես, հարցերի պատասխանների հիման վրա հաշվարկված ենթաինդեքսները կարեւոր են հավասարապես: Սա նշանակում է, որ բնակչության ՖԿԻ-ը պետք է հաշվարկել որպես **պարզ միջին թվաբանական**:

4.2 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄՈԴՈՒԼ

Բնակչության ՖԿԻ հաշվարկն իրենից ներկայացնում է MS Excel ծրագրային հենքի վրա պատրաստված հաշվարկման մոդուլ: Այն նախատեսված է հետազոտության արդյունքում ստացված տվյալների (ռեսպոնդենտների պատասխանների թվային տարբերակները) մուտքագրման համար, որից հետո հաշվարկման մոդուլում պատրաստի (նախապես գրված) բանաձեւերի հիման վրա կհաշվարկվի ՖԿԻ-ն:

ՖԿԻ-ի հաշվարկման մոդուլը կառուցված է հետեւյալ տրամաբանական քայլերի վրա.


1. ռեսպոնդենտների պատասխանների վիճակագրության վերծանում
2. ռեսպոնդենտների պատասխանների տվյալների մուտքագրում ՖԿԻ հաշվարկման մոդուլի մեջ
3. բնակչության ֆինանսական կարողությունների ենթաինդեքսների եւ ընդհանուր ինդեքսի հաշվարկում:

4.2.1 Ռեսպոնդենտների պատասխանների վիճակագրության վերծանում

Սույն մեթոդաբանության տեսանկյունից ռեսպոնդենտների պատասխանների վիճակագրության վերծանման վրա հատուկ կանգ առնելու կարիք չկա: Ռեսպոնդենտների պատասխանների վիճակագրության վերծանման տեսանկյունից կարելի է օգտագործել տվյալների վիճակագրական վերլուծության տարբեր հայտնի գործիքներ՝ SPSS ծրագրային բազայից մինչեւ MS Excel (հաշվի առնելով հարցերի փակ բնույթը): Ռեսպոնդենտների պատասխանների վիճակագրության վերծանման արդյունքում կբացահայտվեն բնակչության ֆինանսական կարողությունների վերաբերյալ շատ կարեւոր եւ ուշագրավ տեղեկություններ: Օրինակ հարցաշարի թիվ 1 հարցի (A. բաժին) պատասխանների վիճակագրության վերծանման արդյունքում կարելի է կառուցել այսպիսի հետաքրքիր գծապատկեր.

Նկար 1 - Հարցաշարի Հարց 1-ի (A. բաժին) պատասխանների վիճակագրության ներկայացման օրինակ*

Հ1. - (AA) [Ֆինանսական կազմակերպություններ - գիտելիք] Ինչպիսի՞ ֆինանսական կազմակերպություններ գիտեք, որոնք ֆինանսական ծառայություններ են մատուցում բնակչությանը



* - Բոլոր ներկայացված թվերը պայմանական են

Տվյալների նման ներկայացումից կարելի է հասկանալ, որ բանկերի, որպես ֆինանսական կազմակերպության, մասին տեղյակ է ռեսպոնդենտների 81.9%, վարկային կազմակերպությունների մասին՝ 32.9%-ը եւ այդպես շարունակ: Սակայն ՖԿԻ հաշվարկման տեսանկյունից տվյալների նման ներկայացումը բավարար չէ: Չէ՞ որ Հարց 1-ը, ի թիվս 6 այլ հարցերի մասնակցում է ենթաինդեքս AA-ի հաշվարկմանը եւ նրա պատասխանները պետք է ունենան թվային տեսք՝ արտահայտված մեկ թվով, որը մի առանձին ենթաինդեքս է՝ հաշվարկված Հարց 1-ի պատասխանների վիճակագրության հիման վրա: Ինչպե՞ս Հարց 1-ի 12 պատասխանների վիճակագրության հիման վրա հաշվարկել մեկ ենթաինդեքս, երբ այդ 12 պատասխաններն էլ հավասարապես կարեւոր են եւ կշիռներ չի կարելի կիրառել: Այս հարցերի պատասխանները ներկայացված են հաջորդ բաժնում:

4.2.2 Ռեսպոնդենտների պատասխանների արտահայտումը մեկ ցուցանիշով

Բնակչության ՖԿԻ հաշվարկման տեսանկյունից գլխավոր նախապայմանը յուրաքանչյուր հարցի պատասխանները մեկ ցուցանիշով արտահայտելն է: Ինչպես ներկայացվեց վերեւում, Նկար 1-ի օրինակով վիճակագրական տվյալների հիման վրա այդ հարցի համար մեկ ցուցանիշ (ենթաինդեքս) հաշվարկել հնարավոր չէ: Այդ դեպքում ռեսպոնդենտների պատասխանների վիճակագրական բազայից պետք է վերծանել այլ ցուցանիշներ եւ մուտք անել բնակչության ՖԿԻ-ի հաշվարկման մոդուլի մեջ: Նախքան այդ ցուցանիշներին անդրադառնալը, պետք է հասկանալ, թե ինչ կառուցված ունի ՖԿԻ հաշվարկման մոդուլը:


4.2.2.1 Բնակչության ՖԿԻ հաշվարկման մոդուլի կառուցվածքը

Բնակչության ՖԿԻ հաշվարկման մոդուլը կառուցված է MS Excel ծրագրային հենքի վրա:

Բնակչության ՖԿԻ հաշվարկման մոդուլը. - Տես առանձին ֆայլով

Հարցաշարում տեղ գտած յուրաքանչյուր հարցի եւ նրա պատասխանների ներկայացման համար ՖԿԻ հաշվարկման մոդուլում առանձնացված է առանձին էջ՝ հետեւյալ բովանդակությամբ.

Նկար 2 - Բնակչության ՖԿԻ հաշվարկման մոդուլի էջերի վրա ներկայացված տվյալները (Հարց 1-ի օրինակով)




##	Պատասխաններ	Քանակ	%	Պատասխանների թիվը
0	... 0 ֆինանսական կազմակերպության անուն	31	2.0%	0
1	... 1 ֆինանսական կազմակերպության անուն	580	37.8%	580
2	... 2 ֆինանսական կազմակերպության անուն	455	29.6%	910
3	... 3 ֆինանսական կազմակերպության անուն	313	20.4%	939
4	... 4 ֆինանսական կազմակերպության անուն	47	3.1%	188
5	... 5 ֆինանսական կազմակերպության անուն	63	4.1%	315
6	... 6 ֆինանսական կազմակերպության անուն	16	1.0%	96
7	... 7 ֆինանսական կազմակերպության անուն		0.0%	0
8	... 8 ֆինանսական կազմակերպության անուն		0.0%	0
9	... 9 ֆինանսական կազմակերպության անուն		0.0%	0
10	... 10 ֆինանսական կազմակերպության անուն		0.0%	0
11	... 11 ֆինանսական կազմակերպության անուն		0.0%	0
-	... հրաժարվել են պատասխանել	31	2.0%	-
	Ընդամենը	1,536	100.0%	3,028

Հնարավոր պատասխանների max թիվը	16,555
Հարցի պատասխանների ինդեքսը	18.3%

որտեղ 1-7 թվերով նշագրված են.

1. - Նշված է հարցաշարում տեղ գտած հարցի հերթական համարը: Այս տեղեկության միջոցով հնարավոր է շատ արագ կապ հաստատել հարցաշարի եւ ՖԿԻ հաշվարկման մոդուլի միջեւ:
2. - Հարցաշարի հարցերից առաջ առկա է **(XX) [թեմա - հատկանիշ]** կոդավորում, որը հարցազրուցավարին հուշում է, թե ֆինանսական կարողությունների որ թեմատիկ ուղղությանը եւ անձնական որ հատկանիշին է վերաբերվում տվյալ հարցը: Այս տեղեկության միջոցով շատ արագ կարելի է ըմբռնել հարցի նշանակությունը:
3. - Նշված է ֆինանսապես կրթված մարդու բնութագիրը, որը ներկայացված է **Error! Reference source not found.**-ում: Այս տեղեկության միջոցով շատ արագ կարելի է հասկանալ, թե ինչ ռեսպոնդենտի կոնկրետ որ բնութագրի բացահայտման համար է տրված տվյալ հարցը:
4. - Նշված է հարցաշարում տեղ գտած հարցը՝ նույն խմբագրմամբ: Այս տեղեկության միջոցով հնարավոր է շատ արագ կապ հաստատել հարցաշարի եւ ՖԿԻ հաշվարկման մոդուլի միջեւ:
5. - Նշված դաշտը նախատեսված է ռեսպոնդենտների պատասխանների արտացոլման համար:
6. - «5» նշագրված դաշտում առկա է գունանշված դաշտ: Դա միակ տեղամասն է, որտեղ պետք է մուտք անել ռեսպոնդենտների պատասխանների վիճակագրական տվյալները: Մյուս սյունյակներում ցուցանիշները կհաշվարկվեն ինքնաբերաբար, քանի որ համապատասխան բանաձեւերը տեղադրված են:
7. - Այն դաշտն է, որտեղ տվյալ հարցի պատասխանների հիման վրա հաշվարկվում է մեկ ցուցանիշ՝ ենթա-ինդեքս, որն էլ մասնակցում է մեկ մակարդակ բարձր ենթաինդեքսների եւ ապա՝ ՖԿԻ հաշվարկին: Հաշվարկվում է ինքնաբերաբար, քանի որ համապատասխան բանաձեւերը տեղադրված են:

Բնակչության ՖԿԻ հաշվարկման մոդուլի այն էջերը, որոնց վրա արտացոլված են հարցերն իրենց պատասխաններով՝ **ունեն կարճ անուններ**: Դրանք բաղկացած են հարցաշարում առանձին հարցի համարից եւ ենթաինդեքսի համարից, որի հաշվարկին մասնակցում է տվյալ հարցը՝ ինչպես ներկայացված է ստորեւ.



Օրինակ 1. - Հարցի «1(AA)» անունը նշանակում է, որ հարցաշարում այդ հարցի համարը 1-ն է եւ այն մասնակցում է ենթաինդեքս AA-ի հաշվարկին:
Օրինակ 2. - Հարցի «12(AB)» անունը նշանակում է, որ հարցաշարում այդ հարցի համարը 12-ն է եւ այն մասնակցում է ենթաինդեքս AB-ի հաշվարկին:

Մեծ թվով հարցերում արագ կողմնորոշվելու համար բնակչության ՖԿԻ հաշվարկման մոդուլի այն էջերը, որոնց վրա արտացոլված են հարցերն իրենց պատասխաններով՝ նաեւ **գունանշված** են: Ընդ որում՝ ֆինանսական կարողությունների առանձին թեմատիկ ուղղություններին տրված են տարբեր գույներ՝ ինչպես ներկայացված է ստորեւ.

Ֆինանսական կարողությունների առանձին թեմատիկ ուղղություններ		Գունանշում
A. Ֆինանսական եւ մակրոտնտեսական հասկացություններ	→	
B. Անձնական բյուջեի արդյունավետ կառավարում	→	
C. Խնայողություններ և երկարաժամկետ պլանավորում	→	
D. Պարտքի արդյունավետ կառավարում	→	
E. Տեղեկությունների հավաքագրում, համեմատում եւ որոշումների կայացում	→	
F. Սեփական իրավունքների պաշտպանություն	→	
G. Ֆինանսական գործիքներից անվտանգ օգտվել (զեղծարարություն եւ խարդախություններ)	→	

Բնակչության ՖԿԻ հաշվարկման մոդուլը նախատեսված է միայն տվյալների մուտքագրման համար: ՖԿԻ հաշվարկումը կիրականացվի ինքնաբերաբար, քանի որ համապատասխան բանաձեւերը տեղադրված են: Առանձին հարցերի պատասխանների վիճակագրական տվյալները պետք է մուտքագրել « » գունանշված դաշտերում, որոնցում թվերի ֆոնտը նշված է կապույտ գույնով: Մյուս բոլոր դաշտերի ցուցանիշները (տոկոսներ կամ բացարձակ թվեր) ինքնալրացվող են, որոնց գույնը սեւ է:

4.2.2.2 Առանձին հարցերի պատասխանների արտահայտումը մեկ ցուցանիշով

Ինչպես արդեն նշվեց, բնակչության ՖԿԻ հաշվարկման տեսանկյունից գլխավոր նախապայմանը յուրաքանչյուր հարցի պատասխանները մեկ ցուցանիշով արտահայտելն է: Հարցաշարում առկա է 118 հարց, որոնք ըստ հարցը տալու եւ պատասխաններն արձանագրելու ձեւի բավականին տարբեր են: Հետևաբար՝ տարբեր են այդ հարցերի պատասխանները մեկ ցուցանիշով արտահայտելու մոտեցումները: Ուստի նախքան հասկանալը, թե ինչպես հարցերի պատասխանների վիճակագրությունը պետք է արտահայտել մեկ ցուցանիշով (առանձին ենթաինդեքսով), անհրաժեշտ է հասկանալ, թե «հարցեր-պատասխանների» քանի տիպի կոմբինացիա է հանդիպում հարցաշարում:

Հարցաշարի վերլուծության արդյունքում կարելի է առանձնացնել հարցերի 5 խմբեր:

Հարցերի խումբ Ա. - *Պատասխանների հնարավոր բոլոր տարբերակներով հարցեր*

1	**2**	**3**	4	5	6	7	8	9	10
11	12	13	14.1	14.2	15	16	17	18	19
20	21	**22**	23	24	25	26	**27**	28	29
30	31	**32**	33	**34**	35	**36**	**37**	38	39
40	41	42	43	44	**45**	46	47	48	49
50	51	**52**	53	54	**55**	56	57	58	59
60	61	62	63	**64**	**65**	66	**67**	68	**69**
70	71	72	**73**	**74**	75	**76**	77	78	79
80	81	82	83	84	85	86	**87**	88	89
90	91	92	93	**94**	95	96	97	98	99
100	101	102	103	104	105	106	107	108	109
110	111	**112**	**113**	114	115	116	117	118	

Սրանք այն հարցերն են, որոնց **պատասխանների հնարավոր բոլոր տարբերակները հարցաշարում նշված են**: Այս խմբի տարբեր հարցերի դեպքում առկա են պատասխանների տարբեր թվով տարբերակներ: Պատասխանների տարբերակները ձեւավորվել են հարցաշարի մշակման փուլում, իսկ վերջնական կազմը ձեւավորվել է հարցաշարի փորձարկման նպատակով իրականացված հարցազրույցների արդյունքների հիման վրա: Այս խմբի հարցերի հիմնական բնութագրիչներն են.

- նախատեսված են հիմնականում ռեսպոնդենտների գիտելիքի եւ հմտության ունակությունների բացահայտման համար,
- որպես կանոն, այս հարցերի տարբերակները ռեսպոնդենտների համար բարձրաձայն չեն ընթերցվում,
- այս հարցերին ռեսպոնդենտները կարող են տալ մեկից ավելի պատասխաններ:

Ստորեւ ներկայացված են այս խմբի հարցերի 2 օրինակներ (Հարց 1 եւ Հարց 55), որոնց հիման վրա էլ ներկայացված են այս խմբի հարցերի պատասխանները մեկ ցուցանիշով արտահայտելու մեթոդոլոգիան:

Հ1. (AA) [Ֆինանսական կազմակերպություններ - գիտելիք] Ինչպիսի՞ ֆինանսական կազմակերպություններ գիտեք, որոնք ֆինանսական ծառայություններ են մատուցում բնակչությանը*

Տարբերակները ՉԿԱՐԴԱԼ, հնարավոր են մի քանի պատասխաններ, պատասխանը վերցնել օղակի մեջ

1. Բանկ
2. Վարկային կազմակերպություն
3. Լոմբարդ (գրավատուն)
4. Վճարահաշվարկային կազմակերպություն
5. Արտարժույթի փոխանակման կետ
6. Ներդրումային ընկերություն
7. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ
8. Ապահովագրական ընկերություն
9. Ֆոնդային բորսա
10. Ֆինանսական միջնորդ
11. Կենտրոնական դեպոզիտարիա

97. Չգիտի / դժվարանում է պատասխանել

99. Հրաժարվում է պատասխանել

* - Այս հարցի պատասխանի «12. Այլ» տարբերակը չի մասնակցում վիճակագրական վերլուծությանը (բացատրությունը տես Հարցազրուցավարի ուղեցույցում)

Հ55. (CB) [Ավանդ - հմտություն] Ենթադրենք ինչ-որ մեկը ցանկանում է բանկում ավանդ դնել: Ըստ Ձեզ, այդ որոշման կայացման համար ավանդների ի՞նչ պայմաններ պետք է վերլուծվեն

Տարբերակները ՉԿԱՐԴԱԼ, հնարավոր են մի քանի պատասխաններ, պատասխանները վերցնել օղակի մեջ

1. Ավանդի նվազագույն գումարը
2. Ավանդի ժամկետը
3. Ավանդի տոկոսադրույքը
4. Ավանդի տոկոսներ հաշվարկելու եւ վճարելու կարգը
5. Ավանդի արժույթը
6. Ավանդի գումարի համալրման հնարավորությունը
7. Ավանդի գումարը (կամ դրա մի մասը) ժամկետից շուտ հետ պահանջելու պայմանները

97. Չգիտի / դժվարանում է պատասխանել

99. Հրաժարվում է պատասխանել

Սովորաբար այս տիպի հարցերի պատասխանների վիճակագրության վերծանումը միտված է պարզելու, թե *պատասխանի առանձին տարբերակները ռեսպոնդենտների ո՞ր մասի (տոկոսի) կողմից է նշվել:* Այդպիսով Հարց 1-ի դեպքում կարելի է պարզել, թե ընտրանքի որ մասն է ֆինանսական կազմակերպություն համարում բանկերին, որ մասը՝ վարկային կազմակերպություններին, որ մասը՝ գրավատներին եւ այլն (ինչպես ներկայացված է **Նկար 1**-ում): Նույն կերպ՝ Հարց 55-ի դեպքում կարելի է պարզել, թե բանկում ավանդ դնելիս ընտրանքի ո՞ր մասն է ուսումնասիրում ավանդի ժամկետի պայմանը, որ մասը՝ տոկոսադրույքի պայմանը եւ այլն: Այդպիսով կարելի է իմանալ, թե ավանդ դնելիս մարդիկ ո՞ր պայմաններն են ավելի շատ ուսումնասիրում, իսկ որոնք՝ քիչ կամ ընդհանրապես: Այս գործընթացին կարելի է անվանել **հետազոտության արդյունքների վիճակագրական վերլուծություն**:

Մինչդեռ ՖԿԻ-ի հաշվարկման դեպքում ներկայացված հարցերի պատասխաններին պետք է նայել այլ տեսանկյունից: Պատասխանների տարբերակների մեջ չկան շատ կամ քիչ կարեւոր պատասխաններ, դրանք կարեւոր են հավասարապես: Հետեւաբար՝ ենթադրվում է, որ **ֆինանսապես բացարձակ (100%) գրագետ (կարողունակ)** անձը Հարց 1-ի դեպքում պետք է թվարկի պատասխանների բոլոր 11 տարբերակները (ֆինանսական կազմակերպությունների անունները), իսկ Հարց 55-ի դեպքում պետք է թվարկի պատասխանների բոլոր 7 տարբերակները (ավանդի ուսումնասիրման ենթակա պայմանները): Այս մոտեցմամբ կարելի է սահմանել, թե քանի՞ պատասխան կարող էին տալ ռեսպոնդենտները, եթե նրանք բոլորը ֆինանսապես բացարձակ գրագետ լինեին.

Հարց 1-ի դեպքում՝

Ելնելով սույն հետազոտության ընտրանքի չափից, որը կազմում է 1,536 ռեսպոնդենտ, այս հարցում «ֆինանսական կարողության բարձրագույն մակարդակի» ցուցանիշը պետք է կազմի.

Հարց 55-ի դեպքում՝

Ելնելով սույն հետազոտության ընտրանքի չափից, որը կազմում է 1,536 ռեսպոնդենտ, այս հարցում «ֆինանսական կարողության բարձրագույն մակարդակի» ցուցանիշը պետք է կազմի.

16,896 պատասխանի տարբերակ *(= 1,536 ռեսպոնդենտ X 11 տարբերակ)*	*10,752 պատասխանի տարբերակ* *(= 1,536 ռեսպոնդենտ X 7 տարբերակ)*

Հարց 1-ի դեպքում 16,896 եւ Հարց 55-ի դեպքում 10,752 ցուցանիշները հանդիսանում են նշված հարցերի պատասխանների հնարավոր բոլոր տարբերակների 100%-ին համարժեք ցուցանիշները:

Իրականում չի կարող այնպես պատահել, որ բոլոր 1,536 ռեսպոնդենտներն էլ լինեն «բացարձակ (100%) գրագետ» եւ բոլորով միասին տան առավելագույն թվով պատասխաններ: Նրանք կտան ավելի քիչ թվով պատասխաններ: Օրինակ՝ Հարց 1-ի դեպքում ռեսպոնդենտներից ոմանք կարող են չնշել պատասխանի «4. Վճարահաշվարկային կազմակերպություն» տարբերակը, ոմանք՝ «9. Ֆոնդային բորսա» տարբերակը եւ այլն: Այստեղ արդեն **անհրաժեշտ է օգտվել հետազոտության արդյունքներից՝ ռեսպոնդենտների պատասխանների վիճակագրությունից**՝ հետեւյալ նպատակով. **անհրաժեշտ է հաշվել, թե կոնկրետ հարցին քանի՞ պատասխանի տարբերակ են նշել բոլոր ռեսպոնդենտները միասին:** Դիցուք հետազոտության արդյունքում Հարց 1-ի եւ Հարց 55-ի պատասխանների վիճակագրությունը ստացվել է այսպիսին.

Հարց 1-ի դեպքում՝

Պատասխաններ *(նշել են...)*	**Ռեսպոն-դենտների քանակը**	**Պատաս-խանների քանակը**
1 ֆին. կազմակերպ.-ան անուն	580	580
2 ֆին. կազմակերպ.-ան անուն	455	910
3 ֆին. կազմակերպ.-ան անուն	313	939
4 ֆին. կազմակերպ.-ան անուն	47	188
5 ֆին. կազմակերպ.-ան անուն	63	315
6 ֆին. կազմակերպ.-ան անուն	16	96
7 ֆին. կազմակերպ.-ան անուն	-	-
8 ֆին. կազմակերպ.-ան անուն	-	-
9 ֆին. կազմակերպ.-ան անուն	-	-
10 ֆին. կազմակերպ.-ան անուն	-	-
11 ֆին. կազմակերպ.-ան անուն	-	-
97. Չգիտեն / դժվ. են պատասխ.	62	-
99. Հրաժարվ. են պատասխանել	-	-
Ընդամենը	**1,536**	**3,028**

Հարց 55-ի դեպքում՝

Պատասխաններ *(նշել են...)*	**Ռեսպոն-դենտների քանակը**	**Պատաս-խանների քանակը**
1 պատասխան (պայման)	950	950
2 պատասխան (պայման)	485	970
3 պատասխան (պայման)	42	126
4 պատասխան (պայման)	34	136
5 պատասխան (պայման)	14	70
6 պատասխան (պայման)	-	-
7 պատասխան (պայման)	-	-
97. Չգիտեն / դժվ. են պատասխ.	11	-
99. Հրաժարվ. են պատասխանել	-	-
Ընդամենը	**1,536**	**2,252**

Հետազոտության նման արդյունքների պարագայում ստացվում է, որ.

- Հարց 1-ի դեպքում՝ պատասխանների հնարավոր բոլոր 16,896 տարբերակներից ռեսպոնդենտները տվել են 3,028 պատասխան կամ հնարավորի 17.9%-ը: Այլ կերպ ասած՝ **ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերյալ ռեսպոնդենտների գիտելիքի ցուցանիշը կազմում է 17.9%**:
- Հարց 55-ի դեպքում՝ պատասխանների հնարավոր բոլոր 10,752 տարբերակներից ռեսպոնդենտները տվել են 2,252 պատասխան կամ հնարավորի 20.9%-ը: Այլ կերպ ասած՝ **ավանդի դնելիս դրա պայմանները ուսումնասիրելու ռեսպոնդենտների հմտության ցուցանիշը կազմում է 20.9%**:

Բնակչության ՖԿԻ հաշվարկման մոդուլի մեջ **Ա խմբի** բոլոր հարցերի պատասխանները մեկ ցուցանիշով արտահայտվել են վերոհիշյալ մեթոդոլոգիայով:

Հարցերի խումբ Բ. - *«Ճիշտ եւ սխալ» պատասխանների տարբերակներով հարցեր*

1	2	3	4	5	6	7	8	9	10
11	**12**	**13**	14.1	14.2	**15**	16	17	18	19
20	**21**	22	23	24	25	26	27	28	29
30	31	32	33	34	**35**	36	37	38	39
40	41	42	43	44	45	**46**	**47**	48	49
50	51	52	53	54	55	**56**	**57**	**58**	**59**
60	**61**	**62**	**63**	64	65	66	67	68	69
70	**71**	72	73	74	**75**	76	**77**	**78**	79
80	81	82	83	84	85	86	87	88	89
90	91	92	93	94	95	96	97	98	99
100	101	102	103	104	105	106	107	108	109
110	111	112	113	114	115	116	117	118	

Այս հարցերը կրում են թեստային բնույթ: Որպես կանոն, այս հարցերի համար նշված են պատասխանների 3 տարբերակներ, որոնցից մեկը ճիշտ է, իսկ մյուս երկուսը սխալ: Հարցը տալիս հարցազրուցավարը բարձրաձայն կարդում է պատասխանների տարբերակները եւ ռեսպոնդենտն ընտրում է դրանցից մեկը:

Հարցերի **Բ խմբի** մեջ է մտնում Հարց 5-ը (A. բաժին), որի օրինակով ներկայացված է այս խմբի հարցերի պատասխանները մեկ ցուցանիշով արտահայտելու մեթոդոլոգիան:

Հ5. (AA) [Կենտրոնական Բանկ - գիտելիք] **Ըստ Ձեզ, ո՞րն է Կենտրոնական Բանկի հիմնական խնդիրը**
ԿԱՐԴԱԼ բոլոր տարբերակները, ապա նոր նշել ռեսպոնդենտի պատասխանը
Հնարավոր է մեկ պատասխան: Պատասխանը վերցնել օղակի մեջ

1. Առեւտրայի բանկերի վերահսկողության իրականացումը	(Ս)
2. Գների կայունության ապահովումը	(Ճ)
3. Գյուղատնտեսական վարկերի խթանումը	(Ս)
97. Չգիտի / դժվարանում է պատասխանել	(Ս)
99. Հրաժարվում է պատասխանել	(0)

«Ճիշտ եւ սխալ» պատասխանների տարբերակներով հարցերի դեպքում պատասխանների տարբերակների հարեւանությամբ առկա են (Ճ), (Ս) եւ (0) նշումներ, որտեղ (Ճ) - նշանակում է ճիշտ պատասխան, (Ս) - նշանակում է սխալ պատասխան եւ (0) - նշանակում է, որ ռեսպոնդենտը հրաժարվել է պատասխանել հարցին: Այս հատուկ նշումները կատարվել են 2 նպատակով. ա) որպեսզի հարցազրուցավարն ինքը իմանա հարցի եւ ճիշտ, եւ սխալ պատասխանները, եւ եթե բացառիկ դեպքերում կարիք լինի պատասխանել ռեսպոնդենտների հարցերին՝ կարողանա հանդես գալ որպես գիտակ եւ տեղյակ մարդ, բ) որպեսզի տվյալների էլեկտրոնային բազայի մասնագետը, ով որ պետք է մշակի հետազոտության արդյունքների վերլուծության բազան, աչքի առաջ ունենա եւ ճիշտ, եւ սխալ պատասխանները եւ կարողանա կատարել համապատասխան կոդավորում:

Հարց 5-ը նպատակ ունի՝ *պարզել, թե ընտրանքի ո՞ր մասը գիտի Կենտրոնական Բանկի հիմնական խնդիրը*: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս հարցին ռեսպոնդենտները պետք է տան միայն մեկ պատասխան, ուստի դժվար չէ պատկերացնել, որ պատասխանների առավելագույն թիվը համընկնում է ընտրանքի չափի հետ: Սույն հետազոտության դեպքում այն կազմում է 1,536: Այսպիսով, պատասխանների առավելագույն թիվը՝ 100%-ը կազմում է 1,536:

Իրականում կարող են հանդիպել ռեսպոնդենտներ, ովքեր չգիտեն այս հարցի պատասխանը: Դիցուք հետազոտության արդյունքում Հարց 5-ի պատասխանների վիճակագրությունը ստացվել է այսպիսին.

Պատասխաններ	Ռեսպոնդենտների քանակը	Ճիշտ պատասխանների թիվը
Տվել են ճիշտ պատասխան	1,032	1,032
Չգիտեն կամ տվել են սխալ պատասխան	504	-
Հրաժարվել են պատասխանել	0	-
Ընդամենը	**1,536**	**1,032**

Բնակչության ՖԿԻ հաշվարկման տեսանկյունից այս հարցի պատասխաններից հետաքրքիր է միայն ճիշտ պատասխանների թիվը: Ուստի սխալ պատասխանների եւ «Չգիտեն / դժվարացել են պատասխանել» պատասխանների արդյունքները կարելի է ներկայացնել միասին: Վերոհիշյալ օրինակի դեպքում ստացվում է, որ պատասխանների հնարավոր բոլոր 1,536 տարբերակներից ռեսպոնդենտները տվել են 1,032 ճիշտ պատասխան, ինչը նշանակում է, որ **Կենտրոնական Բանկի հիմնական խնդրի վերաբերյալ ռեսպոնդենտների գիտելիքի ցուցանիշը կազմում է 67.2%** (= 1,032 ճիշտ պատասխան / 1,536 ընդհանուր պատասխաններ):

Բնակչության ՖԿԻ հաշվարկման մոդուլի մեջ **Բ խմբի** բոլոր հարցերի պատասխանները մեկ ցուցանիշով արտահայտվել են վերոհիշյալ մեթոդոլոգիայով:

Հարցերի խումբ Գ. - *«Այո / ոչ» պատասխանների տարբերակներով հարցեր*

1	2	3	4	5	6	7	8	9	10
11	12	13	14.1	14.2	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26	27	**28**	29
30	**31**	32	**33**	34	35	36	37	38	39
40	41	42	**43**	44	45	46	47	48	49
50	**51**	52	53	54	55	56	57	58	59
60	61	62	63	64	65	**66**	67	**68**	69
70	71	72	73	74	75	76	77	78	79
80	81	82	83	84	**85**	86	87	88	89
90	91	**92**	93	94	95	**96**	**97**	98	99
100	101	102	103	104	105	106	**107**	108	109
110	111	112	113	114	115	116	117	118	

Այս հարցերն իրենց պատասխանների լրացման տեսանկյունից նման են **Բ խմբի** հարցերին: Որպես կանոն, այս հարցերը ձեւակերպված են այնպես, որ նրանց ինքնաբերաբար կարելի է պատասխանել միայն այո կամ ոչ: Օրինակ՝ *Հարց 31. - Դուք հետեւո՞ւմ եք Ձեր բանկային հաշվի քաղվածքներին* կամ *Հարց 43. - Դուք համաձա՞յն եք ձեւակերպման հետ, որ խնայողությունների հաշվին ներդրումներ կատարելով կարելի է ստանալ լրացուցիչ եկամուտներ:* Համապատասխանաբար այս հարցերի համար նշված են պատասխանների 2 տարբերակներ՝ «1. Այո» եւ «2. Ոչ»: Հարցը տալիս հարցազրուցավարը պարզապես սպասում է ռեսպոնդենտի արձագանքին:

Հարցերի **Գ խմբի** մեջ է մտնում Հարց 28-ը (B. բաժին), որի օրինակով ներկայացված է այս խմբի հարցերի պատասխանները մեկ ցուցանիշով արտահայտելու մեթոդոլոգիան:

Հ28. (BC) [Բյուջեի հսկողություն (մոնիտորինգ) - վերաբերմունք] Եկամուտների եւ ծախսերի չափն իմանալու համար պե՞տք է արդյոք վարել դրանց հաշվառում՝ գրառելով ստացած եկամուտները եւ կատարած ծախսերը
Պատասխանը վերցնել օղակի մեջ

1. Այո	2. Ոչ
97. Չգիտի / դժվարանում է պատասխանել	99. Հրաժարվում է պատասխանել

Ակնհայտ է, որ այս տիպի հարցերին ռեսպոնդենտները ռեսպոնդենտները պետք է տան միայն մեկ պատասխան: Ուստի պատասխանների առավելագույն թիվը համընկնում է ընտրանքի չափի հետ: Սույն հետազոտության դեպքում այն կազմում է 1,536: Այսպիսով, պատասխանների առավելագույն թիվը՝ 100%-ը կազմում է 1,536:

Դիցուք հետազոտության արդյունքում Հարց 28-ի պատասխանների վիճակագրությունը ստացվել է այսպիսին.

Պատասխաններ	Ռեսպոնդենտների քանակը	«Այո» պատասխանների թիվը
1. Այո	600	600
2. Ոչ	785	-
97. Չգիտեն / դժվարացել են պատասխանել	151	-
99. Հրաժարվել են պատասխանել	0	-
Ընդամենը	**1,536**	**600**

Ուշադիր ուսումնասիրելով Գ խմբի հարցերը, կարելի է նկատել, որ այդ հարցերի «1. Այո» պատասխանները ցույց են տալիս ռեսպոնդենտի մոտ ինչ-որ հատկանիշի (գիտելիքի, հմտության, դրական վերաբերմունքի, վարքագծի) առկայություն: Օրինակ՝ նույն Հարց 28-ին, եթե ռեսպոնդենտը պատասխանում է այո, դա նշանակում է, որ նա կարծում է, որ եկամուտների եւ ծախսերի չափն իմանալու համար պետք է վարել դրանց հաշվառում՝ գրառելով ստացած եկամուտները եւ կատարած ծախսերը, կամ՝ Հարց 31-ին, եթե ռեսպոնդենտը պատասխանում է այո, դա նշանակում է, որ նա հետեւում է իր բանկային հաշվի քաղվածքներին (այսինքն՝ իր ֆինանսների կառավարման տեսանկյունից անում է ճիշտ քայլ): Ուստի բնակչության ՖԿԻ հաշվարկման տեսանկյունից Գ խմբի պատասխաններից հետաքրքիր է միայն «Այո» պատասխանների թիվը: Վերոհիշյալ օրինակի դեպքում ստացվում է, որ պատասխանների հնարավոր բոլոր 1,536 տարբերակներից ռեսպոնդենտները տվել են 600 «Այո» կամ ճիշտ պատասխան: Դա նշանակում է, որ **ռեսպոնդենտների մասնաբաժինը (նույնն է, թե դրական վերաբերմունքի ցուցանիշը), ովքեր կարծում են, որ եկամուտների եւ ծախսերի չափն իմանալու համար պետք է վարել դրանց հաշվառում՝ կազմում է 39.1%** (= 600 «Այո» պատասխան / 1,536 ընդհանուր պատասխաններ):

Բնակչության ՖԿԻ հաշվարկման մոդուլի մեջ **Գ խմբի** բոլոր հարցերի պատասխանները մեկ ցուցանիշով արտահայտվել են վերոհիշյալ մեթոդոլոգիայով:

Հարցերի խումբ Դ. - *Կշռված պատասխանների տարբերակներով հարցեր*

1	2	3	4	5	6	7	8	9	10
11	12	13	**14.1**	**14.2**	15	**16**	**17**	**18**	19
20	21	22	**23**	**24**	**25**	**26**	27	28	**29**
30	31	32	33	34	35	36	37	**38**	**39**
40	**41**	**42**	43	**44**	45	46	47	**48**	**49**
50	51	52	**53**	54	55	56	57	58	59
60	61	62	63	64	65	66	67	68	69
70	71	**72**	73	74	75	76	77	78	**79**
80	**81**	**82**	**83**	**84**	85	**86**	87	**88**	**89**
90	**91**	92	**93**	94	**95**	96	97	**98**	**99**
100	**101**	**102**	**103**	104	**105**	106	107	**108**	109
110	**111**	112	113	**114**	**115**	**116**	117	**118**	

Այս խմբի հարցերը նախատեսված են հիմնականում ռեսպոնդենտների վերաբերմունքի եւ վարքագծի առանձնահատկություններն արտացոլելու համար: Դրանց մեջ էլ կան մի քանի տիպի հարցեր, բայց դրանց բոլորի պատասխանների արձանագրումը հանգում է հետեւյալ ձեւին. **նշված են պատասխանների 4 տարբերակներ, որոնք պետք է հարցազրուցավարը բարձրաձայն կարդա, իսկ ռեսպոնդենտը պետք է ընտրի դրանցից մեկը, որն էլ պետք է արձանագրվի**: Այս խմբի հարցերի պատասխանների կոմբինացիաները բաղկացած են պայմանական **«լավից մինչեւ վատ» միջակայքում գտնվող 4 պատասխանների տարբերակներից**, որտեղ ամենալավ եւ ամենադրական որակ/երանգ ունեցող պատասխանը ունի 3 գնահատական (կշիռ), իսկ ամենավատ եւ ամենաբացասական որակ/երանգ ունեցող պատասխանը՝ 0 գնահատական (կշիռ): Այս խմբի հարցերի համար կան հետեւյալ տիպի պատասխանների կոմբինացիաներ.

ա) Որակական գնահատական պարունակող պատասխաններ, օրինակ՝

4. Շատ կարեւոր	4. Միշտ	4. Շատ լավ	4. Ամբողջությամբ վստահելի
3. Կարեւոր	3. Հաճախ	3. Ավելի շուտ լավ	3. Ընդհանուր առմամբ վստահելի
2. Քիչ կարեւոր	2. Հազվադեպ	2. Ավելի շուտ վատ	2. Ընդհանուր առմամբ անվստահելի
1. Անկարեւոր	1. Երբեք	1. Շատ վատ	1. Բացարձակ անվստահելի

բ) Ճիշտ, ընդունելի, ողջունելի, նախընտրելի գործողությունից մինչեւ սխալ, անընդունելի գործողություն մատնանշող պատասխաններ, օրինակ՝

▸ **Հարց 20-ի պատասխանները**	Կշիռը
1. Սեզոնային եկամուտը **բաշխում եմ** տարվա բոլոր ամիսների վրա, եւ ծախսում եմ **միայն ըստ դրա**	**3**
2. Սեզոնային եկամուտը **բաշխում եմ** տարվա բոլոր ամիսների վրա, բայց **հաճախ չեղվում եմ** դրանից	**2**
3. Սեզոնային եկամուտը **չեմ բաշխում**, սակայն **հաշվի եմ առնում**, որ այն պետք է ծախսեմ **ավելի երկար ժամանակ**	**1**
4. Սեզոնային եկամուտը **ամբողջությամբ ծախսում եմ** այն **ստանալու պահին**	**0**

▸ **Հարց 41-ի պատասխանները**	Կշիռը
1. Խնայել պետք է ցանկացած դեպքում, անգամ եթե եկամուտներն ավելի պակաս են, քան ծախսերը	**3**
2. Խնայել պետք է այն դեպքում, երբ եկամուտները գերազանցում են ծախսերին	**2**
3. Հնարավոր չէ խնայել, եթե եկամուտներն ավելի պակաս են, քան ծախսերը	**1**
4. Խնայել իմաստ չունի բոլոր դեպքերում, եթե անգամ եկամուտները գերազանցում են ծախսերին	**0**

Հարցերի **Դ խմբի** մեջ մտնող Հարց 41-ի (C. բաժին) օրինակով ներկայացված է այս խմբի հարցերի պատասխանները մեկ ցուցանիշով արտահայտելու մեթոդոլոգիան:

Հ41. (CC) **[Խնայողություն - վերաբերմունք] Ասացեք խնդրեմ, հետեւյալ մտքերից ո՞ր մեկի հետ եք համաձայն**
ԿԱՐԴԱԼ բոլոր տարբերակները, ապա նոր նշել ռեսպոնդենտի պատասխանը:
Հնարավոր է մեկ պատասխան, պատասխանը վերցնել օղակի մեջ

1. Խնայել պետք է ցանկացած դեպքում, անգամ եթե եկամուտներն ավելի պակաս են, քան ծախսերը
2. Խնայել պետք է այն դեպքում, երբ եկամուտները գերազանցում են ծախսերին
3. Հնարավոր չէ խնայել, եթե եկամուտներն ավելի պակաս են, քան ծախսերը
4. Խնայել իմաստ չունի բոլոր դեպքերում, եթե անգամ եկամուտները գերազանցում են ծախսերին

97. Չգիտի / դժվարանում է պատասխանել
99. Հրաժարվում է պատասխանել

Բնակչության ՖԿԻ հաշվարկման մոդուլի մեջ այս խմբի հարցերի պատասխաններին տրվել են կշիռներ: Մասնավորապես Հարց 41-ի պատասխանների տարբերակներից առաջինին (*«1. Խնայել պետք է ցանկացած դեպքում, անգամ եթե եկամուտներն ավելի պակաս են, քան ծախսերը»*), որպես **խնայողություն անելու առումով ամենախրախուսելի եւ ողջունելի վերաբերմունք**, տրվել է 3 կշիռ: Իսկ պատասխաններից 4-րդին (*«4. Խնայել իմաստ չունի բոլոր դեպքերում, եթե անգամ եկամուտները գերազանցում են ծախսերին*), որպես **խնայողություն անելու առումով ամենաանընդունելի վերաբերմունք**, տրվել է 0 կշիռ:

Հետևաբար՝ ենթադրվում է, որ **եթե բոլոր ռեսպոնդենտները (1,536) Հարց 41-ին տան առաջին պատասխանը, ապա բոլոր պատասխանների առավելագույն կշիռը կկազմի 4,608 (= 1,536 ռեսպոնդենտ X 3):**

Իրականում չի կարող այնպես պատահել, որ բոլոր 1,536 ռեսպոնդենտներն էլ նույն, ընդ որում լավագույն, վերաբերմունքն ունենան խնայողություն անելու հարցին: Նրանց մի մասը կարող է տալ պատասխան 2 (*«Խնայել պետք է այն դեպքում, երբ եկամուտները գերազանցում են ծախսերին»*), որի կշիռը 2 է, մի մասը՝ պատասխան 2 (*«Հնարավոր չէ խնայել, եթե եկամուտներն ավելի պակաս են, քան ծախսերը»*), որի կշիռը 1 է, իսկ մի մասն էլ՝ պատասխան 4 (*«Խնայել իմաստ չունի բոլոր դեպքերում, եթե անգամ եկամուտները գերազանցում են ծախսերին»*), որի կշիռն ամենացածրն է՝ 0: Դիցուք հետազոտության արդյունքում Հարց 41-ի պատասխանների վիճակագրությունը ստացվել է այսպիսին.

Պատասխաններ	Ռեսպոն-դենտների քանակը	Պատասխանների կշիռը
1. Խնայել պետք է ցանկացած դեպքում, անգամ եթե եկամուտներն ավելի պակաս են, քան ծախսերը	382	1,146 (= 382 X 3)
2. Խնայել պետք է այն դեպքում, երբ եկամուտները գերազանցում են ծախսերին	865	1,730 (= 865 X 2)
3. Հնարավոր չէ խնայել, եթե եկամուտներն ավելի պակաս են, քան ծախսերը	271	271 (= 271 X 1)
4. Խնայել իմաստ չունի բոլոր դեպքերում, եթե անգամ եկամուտները գերազանցում են ծախսերին	18	0 (= 18 X 0)
97. Չգիտի / դժվարանում է պատասխանել	0	0 (= 0 X 0)
99. Հրաժարվում է պատասխանել	0	-
Ընդամենը	**1,536**	**3,147**

Հետազոտության նման արդյունքների պարագայում ստացվում է, որ **խնայողություն անելու նկատմամբ վերաբերմունքի ցուցանիշը կազմում է 68.2% (= 3,147 / 4,608):**

Բնակչության ՖԿԻ հաշվարկման մոդուլի մեջ **Դ խմբի** բոլոր հարցերի պատասխանները մեկ ցուցանիշով արտահայտվել են վերոհիշյալ մեթոդոլոգիայով:

Հարցերի խումբ Ե. - *ՖԿԻ հաշվարկին չմասնակցող հարցեր*

1	2	3	**4**	5	6	7	8	9	10
11	12	13	14.1	14.2	15	16	17	18	**19**
20	21	22	23	24	25	26	27	28	29
30	31	32	33	34	35	36	37	38	39
40	41	42	43	44	45	46	47	48	49
50	51	**52**	53	**54**	55	56	57	58	59
60	61	62	63	64	65	66	67	68	69
70	71	72	73	74	75	76	77	78	79
80	81	82	83	84	85	86	87	88	89
90	91	92	93	94	95	96	97	98	99
100	101	102	103	**104**	105	**106**	107	108	**109**
110	111	112	113	114	115	116	**117**	118	

Թվով 8 հարցեր չեն մասնակցում բնակչության ՖԿԻ հաշվարկին: Դրանցից 6-ը (Հարց 4, 52, 54, 104, 109, 117) ունեն բացատրական նշանակություն. դրանք կոչված են նախորդ հարցերի համար ապահովել հավելյալ բացատրություններ: Այս 6 հարցերը նախատեսված են միայն վիճակագրական վերլուծության համար:

2 հարցեր (Հարց 19, 106) աշխատում են որպես անցումային հարցեր: Օրինակ՝ եթե ռեսպոնդենտն ունի սեզոնային եկամուտներ (Հարց 19), ապա նրան տալ սեզոնային եկամուտների վերաբերյալ հարցը (Հարց 20-ը), իսկ եթե ոչ, ապա բաց թողնել Հարց 20-ը եւ անցնել Հարց 21-ին: Այս 2 հարցերը եւս նախատեսված են միայն վիճակագրական վերլուծության համար:

! Հատուկ դեպքեր

Կան երկու գործոններ, որոնք կարեւոր մասնակցություն կունենան բնակչության ՖԿԻ հաշվարկին: Խոսքը գնում է այն դեպքերի մասին, երբ հարցերին պատասխանելիս ռեսպոնդենտները կտան **«Չգիտեմ / դժվարանում եմ պատասխանել»** կամ **«Հրաժարվում եմ պատասխանել»** պատասխանները: Հարցաշարում տեղ գտած բոլոր հարցերի պատասխանների տարբերակներում այս երկու պատասխանները պարտադիր կարգով ներառված են եւ թվանշված են համապատասխանաբար 97 եւ 99 կոդերով:

- **«Չգիտեմ / դժվարանում եմ պատասխանել»** պատասխանների դեպքը

Տիպային հարցերի խումբը	Ցուցում
Ա *(Պատասխանների հնարավոր բոլոր տարբերակներով հարցեր)*	Եթե Ա խմբի հարցին ստացվել է «97. Չգիտեմ / դժվարանում եմ պատասխանել» պատասխան, ապա անկախ ռեսպոնդենտների քանակից, պատասխանների քանակում նրա ցուցանիշը կլինի զրո: Օրինակ՝ դիցուք

	Հարց 1-ին (Ինչպիսի՞ ֆինանսական կազմակերպություններ գիտեք, որոնք ֆինանսական ծառայություններ են մատուցում բնակչությանը) ռեսպոնդենտը տվել է «97. Չգիտեմ / դժվարանում եմ պատասխանել» պատասխան, դա նշանակում է, որ նա չգիտի եւ ոչ մի ֆինանսական կազմակերպության անուն: Հետևաբար՝ պատասխանների առավելագույն թվի հաշվարկում «97. Չգիտեմ / դժվարանում եմ պատասխանել» պատասխանը կունենա զրո կշիռ, ինչը նշանակում է, որ պատասխան չի ստացվել:
Բ *(«Ճիշտ եւ սխալ» պատասխանների տարբերակներով հարցեր)*	Բ խմբի հարցերը գիտելիք, տեղեկացվածություն, հմտություն ստուգող հարցեր են: ՖԿԻ հաշվարկման տեսանկյունից ամենեւին էական չէ, ռեսպոնդենտը հարցի պատասխանը սխալ գիտի, թե ընդհանրապես չգիտի: Ուստի այս խմբի հարցերի պատասխանները մեկ ցուցանիշով արտահայտելիս «97. Չգիտեմ / դժվարանում եմ պատասխանել» պատասխանները ներկայացված են սխալ պատասխանների հետ ընդհանուր թվով եւ, որպես պատասխան՝ ունեն զրո կշիռ:
Գ *(«Այո / ոչ» պատասխանների տարբերակներով հարցեր)*	Գ խմբի հարցերը նախատեսված են բացառապես «1. Այո» պատասխանների թվի հաշվարկման համար: Հետեւաբար՝ այս խմբի հարցերին «2. Ոչ» կամ «97. Չգիտեմ / դժվարանում եմ պատասխանել» պատասխաններն ունեն միեւնույն արժեքը՝ զրո կշիռ:
Դ *(Կշռված պատասխանների տարբերակներով հարցեր)*	Դ խմբի հարցերի դեպքում ամեն ինչ ավելի պարզ է: Բոլոր պատասխաններին տրված են կշիռներ: Այս խմբի հարցերի պատասխանների կշիռների հաշվարկման ժամանակ «97. Չգիտեմ / դժվարանում եմ պատասխանել» պատասխանները մասնակցում են զրո կշռով:

- **«Հրաժարվում եմ պատասխանել»** պատասխանների դեպքը

Հարցաշարի վերջնականացման նպատակով անցկացված փորձնական հարցազրույցների արդյունքները ցույց են տալիս, որ չի կարելի բացառել, որ որոշ հարցերի ռեսպոնդենտները կհրաժարվեն պատասխանել: Նման դեպքերի նկատմամբ մոտեցումն այն է, որ **ցանկացած հարցի պատասխանները մեկ ցուցանիշով արտահայտելիս պետք է «99. Հրաժարվում եմ պատասխանել»** պատասխանների թիվը հանել ընտրանքի ծավալից եւ դրանք չհամարել պատասխան: Ենթադրենք Հարց 5-ին (*«Ըստ Ձեզ, ո՞րն է Կենտրոնական Բանկի հիմնական խնդիրը»*) 1,536 ռեսպոնդենտներից 16-ը հրաժարվել են պատասխանել հարցին: Այս դեպքում հնարավոր չէ հասկանալ՝ այդ 16 ռեսպոնդենտները գիտե՞ն հարցի պատասխանը, թե՞ ոչ:

Ստորեւ Հարց 5-ի հիման վրա բերված է օրինակ, թե ինչպես կարելի է հարցի պատասխաններն արտահայտել մեկ թվով.

Հարց.

Հ5. (ԱԱ) [Կենտրոնական Բանկ - գիտելիք] Ըստ Ձեզ, ո՞րն է Կենտրոնական Բանկի հիմնական խնդիրը
ԿԱՐԴԱԼ բոլոր տարբերակները, ապա նոր նշել ռեսպոնդենտի պատասխանը
Հնարավոր է մեկ պատասխան: Պատասխանը վերցնել օղակի մեջ

1. Առեւտրայի բանկերի վերահսկողության իրականացումը	(Ս)
2. Գների կայունության ապահովումը	(Ճ)
3. Գյուղատնտեսական վարկերի խթանումը	(Ս)
97. Չգիտի / դժվարանում է պատասխանել	(Ս)
99. Հրաժարվում է պատասխանել	(0)

Պատասխան.

Պատասխաններ	Ռեսպոնդենտների քանակը	Ճիշտ պատասխանների թիվը
Տվել են ճիշտ պատասխան (կոդ 2)	1,032	1,032
Չգիտեն կամ տվել են սխալ պատասխան (կոդ 1, 3, 97)	488	-
Հրաժարվել են պատասխանել (կոդ 99)	16	-
Ընդամենը	**1,536**	**1,032**

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ 1,536 ռեսպոնդենտներից 16-ը հրաժարվել են պատասխանել Հարց 5-ին: Դա նշանակում է, որ Հարց 5-ին պատասխանել է 1,520 ռեսպոնդենտ (=1,536-16): Սա էլ իր հերթին նշանակում է, որ պատասխանների հնարավոր բոլոր պատասխանների թիվը կազմում է 1,520, որոնցից 1,032-ը ճիշտ պատասխաններն են: Այդպիսով կարելի է հաշվարկել, որ **Կենտրոնական Բանկի հիմնական խնդրի վերաբերյալ ռեսպոնդենտների գիտելիքի ցուցանիշը կազմում է 67.9%** (= 1,032 ճիշտ պատասխան / 1,520 ընդհանուր պատասխաններ):

Բնակչության ՖԿԻ հաշվարկման մոդուլում բոլոր հարցերի պատասխանների ցուցանիշները հաշվարկելիս «99. Հրաժարվում եմ պատասխանել» պատասխաններին ցուցաբերվել է նույն մոտեցումը:

4.2.3 Բնակչության ֆինանսական կարողությունների ենթաինդեքսների եւ ընդհանուր ինդեքսի հաշվարկում

Բնակչության ՖԿԻ հաշվարկի մնացած գործողությունները կիրականացվեն ինքնաբերաբար: Այդ հաշվարկը հիմնված է հարցաշարում տեղ գտած 118 հարցերից 110-ի պատասխանների ցուցանիշների ամփոփման վրա: Հիմնվելով Աղյուսակ 3-ում (էջ 28) եւ Աղյուսակ 4-ում (էջ 29) բերված բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման մատրից-համակարգի կառուցվածքի վրա, կարելի է 110 հարցերի պատասխանների ցուցանիշները ամփոփել հետեւյալ կերպ.

Աղյուսակ 5 - Բնակչության ՖԿԻ հաշվարկին մասնակցող հարցերի պատասխանների ամփոփումը ֆինանսական կարողությունների գնահատման մատրից-համակարգում

	A. ԳԻՏԵԼԻՔ	B. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	C. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	D. ՎԱՐՔԱԳԻԾ	
A. Ֆինանսական եւ մակրոտնտեսական հասկացություններ	Ենթաինդեքս_AA Հ1 Հ2 Հ5 Հ7 Հ9 Հ11 Հ13	Ենթաինդեքս_AB Հ8 Հ10 Հ12	Ենթաինդեքս_AC Հ6 Հ14.1	Ենթաինդեքս_AD Հ3 Հ14.2	Ենթաինդեքս A_
B. Անձնական բյուջեի արդյունավետ կառավարում	Ենթաինդեքս_BA Հ15 Հ16 Հ17 Հ18 Հ21 Հ30 Հ32 Հ34 Հ36	Ենթաինդեքս_BB Հ22 Հ23 Հ27 Հ35 Հ37	Ենթաինդեքս_BC Հ24 Հ28 Հ38	Ենթա- ինդեքս_BD Հ20 Հ25 Հ26 Հ29 Հ31 Հ33 Հ39	Ենթաինդեքս B_
C. Խնայողություններ և երկարաժամկետ պլանավորում	Ենթաինդեքս_CA Հ40 Հ43 Հ45 Հ46 Հ56 Հ58 Հ60 Հ62 Հ64 Հ66	Ենթաինդեքս_CB Հ47 Հ55 Հ57 Հ59 Հ61 Հ63 Հ65 Հ67	Ենթաինդեքս_CC Հ41 Հ42 Հ44 Հ48	Ենթաինդեքս_CD Հ49 Հ50 Հ51 Հ53 Հ68	Ենթաինդեքս C_
D. Պարտքի արդյունավետ կառավարում	Ենթաինդեքս_DA Հ69 Հ70 Հ73 Հ75 Հ76 Հ77	Ենթաինդեքս_DB Հ71 Հ74 Հ78 Հ81	Ենթաինդեքս_DC Հ72 Հ82 Հ84	Ենթաինդեքս_DD Հ79 Հ80 Հ83 Հ85 Հ86	Ենթաինդեքս D_
E. Տեղեկությունների	Ենթաինդեքս_EA	Ենթաինդեքս_EB	Ենթաինդեքս_EC	Ենթաինդեքս_ED	Ենթաինդեքս

	A. ԳԻՏԵԼԻՔ	B. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	C. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ	D. ՎԱՐՔԱԳԻԾ	
հավաքագրում, համեմատում եւ որոշումների կայացում	Հ87	Հ89 Հ90	Հ88 Հ91 Հ95	Հ92 Հ93 Հ94 Հ96 Հ97 Հ98	E_
F. Սեփական իրավունքների պաշտպանություն	Ենթաինդեքս_FA Հ100 Հ110	Ենթաինդեքս_FB Հ99 Հ101	Ենթաինդեքս_FC Հ102 Հ103 Հ111	Ենթաինդեքս_FD Հ105 Հ107 Հ108	Ենթաինդեքս F_
G. Ֆինանսական գործիքներից անվտանգ օգտվել (զեղծարարություն եւ խարդախություններ)	Ենթաինդեքս_GA Հ112	Ենթաինդեքս_GB Հ113	Ենթաինդեքս_GC Հ114 Հ115	Ենթաինդեքս_GD Հ116 Հ118	Ենթաինդեքս G_
	Ենթաինդեքս _A	Ենթաինդեքս _B	Ենթաինդեքս _C	Ենթաինդեքս _D	**Ինդեքս**

Այս մատրիցը իր համապատասխան տվյալներով ներկայացված է բնակչության ՖԿԻ հաշվարկման մոդուլի մեջ՝ որպես առանձին էջ՝ «Ենթաինդեքսներ» անվամբ: Այն ամբողջությամբ ինքնալրացվող աղյուսակ է, քանի որ համապատասխան բանաձեւերը տեղադրված են:

Աղյուսակ 5-ի տվյալներից երեւում է, որ առանձին ենթաինդեքսների հաշվարկին մասնակցում են տարբեր թվով հարցեր: Օրինակ՝

- ենթաինդեքս AA-ի («A. Ֆինանսական եւ մակրոտնտեսական հասկացություններ» X «A. Գիտելիք») հաշվարկին մասնակցում են թվով 7 հարցեր,
- ենթաինդեքս CD-ի («C. Խնայողություններ և երկարաժամկետ պլանավորում» X «D. Վարքագիծ») հաշվարկին մասնակցում են թվով 5 հարցեր, իսկ՝
- ենթաինդեքս GB-ի («G. Ֆինանսական գործիքներից անվտանգ օգտվել» X «B. Հմտություն») հաշվարկին մասնակցում է ընդամենը 1 հարց, եւ այլն:

Այս հանգամանքը չի կարող խնդիր հարուցել, քանի որ ի սկզբանե բնակչության ՖԿԻ հաշվարկի հիմքում դրված է եղել *«բոլոր հարցերը կարեւոր են հավասարապես»* մոտեցումը: Հետևաբար՝ հարցը լուծվում է ենթաինդեքսները **միջին թվաբանական հաշվարկելու միջոցով:** Վերոհիշյալ 3 օրինակներում ենթաինդեքսների հաշվարկի բանաձեւը կունենա հետեւյալ տեսքը.

$$\text{Ենթաինդեքս } \mathbf{AA} = \frac{Հ1 + Հ2 + Հ5 + Հ7 + Հ9 + Հ11 + Հ13}{7}$$

$$\text{Ենթաինդեքս } \mathbf{CD} = \frac{Հ49 + Հ51 + Հ52 + Հ53 + Հ68}{5}$$

$$\text{Ենթաինդեքս } \mathbf{GB} = \frac{Հ113}{1} \quad \text{կամ պարզապես՝} \quad = Հ113$$

Բոլոր ենթաինդեքսները՝ AA-ից մինչեւ GD հաշվարկվում են նույն տրամաբանությամբ:

Այն բանից հետո, ինչ կհաշվարկվեն AA-GD ենթաինդեքսները, ինքնաբերաբար կհաշվարկվի նաեւ ֆինանսական կարողությունների 7 թեմատիկ ուղղությունների եւ ռեսպոնդենտների 4 անձնական հատկանիշների առանձին ենթաինդեքսները եւ բնակչության ՖԿԻ-ը: Այդ ամբողջ գործողությունը

ներկայացված է **ՖԿԻ հաշվարկման մոդուլի մեջ՝ «ԻՆԴԵՔՍ» անվամբ առանձին էջի վրա:** Մասնավորապես «A. Ֆինանսական եւ մակրոտնտեսական հասկացություններ» թեմատիկ ուղղության ենթաինդեքսը (A_) կհաշվարկվի որպես միջին թվաբանական՝ AA, AB, AC եւ AD ենթաինդեքսների հիման վրա՝ հետեւյալ բանաձեւով.

$$\text{Ենթաինդեքս } \mathbf{A\_} = \frac{AA + AB + AC + AD}{4}$$

Նույն տրամաբանությամբ կհաշվարկվի «B. Հմտություն» անձնական հատկանիշի ենթաինդեքսը՝ հետեւյալ բանաձեւով.

$$\text{Ենթաինդեքս } \mathbf{\_B} = \frac{AB + BB + CB + DB + EB + FB + GB}{7}$$

Այն բանից հետո, ինչ կհաշվարկվեն ֆինանսական կարողությունների 7 թեմատիկ ուղղությունների A_-G_ ենթաինդեքսները կամ 4 անձնական հատկանիշների _A-_D ենթաինդեքսները, **ինքնաբերաբար կհաշվարկվի նաեւ բնակչության ֆինանսական կարողությունների ինդեքսը**: ՖԿԻ հաշվարկի համար հավասարապես ճիշտ են հետեւյալ երկու բանաձեւերը.

$$\mathbf{ՖԿԻ} = \frac{A\_ + B\_ + C\_ + D\_ + E\_ + F\_ + G\_}{7} \quad \text{կամ} \quad = \frac{\_A + \_B + \_C + \_D}{4}$$

Քանի որ սույն մեթոդաբանության մեջ բնակչության ՖԿԻ-ն արտահայտված է տոկոսով, ուստի հասկանալի է, որ անձի ֆինանսական կարողությունների բարձրագույն մակարդակի ցուցանիշը կազմում է 100%: Այսպիսի հետազոտությունը պարբերաբար կամ տարբեր երկրներում (նույն երկրի տարբեր ռեգիոններում) անցկացնելու պարագայում նպատակահարմար է ՖԿԻ-ի տարբեր մեծություններին տալ որակական գնահատականներ: Դա կօգնի ավելի մատչելի դարձնել ՖԿԻ-ի մեծության ընկալումը: Օրինակ՝ կարելի է բնակչության ֆինանսական կարողությունների մակարդակը բնորոշել 5 նիշանոց գնահատման համակարգով, որտեղ.

[> 80% - < = 100%]	=	Ֆինանսական գրագիտության բարձրագույն մակարդակ
[> 60% - < = 80%]	=	Ֆինանսական գրագիտության բարձր մակարդակ
[> 40% - < = 60%]	=	Ֆինանսական գրագիտության միջին մակարդակ
[> 20% - < = 40%]	=	Ֆինանսական գրագիտության ցածր մակարդակ
[< = 20%]	=	Ֆինանսապես անգրագիտության մակարդակ

Անշուշտ, գնահատման մակարդակների թիվը կարող է որոշել սույն հետազոտության պատվիրատուն ինքնուրույն՝ ելնելով իր նկատառումներից: Սակայն պետք է հաշվի առնել, որ **որքան շատ լինեն գնահատման մակարդակները, այնքան ավելի կոնկրետ կլինի բնակչության ֆինանսական կարողությունների գնահատականը**: Բնակչության ՖԿԻ հաշվարկման մոդուլի «ԻՆԴԵՔՍ» էջում ֆինանսական կարողությունների գնահատման մատրիցին հաջորդում է վերոհիշյալ 5 նիշանոց գնահատման համակարգով ֆինանսական կարողությունների բնորոշման հաշվարկը՝ որպես բնակչության ֆինանսական կարողությունների ամփոփ որակական գնահատական:

5 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ

Ֆինանսական կարողությունների գնահատման համար անհրաժեշտ է կոնտակտի մեջ մտնել բնակչության հետ: Դա հնարավոր է անել միայն **դեմ առ դեմ հարցազրույցների** արդյունքում՝ **ստանդարտացված հարցաշարի** լրացման միջոցով: Բնակչության շրջանում դեմ առ դեմ հարցազրույցների անցկացման միջոցով հավաքվող տեղեկատվության հիման վրա պետք է լրացվի ֆինանսական կարողությունների վերոհիշյալ համակարգը: Հաշվի առնելով այն, որ գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների կիրառման եւ գործադրման ուղղությունները 7-ն են, իսկ անձի՝ ֆինանսական որոշումների կայացման եւ իրագործման հատկանիշները 4-ը, կարելի է պատկերացնել, որ հարցերի շրջանակը, որոնց պատասխանները պետք է հավաքել մարդկանցից, բավականին մեծ է: Այս հանգամանքի հիման վրա կարելի է եզրակացնել, որ որեւէ այլ տարբերակ, մասնավորապես հեռախոսային հարցազրույցներ կամ ինքնալրացվող հարցաշարերի եւ անկետաների կիրառությունը չի կարող լինել խնդրի լուծման արդյունավետ միջոց՝ պայմանավորված հարցաշարի օբյեկտիվորեն մեծ ծավալով եւ թեմայի բարդությամբ:

5.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ

5.1.1 Հետազոտության աշխարհագրությունը

ՀՀ ԿԲ-ի կողմից բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման համար թիրախվել է Հայաստանի բնակչությունը: Դա նշանակում է, որ ֆինանսական կարողությունների գնահատման նպատակով անցկացվելիք հետազոտությունը կրում է **համապետական բնույթ** եւ պետք է իրականացվի **Հայաստանի ամբողջ տարածում**: Միեւնույն ժամանակ չկա պահանջ, որ հետազոտության արդյունքները, բացի ամբողջ Հայաստանից, պետք է ներկայացուցչական լինեն նաեւ առանձին մարզերի կամ բնակավայրերի համար, ինչը կտրուկ կմեծացներ հետազոտության ընտրանքի չափը: Ուստի ընտրանքի չափի հաշվարկի համար հիմք է ընդունվելու այնպիսի ելակետային տվյալներ, որոնք բնութագրում են ամբողջ Հայաստանի տարածքը եւ բնակչությունը:

5.1.2 Թիրախային խումբը

ՀՀ-ում բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման նպատակով անցկացվող հետազոտության թիրախային խումբը, որպես տվյալների առաջնային աղբյուր՝ Հայաստանի բնակչությունն է: Միեւնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ ամբողջ բնակչությունը չի կարող համարվել ֆինանսական գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի եւ վարքագծի կրող: Այս հատկանիշները մարդկանց մոտ ձեւավորվում են կրթման եւ փորձի ձեռքբերման հետ միասին: Ելնելով Հայաստանի միջնակարգ կրթության համակարգում ֆինանսական կրթման ծրագրերի բացակայությունից, պետք է ենթադրել, որ Հայաստանում, որպես կանոն, մարդկանց մոտ ֆինանսների հետ կապված գիտելիքների եւ հմտությունների նվազագույն պաշարը եւ գործառույթներն (եկամուտների ստեղծում, ծախսերի իրականացում) ի հայտ են գալիս պատասխանատու որոշումների կայացման տարիքում՝ չափահաս դառնալուց հետո: Ուստի մարդկանց մոտ փոքր տարիքը եւ ցածր գիտակցական մակարդակը պետք է համարել ֆինանսական կարողությունների ցածր մակարդակի կամ բացակայության օբյեկտիվ գործոններ եւ անչափահաս անձանց բացառել սույն հետազոտության թիրախային խմբից՝ որպես **ֆինանսական կարողությունների գնահատման տեսանկյունից ոչ ռելեւանտ հանրային խումբ**:

Ելնելով վերոոհիշյալ նկատառումներից, Հայաստանում բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման հետազոտությունը պետք է անցկացնել **չափահաս՝ 18 եւ բարձր տարիքի բնակչության** շրջանում:

5.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆՔԸ

5.2.1 Ընտրանքի չափը

Հայաստանում բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման հետազոտության ընտրանքի չափի հաշվարկման համար ելակետային տվյալները հետեւյալն են.

- գլխավոր համախմբության մեծությունը
- հետազոտության արդյունքների վստահության մակարդակի եւ վստահության միջակայքի ցուցանիշները:

Հետազոտության գլխավոր համախմբությունը կազմում է Հայաստանի 18 եւ բարձր տարիքի բնակչության թվաքանակը: Այդ տվյալները կարելի է ստանալ ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայությունից (ԱՎԾ): Բնակչության թվաքանակի վերաբերյալ ԱՎԾ-ն թողարկում է հետեւյալ հրապարակումները.

1. *Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը*[27]: Թողարկվում է եռամսյակը մեկ անգամ՝ հունվարի, ապրիլի, հուլիսի եւ հոկտեմբերի 1-ի դրությամբ: Այս հրապարակումը պատրաստվում է մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ: Հրապարակման մեջ ներկայացված է Հայաստանի մշտական բնակչության թվաքանակը բաշխված ըստ մարզերի, տարածաշրջանների եւ բնակավայրերի տիպերի (քաղաք/գյուղ): Սակայն բնակչության տարիքային կազմի վերաբերյալ տվյալներ չեն ներկայացվում:
2. *Հայաստանի ժողովրդագրական ժողովածու*[28]: Թողարկվում է տարեկան մեկ անգամ: Այս հրապարակման մեջ բնակչության թվաքանակի ցուցանիշները ներկայացված են ՀՀ մարդահամարի հիմքով վարվող, ընթացիկ հաշվառմամբ ստացված տվյալներով: Ի տարբերություն նախորդ հրապարակման, Հայաստանի ժողովրդագրական ժողովածուն ներկայացնում է մշտական բնակչության բաշխվածքի ավելի մանրամասն տվյալներ, այդ թվում՝ ըստ տարիքային կազմի: Սակայն այս ժողովածույում բնակչությունը խմբավորված է առանձին տարիքային խմբերում, օրինակ 5-9, 10-14, 15-19 տարեկան եւ այլն: Քանի որ Հայաստանում բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման հետազոտության թիրախային խումբը կազմում է 18 եւ բարձր տարեկան բնակչությունը, իսկ 15-19 տարիքային խմբից հնարավոր չէ վերծանել միայն 18-19 տարեկան բնակչության թվաքանակը, ուստի Հայաստանի ժողովրդագրական ժողովածուն եւս թույլ չի տալիս ստանալ սույն հետազոտության թիրախային խմբի ճշգրիտ մեծությունը:
3. *Հայաստանի Հանրապետության մարդահամար*[29]: Սա Հայաստանի բնակչության վերաբերյալ տվյալների ամենաամբողջական բազան է: Մարդահամարի արդյունքներով հրապարակումը թողարկվում է մարդահամարի անցկացումից 1-2 տարի հետո: Մասնավորապես, վերջին մարդահամարն անցկացվել է 2011թ.-ին, իսկ ամբողջական տվյալները պաշտոնապես

[27] Սույն փաստաթղթի պատրաստման պահի դրությամբ նշված հրապարակման ամենաթարմ տարբերակն է. «Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ«, ԱՎԾ, 2014 (աղբյուր՝ http://armstat.am/am/?nid=82&id=1547)

[28] Սույն փաստաթղթի պատրաստման պահի դրությամբ նշված հրապարակման ամենաթարմ տարբերակն է. «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2013», ԱՎԾ, 2013 (աղբյուր՝ http://armstat.am/am/?nid=82&id=1515)

[29] Տես «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները)», ԱՎԾ 2013 (աղբյուր՝ http://armstat.am/am/?nid=337)

հրապարակվել են 2013թ.-ին: Այս հրապարակումից կարելի է ստանալ ոչ միայն յուրաքանչյուր առանձին տարիքային խմբում բնակչության թվաքանակը, այլ նաեւ առկա բնակչության թվաքանակը, որն ավելի ճիշտ է արտացոլում Հայաստանի ժողովրդագրական պատկերը, քան մշտական բնակչության ցուցանիշը:

Հայաստանում բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման հետազոտության գլխավոր համախմբության մեծությունը հաշվելու համար կարելի է կիրառել հետեւյալ 3 մոտեցումները.

- *Հիմնվել ՀՀ 2011թ.-ի մարդահամարի՝ առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի վրա*: 2014թ.-ի դրությամբ այդ տվյալները համեմատաբար թարմ են եւ կիրառելի՝ հաշվի առնելով Հայաստանի բնակչության թվաքանակի հարաբերական կայունությունը[30]՝ պայմանավորված Հայաստանի բնակչության բնական աճի (ավելացնող գործոն) եւ բացասական միգրացիայի (նվազեցնող գործոն) ցուցանիշներով: Այս տրամաբանությամբ, Հայաստանում բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման հաջորդ հետազոտությունը եթե անցկացվի 3 կամ 5 տարի հետո, ապա, միեւնույն է, բնակչության թվաքանակի փոփոխության ներկա միտումների պարագայում ՀՀ 2011թ.-ի մարդահամարի արդյունքները կրկին կարող են լինել կիրառելի:
- *Հիմնվել մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշի վրա*: Այս ցուցանիշն ըստ բնակչության տարիքային խմբերի հրապարակվում է ամեն տարի (Հայաստանի ժողովրդագրական ժողովածու)՝ հրապարակման տարվա հունվարի 1-ի դրությամբ: Այն թույլ չի տալիս ստանալ 18 եւ բարձր տարիքի բնակչության ճշգրիտ թիվը. հասանելի է միայն 20 եւ բարձր տարիքի բնակչության թիվը: Սակայն ընտրանքի չափի եւ նրա բաշխվածքի համար անհրաժեշտ համամասնությունների հաշվարկման տեսանկյունից կիրառելի է: Դրա վերաբերյալ պարզաբանումը ներկայացված է ստորեւ (տես **<u>Դիտարկում 2</u>**):
- *Պաշտոնական հարցմամբ տվյալներ ստանալ ԱՎԾ-ից*: Հայաստանում բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման հետազոտությունից (ներկա եւ հաջորդ) առաջ կարելի է պաշտոնական հարցում անել ԱՎԾ եւ ստանալ հետազոտության պահի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակում 18 եւ բարձր տարիքի բնակչության թվաքանակը: Այդ ցուցանիշը ճշգրիտ չի արտացոլի Հայաստանի ժողովրդագրական պատկերը, սակայն հաշվի առնելով առկա եւ մշտական բնակչության թվաքանակի ոչ շատ մեծ տարբերությունը[31], ուստի այն եւս կարող է կիրառելի լինել՝ որպես ընտրանքի հաշվարկման բազա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՎԾ-ն դեռեւս չի հրապարակել ՀՀ 2011թ.-ի մարդահամարի **մարզերի ցուցանիշները**, ապա գլխավոր համախմբության կարելի է հիմք ընդունել 2-րդ մոտեցումը եւ օգտագործել 2013թ.-ի Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի տվյալները: Այսպես, 01.01.2013թ.-ի դրությամբ **Հայաստանի մշտական բնակչությունը** կազմել է 3,026,879 մարդ, որից **20 եւ բարձր տարիքի առկա բնակչությունը**՝ 2,241,799 մարդ[32]: Հենց այս ցուցանիշն էլ հիմք կընդունվի որպես Հայաստանում բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման հետազոտության **գլխավոր համախմբության մեծություն**:

[30] ՀՀ 2011թ.-ի մարդահամարի արդյունքներով Հայաստանի մշտական բնակչությունը կազմում է 3,018,854 մարդ: 2014թ.-ի հունվարի 1-ի դրությամբ նույն ցուցանիշը կազմում է 3,017,100 մարդ: Աղբյուր՝ ԱՎԾ հրապարակումներ

[31] ՀՀ 2011թ.-ի մարդահամարի արդյունքներով Հայաստանի մշտական եւ առկա բնակչության թվերն են համապատասխանաբար 3,018,854 եւ 2,871,771 մարդ

[32] 18 եւ բարձր տարիքի բնակչության թվաքանակը կարելի է գնահատել մոտավորապես, սակայն բարձր ճշգրտությամբ: Ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ 2011թ.-ի մարդահամարի արդյունքներով 16-17 տարիքի մշտական բնակչության քանակը կազմել է 86,916 մարդ, որոնք 01.01.2013թ.-ի դրությամբ կարող էին արդեն լինել 18-19 տարեկան, ապա կարելի է ենթադրել, որ 01.01.2013թ.-ի դրությամբ Հայաստանի մշտական բնակչության թիվը կազմել է մոտավորապես 2.328 մլն. մարդ

Հետազոտության արդյունքների վստահության մակարդակի եւ **վստահության միջակայքի** ցուցանիշները սահմանված են ՀՀ ԿԲ-ի կողմից եւ կազմում են.

- վստահության մակարդակ (confidence level) 95%
- վստահության միջակայք (confidence interval) 2.5%

Գլխավոր համախմբության մեծության, հետազոտության արդյունքների վստահության մակարդակի եւ վստահության միջակայքի վերոհիշյալ ցուցանիշների հիման վրա հաշվարկված **ընտրանքի չափը կազմում է 1,536 մարդ**:

Դիտարկում 2. Գլխավոր համախմբության եւ ընտրանքի չափի փոխկապակցությունը

Հաշվարկները ցույց են տալիս, որ վստահության մակարդակի 95% եւ վստահության միջակայքի 2.5% ցուցանիշների դեպքում ընտրանքի չափը կկազմի.

- 1,536 մարդ, եթե գլխավոր համախմբության ցուցանիշն ընկած լինի 2,068,400-16,853,640 միջակայքում
- 1,535 մարդ, եթե գլխավոր համախմբության ցուցանիշն ընկած լինի 1,101,140-2,068,399 միջակայքում

Սա նշանակում է, որ առաջիկա տարիներին **նմանատիպ** հետազոտության անցկացման համար անհրաժեշտ ընտրանքի չափը բոլոր դեպքերում կազմելու է 1,536 կամ 1,535 մարդ:

5.2.2 Ընտրանքի ձեւավորումը

Հետազոտության՝ Հայաստանի ամբողջ բնակչության համար վիճակագրորեն ներկայացուցչական արդյունքներ ունենալու համար պետք է ձեւավորել ընտրանք՝ այն մոտեցմամբ, որ այն բաղկացած լինի Հայաստանի բնակչության բոլոր առանձնահատկությունները ներկայացնող եւ արտահայտող բնակչության խմբերից: Այդ նկատառումով պետք է ձեւավորել **քառաստիճան ստրատիֆիկացված ընտրանք**.

- ընտրանքի 1-ին աստիճան՝ ***հետազոտության համայնքների ընտրություն***
- ընտրանքի 2-րդ աստիճան՝ ***հարցազրույցների տեղամասերի ընտրություն***
- ընտրանքի 3-րդ աստիճան՝ ***տնային տնտեսությունների ընտրություն***
- ընտրանքի 4-րդ աստիճան՝ ***ռեսպոնդենտի ընտրություն:***

5.2.2.1 Հետազոտության համայնքների ընտրությունը

Հետազոտության համայնքների ընտրությունը եւ դրանց միջեւ ընտրանքի բաշխումը պետք է կատարել այն մոտեցմամբ, որ այն արտահայտի.

- Հայաստանի բնակչության աշխարհագրական բաշխվածքը
- Հայաստանի բնակչության բաշխվածքն ըստ քաղաքների եւ գյուղերի:

Հայաստանի բնակչության աշխարհագրական բաշխվածքը ենթադրում է բնակչության թվաքանակի բաշխվածքն ըստ **վարչատարածքային միավորների**՝ Երեւանի եւ 10 մարզերի: Ընտրանքի բաշխումը պետք է իրականացնել գլխավոր համախմբության (18 եւ բարձր տարիքի բնակչության) մեջ առանձին վարչատարածքային միավորների բնակչության համամասնության: Սակայն սույն փաստաթղթի պատրաստման պահին ոչ մարդահամարի, ոչ էլ ընթացիկ հաշվառմամբ թարմացվող տվյալներում ԱՎԾ-ն չի ներկայացնում Հայաստանի բնակչության միաժամանակյա բաշխվածքն ըստ տարիքի եւ վարչատարածքային բաժանման, որտեղից հնարավոր կլիներ ստանալ միայն 18 եւ բարձր տարիքի բնակչության բաշխվածքն ըստ վարչատարածքային միավորների: Խնդրի լուծման համար կարելի է օգտագործել 2013թ.-ի Հայաստանի ժողովրդագրական ժողովածուն, որտեղից կարելի է ստանալ Հայաստանի 20 եւ բարձր տարիքի մշտական բնակչության վերաբերյալ ամենաթարմ տվյալները: Այս

մոտեցումը կիրառելի է, քանի որ տվյալները պետք է օգտագործվեն բացառապես համամասնություններ հաշվարկելու համար:

Աղյուսակ 6 - Ընտրանքի բաշխումն ըստ Հայաստանի վարչատարածքային միավորների

Վարչատարածքային միավորներ	20 եւ բարձր տարիքի մշտական բնակչությունն առ 01.01.2013թ. [1)]	Մասնաբաժինը	Ընտրանքի բաշխվածքը
Երեւան	813,412	36.3%	557
Արագածոտն	95,737	4.3%	66
Արարատ	189,416	8.4%	130
Արմավիր	193,053	8.6%	132
Գեղարքունիք	168,046	7.5%	115
Լոռի	173,053	7.7%	119
Կոտայք	185,742	8.3%	127
Շիրակ	184,726	8.2%	127
Սյունիք	105,700	4.7%	72
Վայոց Ձոր	38,690	1.7%	26
Տավուշ	94,224	4.2%	65
ՀԱՅԱՍՏԱՆ	2,241,799	100.0%	1,536

[1)] Համաձայն 2013թ.-ի Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի

Երեւանը հանդիսանում է Հայաստանի տնտեսական եւ սոցիալ-մշակութային խոշորագույն կենտրոնը, որտեղ բնակվում է Հայաստանի բնակչության 1/3-ից ավելին: Մայրաքաղաքի մեծ տարածքը եւ նրա տարբեր վարչական շրջանների առանձնահատկությունները թույլ են տալիս ենթադրել, որ Երեւանի բնակչությունն ըստ սոցիալ-տնտեսական ցուցանիշների միասեռ զանգված չէ: Այդ իսկ պատճառով **Երեւանի ընտրանքը եւս պետք է բաշխել նրա ամբողջ տարածքի (վարչական շրջանների) միջեւ**, որպեսզի հետազոտությամբ ստացված տվյալները բնորոշեն մայրաքաղաքի բնակչության բոլոր շերտերին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՎԾ-ն դեռեւս չի հրապարակել ՀՀ 2011թ.-ի մարդահամարի **Երեւանի եւ մարզերի արդյունքները**, ինչպես նաեւ այն, որ Հայաստանի ժողովրդագրական ժողովածուն չի պարունակում Երեւանի վարչական շրջանների 20 եւ բարձր տարիքի մշտական բնակչության վերաբերյալ տվյալներ, ուստի Երեւանի ընտրանքի բաշխումն ըստ վարչական շրջանների կարելի է իրականացնել Երեւանի ընդհանուր բնակչության թվաքանակի մեջ վարչական շրջանների ընդհանուր բնակչության թվաքանակի համամասնության հիման վրա:

Աղյուսակ 7 - Երեւանի ընտրանքի բաշխումն ըստ վարչական շրջանների

Վարչական շրջաններ	Ընդհանուր մշտական բնակչությունն առ 01.01.2013թ. [1)], հազ. մարդ	Մասնաբաժինը	Ընտրանքի բաշխվածքը
Աջափնյակ	108.7	10.2%	57
Ավան	53.3	5.0%	28
Արաբկիր	117.2	11.0%	61
Դավիթաշեն	42.5	4.0%	22
Էրեբունի	124.4	11.7%	65
Կենտրոն	126.0	11.8%	66
Մալաթիա-Սեբաստիա	133.7	12.5%	70

Նոր Նորք	127.4	11.9%	66
Նորք-Մարաշ	12.0	1.1%	6
Նուբարաշեն	9.7	0.9%	5
Շենգավիթ	137.2	12.9%	72
Քանաքեռ-Զեյթուն	74.2	7.0%	39
ԵՐԵՎԱՆ	**1,066.3**	**100.0%**	**557**

[1] Համաձայն 2013թ.-ի Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի

Ընտրանքը պետք է բաշխել նաեւ ըստ քաղաքների եւ գյուղերի: Դա կարելի է անել՝ հիմնվելով 2013թ.-ի Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի տվյալների վրա: Բաշխումը կատարվում է Հայաստանի վարչատարածքային միավորներից յուրաքանչյուրում 20 եւ բարձր տարիքի մշտական բնակչության կազմում քաղաքային եւ գյուղական բնակչության համամասնության հիման վրա:

Աղյուսակ 8 - Ընտրանքի բաշխվածքն ըստ քաղաքների եւ գյուղերի

Վարչատարածքային միավորներ	20 եւ բարձր տարիքի մշտական բնակչությունն առ 01.01.2013թ. [1]			Մասնաբաժինը		Ընտրանքի բաշխվածքը		
	Ընդամենը	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
Երեւան	**813,412**	813,412	0	100.0%	0.0%	557	557	0
Արագածոտն	**95,737**	22,845	72,892	23.9%	76.1%	66	16	50
Արարատ	**189,416**	54,246	135,170	28.6%	71.4%	130	37	93
Արմավիր	**193,053**	62,223	130,830	32.2%	67.8%	132	42	90
Գեղարքունիք	**168,046**	52,358	115,688	31.2%	68.8%	115	36	79
Լոռի	**173,053**	102,225	70,828	59.1%	40.9%	119	70	49
Կոտայք	**185,742**	101,107	84,635	54.4%	45.6%	127	69	58
Շիրակ	**184,726**	109,359	75,367	59.2%	40.8%	127	75	52
Սյունիք	**105,700**	72,401	33,299	68.5%	31.5%	72	49	23
Վայոց Ձոր	**38,690**	13,784	24,906	35.6%	64.4%	26	9	17
Տավուշ	**94,224**	40,451	53,773	42.9%	57.1%	65	28	37
ՀԱՅԱՍՏԱՆ	**2,241,799**	**1,444,411**	**797,388**	**64.4%**	**35.6%**	**1,536**	**988**	**548**

[1] Համաձայն 2013թ.-ի Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի

Ունենալով ընտրանքի՝ ըստ վարչատարածքային միավորների եւ բնակավայրերի տիպի բաշխման ցուցանիշները, պետք է որոշակի չափորոշիչների կիրառմամբ ընտրել հետազոտության համայնքները:

Քաղաքային համայնքների ընտրությունը: Ելնելով հետազոտությունն առավել ընդգրկուն դարձնելու նկատառումից, առաջարկվում է հետազոտության մեջ ներառել բոլոր մարզկենտրոնները և մարզկենտրոնից բացի ևս 2 քաղաք այն մարզերում, որտեղ քաղաքային բնակչությունը գերազանցում է 50 հազ. մարդը: Ավելի փոքր քաղաքային բնակչություն ունեցող մարզերում մարզկենտրոնից բացի ընդրվել է հավելյալ միայն մեկ քաղաք, բացառությամբ Վայոց Ձորի մարզի, քանի որ այստեղ հիմնական քաղաքային բնակչությունը կենտրոնացված է միայն մարզկենտրոնում: Բացառություն է կազմում նաև Շիրակի մարզը, քանի որ այստեղ նույնպես հիմնական քաղաքային բնակչությունը կենտրոնացված է մարզկենտրոնում, որի արդյունքում այստեղ մարզկենտրոնից բացի ընտրվել է մեկ քաղաք երկուսի փոխարեն:

Աղյուսակ 9 - Հետազոտության համար առաջարկվող քաղաքային համայնքները, դրանց բնակչությունը (հազ. մարդ) եւ բնակչության մասնաբաժինը (%՝ մարզում ընտրված քաղաքների ընդհանուր բնակչության մեջ)

	Մարզեր																			
Քաղաքային համայնքներ	Արագածոտն		Արարատ		Արմավիր		Գեղարքունիք		Լոռի		Կոտայք		Շիրակ		Սյունիք		Վայոց Ձոր		Տավուշ	
	Բնակչ.	%	Բնակչ.	%	Բնակչ.	%	Բնակչ.	%	Բնակչ.	%	Բնակչ.	%	Բնակչ.	%	Բնակչ.	%	Բնակչ.	%	Բնակչ.	%
Աբովյան											44.1	40.2%								
Աշտարակ	19.2	65.7%																		
Արթիկ													19.1	28.6%						
Արմավիր					28.9	35.4%														
Արտաշատ			22.4	37.3%																
Գավառ							20.3	43.0%												
Գյումրի													119.6	71.4%						
Գորիս															20.4	34.2%				
Եղեգնաձոր																	7.8	100.0%		
Եղվարդ											11.8	20.8%								
Թալին	5.0	34.3%																		
Իջեւան																			20.9	66.9%
Կապան															42.9	49.7%				
Հրազդան											41.5	39.0%								
Ճամբարակ							5.8	23.0%												
Մասիս			20.6	35.8%																
Մեծամոր					9.0	19.7%														
Մեղրի															4.5	16.1%				
Նոյեմբերյան																			5.1	33.1%
Սպիտակ									12.9	23.2%										
Վաղարշապատ					46.6	44.9%														
Վանաձոր									83.8	59.0%										
Վարդենիս							12.7	34.0%												
Վեդի			11.7	27.0%																
Տաշիր									7.6	17.8%										
Ընդամենը	**24.2**	**100%**	**54.7**	**100%**	**84.5**	**100%**	**38.8**	**100%**	**104.3**	**100%**	**97.4**	**100%**	**138.7**	**100%**	**67.8**	**100%**	**7.8**	**100%**	**26.0**	**100%**

Արագածոտնի մարզի օրինակով ներկայացնենք, թե ինչպես են հաշվարկվել մարզում քաղաքների բնակչության՝ միմյանց միջեւ ունեցած համամասնությունները: Օրինակ՝ Աշտարակի դեպքում ոչ թե հաշվարկվել է սովորական համամասնություն՝ ինչպես նշված է հետեւյալ բանաձեւում.

$$\text{Աշտարակի մասնաբաժինը} = \frac{19.2}{19.2+5.0} = 79.3\%$$

Այլ կիրառվել է ընդունված բանաձեւ, որը թույլ է տալիս մեղմել մեծ եւ փոքր համայնքների բնակչության թվաքանակի տարբերությունները եւ դրանց համամասնությունները մոտեցնել իրար.

$$\text{Աշտարակի մասնաբաժինը} = \frac{\sqrt{19.2}}{\sqrt{19.2}+\sqrt{5.0}} = 65.7\%$$

Հիմնվելով Աղյուսակ 9-ում ներկայացված մասնաբաժինների վրա, կարելի է մարզերի քաղաքային համայնքներին բաժին ընկնող ընտրանքը բաշխել քաղաքների միջեւ.

Աղյուսակ 10 - Մարզերի ընտրանքի բաշխումն ըստ ընտրված քաղաքային համայնքների

Մարզեր	Քաղաքային համայնքներ	Մարզի քաղաքների ընտրանքի չափը	Մասնաբաժինը (մարզում՝ միմյանց միջեւ)	Ընտրանքի բաշխվածքն ըստ քաղաքների
Արագածոտն	**1. Աշտարակ**	16	65.7%	11
	2. Թալին		34.3%	5
Արարատ	**3. Արտաշատ**	37	37.3%	14
	4. Մասիս		35.8%	13
	5. Վեդի		27.0%	10
Արմավիր	**6. Արմավիր**	42	35.4%	15
	7. Մեծամոր		19.7%	9
	8. Վաղարշապատ		44.9%	18
Գեղարքունիք	**9. Գավառ**	36	43.0%	16
	10. Ճամբարակ		23.0%	8
	11. Վարդենիս		34.0%	12
Լոռի	**12. Սպիտակ**	70	23.2%	17
	13. Վանաձոր		59.0%	41
	14. Տաշիր		17.8%	12
Կոտայք	**15. Աբովյան**	69	40.2%	28
	16. Եղվարդ		20.8%	14
	17. Հրազդան		39.0%	27
Շիրակ	**18. Արթիկ**	75	28.6%	21
	19. Գյումրի		71.4%	54
Սյունիք	**20. Գորիս**	49	34.2%	17
	21. Կապան		49.7%	24
	22. Մեղրի		16.1%	8
Վայոց Ձոր	**23. Եղեգնաձոր**	9	100%	9
Տավուշ	**24. Իջեւան**	28	66.9%	19
	25. Նոյեմբերյան		33.1%	9
Ընդամենը				**431**

Գյուղական համայնքների ընտրությունը: Գյուղական համայնքների ընտրության համար օգտագործվել է հետեւյալ մոտեցումը: Առաջին քայլով սահմանվել է գյուղական համայնքների նվազագույն քանակը, որի պարագայում հետազոտությունը կունենա լայն ընդգրկում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 01.01.2014թ.-ի դրությամբ Հայաստանում գյուղական համայնքների թիվը կազմում է 866[33], ապա գյուղերի ընտրանքի չափը (548 ռեսպոնդենտ) կարելի է բաշխել 40 համայնքների միջեւ, ընդ որում՝ առանց հետազոտության անցկացման համար տեխնիկական բարդությունների ռիսկի:

Երկրորդ քայլով անհրաժեշտ է գյուղական համայնքների նախասահմանված քանակը՝ 40-ը բաշխել ըստ մարզերի: Ընդ որում՝ հաշվի առնելով այն, որ մարզերում տարբեր են ինչպես գյուղական համայնքների թիվը, այնպես էլ գյուղական բնակչության թիվը:

Աղյուսակ 11 - Ընտրանքի բաշխվածքն ըստ քաղաքների եւ գյուղերի

Մարզեր	Գյուղական համայնքների քանակը[1)]	Գյուղական բնակչությունը (20+)[2)]	Գյուղական համայնքների կշիռը	Գյուղական բնակչության կշիռը	Գյուղերի ընտրանքի կշիռը	Գյուղերի ընտրանքի քանակը
	A	B	C	D	E (=(C+D)/2)	F
Արագածոտն	111	72,892	12.82%	9.14%	10.98%	4
Արարատ	93	135,170	10.74%	16.95%	13.85%	6
Արմավիր	94	130,830	10.85%	16.41%	13.63%	5
Գեղարքունիք	87	115,688	10.05%	14.51%	12.28%	5
Լոռի	105	70,828	12.12%	8.88%	10.50%	4
Կոտայք	60	84,635	6.93%	10.61%	8.77%	3
Շիրակ	116	75,367	13.39%	9.45%	11.42%	5
Սյունիք	102	33,299	11.78%	4.118%	7.98%	3
Վայոց Ձոր	41	24,906	4.73%	3.12%	3.93%	2
Տավուշ	57	53,773	6.58%	6.74%	6.66%	3
ՀԱՅԱՍՏԱՆ	**866**	**797,388**	**100.00%**	**100.00%**	**100.00%**	**40**

[1)] Աղբյուր՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվար-դեկտեմբերին», ԱՎԾ, 2014
[2)] Աղբյուր՝ 2013թ.-ի Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի

Գյուղերի ընտրությունը կարելի է կատարել PPS մեթոդով[34]: Ստորեւ բերված աղյուսակում ներկայացված է այդ մեթոդով գյուղերի ընտրության տարբերակ.
Այս մոտեցումը թույլ կտա գյուղական համայնքներից յուրաքանչյուրում իրականացնել առավելագույնը 20 հարցազրույց: Այս սահմանափակման կիրառության պատճառն այն է, որ որոշ մարզերում քաղաքներից մեծ հեռավորության վրա գտնվող բոլոր գյուղական համայնքների բնակչությունը բավականին փոքր է, ավելի հաճախ՝ 1,000 մարդուց կամ 180-200 տնային տնտեսությունից պակաս: Այդպիսի գյուղական համայնքներում որոշակի քայլով (յուրաքանչյուր 3-րդ կամ 5-րդ տնային տնտեսությունից ռեսպոնդենտի ընտրություն) 20 ռեսպոնդենտների ընտրության մեթոդը ենթադրում է 7-8 անգամ ավելի մեծ ցանկ՝ հաշվի առնելով հնարավոր մերժումները, ռեսպոնդենտի բացակայության դեպքերը:

[33] Աղբյուր՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվար-դեկտեմբերին», ԱՎԾ, 2014

[34] Մեթոդի նկարագիրը տես http://www.who.int/tb/advisory_bodies/impact_measurement_taskforce/meetings/prevalence_survey/psws_probability_prop_size_bierrenbach.pdf

Աղյուսակ 12 - Հետազոտության համար առաջարկվող գյուղական համայնքները եւ մարզերի ընտրանքի բաշխումն ըստ գյուղական համայնքների

Մարզեր	Գյուղական համայնքներ	Առկա բնակչությունը [1]	Մարզի գյուղերի ընտրանքի չափը	Ընտրանքի բաշխվածքն ըստ գյուղերի
Արագածոտն	1. Արագած	4,741	50	19
	2. Կոշ	2,460		14
	3. Կաթնաղբյուր	1,205		10
	4. Ծաղկաշեն	540		7
Արարատ	5. Արարատի	7,331	93	26
	6. Շահումյանի	3,613		18
	7. Ազատավանի	2,644		15
	8. Վանաշենի	2,024		13
	9. Ջրաշենի	1,572		12
	10. Դեղձուտի	957		9
Արմավիր	11. Փարաքարի	7,675	90	29
	12. Գայի	3,599		19
	13. Ակնալիճի	2,521		16
	14. Գրիբոյեդովի	1,754		14
	15. Ամբերդի	1,278		12
Գեղարքունիք	16. Վարդենիկի	9,466	79	24
	17. Սարուխանի	5,572		19
	18. Կարմիրգյուղի	4,399		16
	19. Արծվանիստի	2,486		12
	20. Նորակերտի	983		8
Լոռի	21. Օձունի	3,949	49	18
	22. Դսեղի	1,960		13
	23. Սարահարթի	1,057		10
	24. Միխայելովկայի	663		8
Կոտայք	25. Գառնիի	6,742	58	27
	26. Քանաքեռավան	3,076		18
	27. Բուժական	1,480		13
Շիրակ	28. Ազատանի	4,447	52	18
	29. Անուշավանի	1,906		12
	30. Սարատակի	1,318		10
	31. Քարաբերդի	813		7
	32. Արեգնադեմի	329		5
Սյունիք	33. Տեղի	2,044	23	11
	34. Ակներ (Բռուն)	991		7
	35. Նորավանի	360		5
Վայոց Ձոր	36. Գետափի	1,726	17	11
	37. Չիվայի	651		6
Տավուշ	38. Կողբի	4,070	37	17
	39. Գետահովիտ	1,991		12
	40. Ծաղկավանի	848		8
Ընդամենը			**548**	**548**

[1] Համաձայն ՀՀ 2011թ.-ի մարդահամարի

[2)] Վաղարշապատի տարածաշրջան

Այսպիսով՝ ընտրանքի ստրատիֆիկացիայի 1-ին աստիճանը բաղկացած է Երեւան քաղաքից իր 12 վարչական շրջաններով, մարզերի 42 քաղաքային եւ 40 գյուղական համայնքներից:

5.2.2.2 Հարցազրույցների տեղամասերի ընտրությունը

Համայնքներում հարցազրույցների տեղամասերի ընտրությունը կարելի է իրականացնել կոնկրետ համայնքի փողոցների կազմից որեւէ մեկի (կամ մի քանիսի) հասարակ պատահական ընտրության միջոցով: Հաշվի առնելով ընտրված համայնքներում ընտրանքի չափի տարբեր թվերը՝ max=72, min=3, ինչպես նաեւ տնային տնտեսությունների ընտրության առաջարկվող մեթոդը (նկարագրված է ներքեւում), կարիք կլինի կիրառել հարցազրույցների տեղամասերի ընտրության սահմանափակումների համակարգ, որի էությունը կայանում է հետեւյալում.

- Յուրաքանչյուր համայնքում, որպես հարցազրույցների տեղամաս, պետք է ընտրել մի քանի հատվածներ՝ այն նկատառումով, որ դրանք առավելագույնս ընդգրկեն համայնքի տարածքը: Օրինակ՝ Երեւանի Ավան վարչական շրջանում (որպես առանձին համայնքում), որտեղ պետք է իրականացվի 28 հարցազրույց, կարելի է ընտրանքը բաշխել 4-5 պայմանական հատվածների, որոնք կարող են լինել նախկին Սայաթ-Նովա եւ Թումանյան թաղամասերը, Ավան-Առինջը եւ Ավանի մասնավոր տնատիրությունների հատվածը: Այս մոտեցումը կիրառելի է Երեւանի բոլոր վարչական շրջաններում, բացառությամբ տարածքով եւ բնակչությամբ փոքր Նորք-Մարաշի եւ Նուբարաշենի: Մարզերի խոշոր քաղաքները եւս կարելի է բաժանել հատվածների՝ կողմնորոշիչ ունենալով առանձին թաղամասերը: Փոքր քաղաքներում եւ գյուղերում, որտեղ կարող են թաղամասեր չլինել, կարելի է հիմնվել փողոցների վրա:
- Յուրաքանչյուր համայնքին բաժին ընկնող ընտրանքը պետք է **հավասարաչափ բաժանել** հարցազրույցների տեղամասերի միջեւ:
- Տեղամասերի քանակը պետք է ընտրել այն նկատառումով, որ յուրաքանչյուր տեղամասում հնարավոր լինի անցկացնել **ոչ պակաս, քան 5 հարցազրույց**:
- Եթե համայնքին բաժին ընկնող ընտրանքը 5-ից փոքր է, ապա այդ համայնքում պետք է սահմանել **հարցազրույցների 1 տեղամաս**:

5.2.2.3 Տնային տնտեսությունների ընտրությունը

Տնային տնտեսությունների ընտրության համար պետք է նախապես ունենալ **տնային տնտեսության բնորոշումը:** Պաշտոնական երկու աղբյուրներում բերված սահմանումները բավարար պատկերացում են ստեղծում այդ բնորոշման վերաբերյալ.

> *<u>Քաղվածք ՀՀ Վիճակագրության Պետական Խորհրդի 20.03.2001թ.-ի թիվ 33 որոշումից</u>*
> *8. Ո՞րն է տնային տնտեսությունը:*
> *I. Առանձին բնակելի միավորում, կամ դրա մի մասում բնակվող անձը, որն ինքն իրեն ապահովում է կենսականորեն անհրաժեշտ ամեն ինչով եւ ընդհանուր տնտեսություն վարելու նպատակով տվյալ բնակելի միավորում բնակվող այլ անձանց հետ չի միավորում իր միջոցները:*
> *II. Առանձին բնակելի միավորում, կամ դրա մի մասում կամ մի քանի շինություններում համատեղ բնակվող երկու եւ ավելի անձինք, ովքեր իրենց կենսական անհրաժեշտ ամեն ինչն ապահովում են ընդհանուր տնտեսություն վարելով՝ ամբողջությամբ կամ մասամբ միավորելով իրենց միջոցները: Այդ անձինք կարող են կապված լինել ազգակցական կամ ամուսնական կապով, կամ չլինել ազգական, կամ եւ մեկը, եւ մյուսը:*

> *Մեջբերում «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքից)*
> *«Տնային տնտեսությունը» - դա միեւնույն բնակության վայրում հաշվառված եւ/կամ փաստացի բնակվող քաղաքացիների սոցիալական փոքր խումբն է, որի անդամները վարում են ընդհանուր տնտեսություն եւ ունեն ընդհանուր բյուջե:*

Տնային տնտեսությունների ներկայացված բնորոշումների հիման վրա պետք է անել կարեւոր վերապահում. **տնային տնտեսությունը - դա ընտանիքը չէ**: Վերջինս ավելի լայն հասկացություն է եւ դրա հիմքում ընկած է ազգակցական կամ ամուսնական կապը, անկախ անդամների բնակության վայրից: Մինչդեռ տնային տնտեսության բնորոշման հիմքում ընկած է բնակության կոնկրետ վայրը՝ անկախ անդամների ազգակցական կամ ամուսնական կապի հանգամանքից: Այս առումով տնային տնտեսության բնորոշման համար գլխավոր չափորոշիչ է հանդես գալիս անդամների **հաշվառման կամ փաստացի բնակության հասցեն**:

Հետազոտության տեղամասերում տնային տնտեսությունների ընտրությունը կարելի է իրականացնել **պատահական մարշրուտային մեթոդով**: Այն ենթադրում է հետազոտության կոնկրետ տեղամասում բացարձակ պատահականության սկզբունքով որեւէ մեկնարկային հասցեի ընտրություն, որտեղ բնակվում է առանձին տնային տնտեսություն եւ որի հետ իրականացվում է առաջին հարցազրույցը: Հարցազրույցի համար հաջորդ տնային տնտեսություններն ընտրվում են մեկնարկային հասցեից հաշված **յուրաքանչյուր n-րդ հասցեի** տնային տնտեսությունների կազմից: Հաշվի առնելով Հայաստանում քաղաքային եւ գյուղական բնակավայրերի մեծությունը (բնակչության թվաքանակով), ապա կարելի է տնային տնտեսությունների ընտրության քայլը սահմանել 3 կամ 5:

Նշված մեթոդի կիրառության դեպքում կարող են ի հայտ գալ առանձնահատուկ դեպքեր եւ հանգամանքներ, որոնք ազդելու են տնային տնտեսությունների ընտրության գործընթացի վրա: Ստորեւ ներկայացված են այդպիսի հնարավոր տարբերակները եւ դրանցում կոնկրետ քայլեր անելու ցուցումները:

ա) Տնային տնտեսությունների ընտրությունը *<u>բազմաբնակարանային շենքերից բաղկացած</u>* տեղամասերում

Հետազոտության տեղամասերում բազմաբնակարան շենքեր գլխավորապես կիանդիպեն քաղաքային համայնքներում: Նման տեղամասերում տնային տնտեսությունների ընտրության իրականացումը համեմատաբար հեշտ է, քանի որ բոլոր (կամ գրեթե բոլոր) քաղաքներում առկա են փողոցների անվանման ցուցանակներ, շենքերը թվագրված են, իսկ բնակարանները կամ թվագրված են, կամ էլ հնարավոր է ճշտել բնակիչներից հարցում անելով: Այդպիսով հնարավոր է իրականացնել տնային տնտեսությունների թվագրում ըստ հասցեի, որն էլ կծառայի որպես տնտեսությունների ընտրության բազա:

<u>Տնային տնտեսության ընտրության օրինակ 1</u>
Բազմաբնակարան շենքերից բաղկացած հետազոտության տեղամասում տնային տնտեսությունների ընտրություն
Ենթադրենք հարցազրույցներն անցկացվում են Արագածոտնի մարզկենտրոն Աշտարակ քաղաքում: Այստեղ նախատեսված է անցկացնել 13 հարցազրույց, որոնցից 6-ը մի հատվածում (թաղամասում, փողոցում), իսկ 7-ը՝ մեկ այլ հատվածում: Տնային տնտեսությունների ընտրության քայլը սահմանված է 3: Որպես հետազոտության տեղամաս՝ գլխավոր փողոց կարելի է հիմք ընդունել Աշտարակի կենտրոնական՝ Ներսես Աշտարակեցու փողոցը: Բացարձակ պատահականության սկզբունքով ընտրվում է Ներսես Աշտարակեցու փողոցի բազմաբնակարան շենքերից մեկը: Դա կարող է լինել, օրինակ՝ Ներսես Աշտարակեցի փողոց 4-րդ շենքը: Եթե այդ շենքը սկսած 1-ին բնակարանից ամբողջությամբ բնակելի է, ապա **<u>ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցի փողոց, շենք 4, բնակարան 1 հասցեն</u>** էլ կարող է լինել մեկնարկային հասցեն: 3 քայլով տնային տնտեսությունների ընտրության պարագայում այս կոնկրետ հետազոտության տեղամասում

հարցազրույցներ պետք է անցկացվեն հետեյալ հասցեներում.

1. ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցի փողոց, շենք 4, բնակարան 1
2. ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցի փողոց, շենք 4, բնակարան 4
3. ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցի փողոց, շենք 4, բնակարան 7
4. ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցի փողոց, շենք 4, բնակարան 10
5. ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցի փողոց, շենք 4, բնակարան 13
6. ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցի փողոց, շենք 4, բնակարան 16:

բ) Տնային տնտեսությունների ընտրությունը *առանձնատներից բաղկացած* տեղամասերում

Հետազոտության համար ընտրված համայնքներից առանձնատներով են կառուցապատված գյուղերն ամբողջությամբ եւ քաղաքները մասամբ (ունեն առանձնատներով կառուցապատված գոտիներ (փողոցներ, թաղամասեր): Առանձնատների հատվածներում հնարավոր են հետեյալ 2 դեպքերը.

- *Առանձնատների վրա առկա են հասցեի ամբողջական (փողոց+համար) կամ մասնակի (միայն համար) տարբերանշաններ*: Նման դեպքերում տնային տնտեսությունների ընտրությունը կատարվում է վերոհիշյալ «ա)» տարբերակի համար նկարագրված եղանակով:
- *Հնարավոր է առանձնատների վրա բացակայեն հասցեի տարբերանշանները*: Նման դեպքեր կարող են հանդիպել գյուղական համայնքներում, հատկապես՝ հեռավոր, փոքր բնակչությամբ կամ անկանոն կառուցապատված գյուղերում: Նման դեպքերում տնային տնտեսությունների ընտրությունը կատարվում է վիզուալ դիտարկման եղանակով:

գ) Տնային տնտեսությունների ընտրությունը այն տեղամասերում, որտեղ առկա են *դատարկ կամ չբնակեցված բնակարաններ կամ տներ*:

Անկախության տարիներին Հայաստանում արձանագրված ինտենսիվ արտաքին եւ ներքին միգրացիոն հոսքերի արդյունքում այսօր բնակչության զգալի մասը բնակվում է երկրից դուրս: Հաճախ կարելի է հանդիպել, որ երկրից բացակայում են ամբողջ տնային տնտեսություններ, իսկ նրանց բնակության վայրը՝ բնակարանը կամ տունը դատարկ է: Նման դեպքերում (ինչպես նաեւ ցանկացած այլ դեպքում, երբ ընտրված տնային տնտեսությունում հնարավոր չէ իրականացնել հարցազրույցը (դրա հետ կապված ավելի մանրամասն տես Բաժին 5.2.2.4 Ռեսպոնդենտի ընտրությունը)) **տնային տնտեսությունների թվագրումն ըստ հասցեի պետք է պահել անփոփոխ** եւ անցնել սահմանված քայլով նախատեսված հաջորդ հասցեին:

Տնային տնտեսության ընտրության օրինակ 2

Դատարկ կամ չբնակեցված բնակարաններով հետազոտության տեղամասում տնային տնտեսությունների ընտրություն

Ենթադրենք հարցազրույցներն անցկացվում են նույն Արագածոտնի մարզկենտրոն Աշտարակ քաղաքի նույն տեղամասում, ինչպես նկարագրված է *Տնային տնտեսության ընտրության օրինակ 1*-ում (տես վերեւում) եւ ընտրությունը կանգնել է

հետեյալ հասցեների վրա.

1. ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցի փողոց, շենք 4, բնակարան 1
2. ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցի փողոց, շենք 4, բնակարան 4
3. ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցի փողոց, շենք 4, բնակարան 7
4. ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցի փողոց, շենք 4, բնակարան 10
5. ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցի փողոց, շենք 4, բնակարան 13
6. ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցի փողոց, շենք 4, բնակարան 16:

Ենթադրենք նշված բոլոր հասցեներում հնարավոր է անցկացնել հարցազրույց, բացառությամբ բնակարան 4-ի եւ 13-ի, որտեղ հաշվառված տնային տնտեսություններն ամբողջ կազմով փաստացի բնակվում են արտերկրում եւ նրանց բնակարանները մշտապես դատարկ են: Այս դեպքում հետազոտության այս կոնկրետ տեղամասում ընտրանքի մեջ կհայտնվեն հետեյալ հասցեների տնային տնտեսությունները.

1. ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցի փ., շենք 4, բնակ. 1 → հարցազրույցը կայանում է (1)
2. ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցի փ., շենք 4, բնակ. 4 → բնակարանը դատարկ է, ***անցնել բնակարան 7***-ին
3. ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցի փ., շենք 4, բնակ. 7 → հարցազրույցը կայանում է (2)
4. ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցի փ., շենք 4, բնակ. 10 → հարցազրույցը կայանում է (3)
5. ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցի փ., շենք 4, բնակ. 13 → բնակարանը դատարկ է, ***անցնել բնակարան 16***-ին
6. ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցի փ., շենք 4, բնակ. 16 → հարցազրույցը կայանում է (4)

Քանի որ այս կոնկրետ տեղամասում պետք է անցկացվի 6 հարցազրույց, ապա ըստ հասցեների, պահելով սահմանված քայլը՝ 3, պետք է առաջ գնալ այնքան, մինչեւ լրանա հարցազրույցների նախատեսված քանակը՝ հետեյալ ձեւով.

7. ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցի փ., շենք 4, բնակ. 19 → հարցազրույցը կայանում է (5)
8. ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցի փ., շենք 4, բնակ. 22 → բնակարանը դատարկ է, ***անցնել բնակարան 25***-ին
9. ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցի փ., շենք 4, բնակ. 25 → հարցազրույցը կայանում է (6)

!!! Ավարտել ընտրված տեղամասում հարցազրույցների անցկացումը, քանի որ նախատեսված քանակը լրացել է

5.2.2.4 Ռեսպոնդենտի ընտրությունը

Տնային տնտեսության ընտրությունից հետո պետք է ընտրել տնտեսության այն անդամին, ում հետ պետք է անցկացվի անհատական հարցազրույց: Ռեսպոնդենտի ընտրությունը կարելի է կատարել **«մոտակա ծննդյան օրվա մեթոդով»**: Ռեսպոնդենտի ընտրության համար պետք է իրականացնել հետեյալ մի քանի գործողությունները.

1. *Կոնտակտի մեջ մտնել տնային տնտեսության պատասխանատու չափահաս անդամի հետ*: Դա այն անձն է, ով տիրապետում է եւ կարող է տեղեկություն տալ իր տնային տնտեսության անդամների մասին: Տնային տնտեսության պատասխանատու չափահաս անձին պետք է ներկայացնել հարցազրուցավարի այցի նպատակը եւ թույլտվություն ստանալ անդամներից մեկի հետ հարցազրույց անցկացնելու համար:
2. *Ցուցակագրել տնային տնտեսության չափահաս անդամներին եւ նրանց ծննդյան օրերը*: Պետք է տեղեկություններ տրամադրող տնային տնտեսության պատասխանատու չափահաս անձից պարզել պոտենցիալ ռեսպոնդենտների ցանկը, որն է՝ տնային տնտեսության չափահաս անդամների կազմը: Դրանցից մեկի ընտրության համար անհրաժեշտ է տնային տնտեսության բոլոր չափահաս անդամների անունները եւ ծննդյան օրերը:
3. *«Մոտակա ծննդյան մեթոդով» ընտրել ռեսպոնդենտին:* Ունենալով տնային տնտեսության բոլոր չափահաս անդամների անունները եւ ծննդյան օրերը, պետք է ընտրել ռեսպոնդենտին հետեյալ կերպ.
    - **Ռեսպոնդենտն այն անձն է, ում ծննդյան օրը նախորդում է եւ ամենամոտն է գտնվում հարցազրույցի անցկացման օրվան**:

<u>Ռեսպոնդենտի ընտրության օրինակ</u>
Ենթադրենք հարցազրույց անցկացվում է **<u>14.09.2014թ.</u>**-ին եւ ընտրված տնային տնտեսությունն է ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցի փողոց, շենք 4, բնակարան 1 հասցեում բնակվող տնտեսությունը: Տնտեսության չափահաս անդամների կազմը հետեւյալն է.

1. *Պետրոս ծնվ. 15.06.1948թ.*
2. *Ռիմա ծնվ. 30.10.1950թ.*
3. *Հրաչիկ ծնվ. 31.08.1970թ.*
4. *Անի ծնվ. 05.05.1972թ.*
5. *Արմեն ծնվ. 09.09.1991թ.*
6. *Պետրոս ծնվ. 18.02.1993թ.*

Հարցազրույցի օրվան (14.09.2014թ.) նախորդող եւ դրան ամենամոտը գտնվող ծննդյան օրը **<u>Արմենի ծննդյան օրն է՝ 09.09.1991թ.</u>**:

!!! Հենց Արմենն էլ հանդիսանում է ընտրված ռեսպոնդենտը

4. *Վերապահումներ եւ բացառություններ:* Հաճախ կարող են հանդիպել դեպքեր, որ տնային տնտեսությունների անդամների կազմը թվարկելիս տեղեկություն տվողը տնտեսության անդամ է համարելու անձանց, ովքեր իրականում որոշ պատճառներով կորցրել են այդ կարգավիճակը: Մասնավորապես այդպիսի դեպքի օրինակ է պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվող անձը: Ուստի պետք է ուշադիր լինել եւ պոտենցիալ ռեսպոնդենտների կազմից բացառել նմանատիպ կատեգորիաների անձանց: Ուստի՝

   - Տեղեկություն տվողի ընկալմամբ տնային տնտեսության անդամ համարվող, սակայն ժամանակավորապես (անկախ տեւողությունից) բացակայող հետեւյալ անդամներին. ա) *արտագնա աշխատանքի մեկնած անձ՝ անկախ տեւողությունից*, բ) *ուսանող, որը դասերի ժամանակ բնակվում են իր տնտեսության բնակության վայրից դուրս՝ ուսման վայրում* - **պետք է համարել տնային տնտեսության անդամ**:

   - Տեղեկություն տվողի ընկալմամբ տնային տնտեսության անդամ համարվող, սակայն ժամանակավորապես (անկախ տեւողությունից) բացակայող հետեւյալ անդամներին. գ) *պարտադիր զինծառայության մեջ գտնվող ժամկետային զինծառայող*, դ) *ազատազրկման վայրում գտնվող անձ*, ե) *բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում (մանկատուն, ծերանոց) գտնվող անձ* - **չպետք է համարել ընտանիքի անդամ**:

Ռեսպոնդենտների ընտրության գործընթացի վրա ազդում են բազմաթիվ գործոններ: Այդ իսկ պատճառով ընտրության փուլում հանդիպելու են բազմաթիվ առանձնահատուկ դեպքեր, ինչպիսիք են օրինակ՝ ա) ընտրված ռեսպոնդենտը հասանելի չէ, բ) ընտրված ռեսպոնդենտը անկարող է հարցազրույց տալ (օրինակ՝ խուլ եւ համր է), գ) ընտրված ռեսպոնդենտը հրաժարվում է հարցազրույց տալ եւ այլն: Այս բոլոր դեպքերի համար առաջարկվող լուծումները եւ ցուցումները ներկայացված են ռեսպոնդենտների ընտրության ուղեցույցում՝ սույն փաստաթղթի հավելվածներում:

5.2.3 <u>Ընտրանքի քվոտավորում. կողմ եւ դեմ հանգամանքներ</u>

XXI դարը աչքի է ընկնում երկրների միջեւ զարգացման աստիճանի բեւեռացվածությամբ, բնակչության բարեկեցության եւ կենսամակարդակի ընդգծված տարբերություններով: Դրանով պայմանավորված՝ մեր օրերում բնակչության միգրացիոն հոսքերը ստացել են ինտենսիվ բնույթ: Աշխատանք, ապրուստի միջոցներ եւ ապահով պայմաններ գտնելու համար բնակչության հսկայական զանգվածներ դիմում են

կարճաժամկետ կամ երկարաժամկետ, օրինական կամ օրինական միգրացիայի: Միգրացիոն հոսքերի ինտենսիվությունը վաղուց արդեն վերածվել է երկրների ժողովրդագրական իրավիճակի վրա ազդող գործոնի:

Հայաստանի բնակչությունը եւս մասնակից է միգրացիոն գործընթացներին, որի մեջ հիմնական մասը բաժին է ընկնում **աշխատանքային միգրացիային:** Աշխատանքային միգրանտների ճնշող մեծամասնությունը կազմում են **տղամարդիկ**: Այս պատճառով Հայաստանի չափահաս բնակչության (սույն հետազոտության տեսանկյունից՝ գլխավոր համախմբության) սեռային կառուցվածքում մշտապես առկա է որոշակի շեղում՝ ի վնաս արական սեռի բնակչության մասնաբաժնի:

Չափահաս բնակչության սեռային կառուցվածքում արական սեռի մասնաբաժինն էլ ավելի է փոքրանում, եթե ռեսպոնդենտների ընտրության ժամանակ «թեկնածուների» կազմից բացառվում է պարտադիր զինծառայության մեջ գտնվող ժամկետային զինծառայողների խումբը, որն ամբողջությամբ բաղկացած է տղամարդկանցից:

Թվարկված գործոններն իրենց ազդեցությունն են թողնում չափահաս բնակչության ժողովրդագրական կառուցվածքի վրա: Սակայն ինչպիսի՞ն է այդ ազդեցության չափը եւ ինչպե՞ս է այն փոփոխում Հայաստանի չափահաս բնակչության ժողովրդագրական կառուցվածքը՝ ստույգ տվյալներ չկան: Այլ հավասար պայմաններում **ընտրանքի քվոտավորումը կարող էր լիներ նկարագրված խնդրի լուծումը**: Սակայն սույն հետազոտության տեսանկյունից **դա այնքան էլ արդյունավետ լուծում չի կարող լինել**, քանի որ **ընտրանքի սեռատարիքային, կրթական եւ զբաղվածության կարգավիճակի քվոտաների սահմանման համար ճշգրիտ ելակետային տվյալներ չկան**:

Ուստի Հայաստանի բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման հետազոտության համար կարելի է զերծ մնալ ընտրանքի քվոտավորումից եւ դաշտային աշխատանքների (հարցազրույցների) իրականացման փուլում բոլոր ջանքերն ուղղել ընտրված տնային տնտեսությունների հետ կոնտակտի մեջ մտնելու, սահմանված մեթոդոլոգիայով ռեսպոնդենտին ընտրելու եւ հենց նրա հետ (եւ ոչ թե նույն սեռա-տարիքային-կրթական հատկանիշներով մեկ ուրիշի հետ) հարցազրույց անցկացնելու վրա: **Տնային տնտեսությունների եւ ռեսպոնդենտների ընտրության մեթոդից չշեղվելու արդյունքում կարելի է ստանալ ավելի ներկայացուցչական ընտրանք, քան քվոտավորման դեպքում**:

5.2.4 Առաքելություն «գտնել ռեսպոնդենտին»

Քանի որ ռեսպոնդենտների ընտրությունն իրականացվելու է տնային տնտեսություններ այցելությունների արդյունքում, ապա պետք է նկատի ունենալ, որ շատ հաճախ լինելու են ռեսպոնդենտի հետ հարցազրույց անելու օբյեկտիվ դժվարություններ: Այդ դժվարությունները պայմանավորված են հարցազրուցավարների այցելության պահին տնային տնտեսության անդամների կամ ընտրված ռեսպոնդենտի տանը չլինելով: Կապված հիմնականում աշխատանքային գործունեության, բայց նաեւ անձնական տարաբնույթ պատճառների հետ, օրվա ցերեկային ժամերին ընտրված տնային տնտեսությունների անդամները կամ ընտրված ռեսպոնդենտը կարող են տանը չլինել: Այս դեպքում խնդրի լուծման երաշխավորությունը հետեւյալն է. **հարցազրույցները պետք է իրականացնել *աշխատանքային օրերի երեկոյան ժամերին* (ժամը 16:00-22:00 հատվածում) եւ *ոչ աշխատանքային օրերին*: Նշված ժամերին եւ օրերին տնային տնտեսության անդամներին հանդիպելու հավանականությունն անհամեմատ մեծ է**:

Սակայն անգամ նշված ժամերին կամ օրերին հարցազրույցների կազմակերպումը չի երաշխավորում, որ տնային տնտեսության հետ կոնտակտը կկայանա կամ ընտրված ռեսպոնդենտը տանը կլինի: Այդ խնդրի լուծման համար պետք է կիրառել **3 հետայցերի մեթոդը:** Դա նշանակում է, որ եթե 1-ին այցի

արդյունքում հնարավոր չի եղել կապ հաստատել ընտրված տնային տնտեսության հետ (օրինակ՝ տանը մարդ չկա) կամ ընտրված ռեսպոնդենտը տանը չէ, ապա նրա հետ հանդիպելու համար հարցազրուցավարը պետք է երկրորդ, իսկ եթե հարկ լինի՝ նաեւ երրորդ անգամ այցելի նույն տնային տնտեսությանը: Երկրորդ եւ երրորդ հետայցերը պետք է կազմակերպել հետեւյալ կերպ.

- **եթե տնային տնտեսության հետ կոնտակտը կայացել է**, ապա կարելի է տնային տնտեսության որեւէ չափահաս անդամից կամ հենց ընտրված ռեսպոնդենտից (օրինակ՝ հեռախոսով կապ հաստատելով) ճշտել նրա տանը լինելու հավանական ժամը/օրը եւ հաջորդ այցը(երը) պլանավորել ըստ այդմ,
- **եթե տնային տնտեսության հետ կոնտակտը չի կայացել**, ապա հաջորդ այցը պետք է կազմակերպել որոշակի խելամիտ ժամանակ անց՝ մի քանի օր հետո, եթե հնարավոր է՝ որոշակի ուղղորդիչ տեղեկություն ստանալով մոտակա տարածքում բնակվող այլ տնային տնտեսություններից:

5.3 ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5.3.1 Հարցազրուցավարների ընտրությունը եւ մեթոդավորումը

Աշխատանքները արդյունավետ եւ որակյալ կազմակերպելու համար շատ կարեւոր է հարցազրուցավարների ճիշտ ընտրությունը: Հայաստանի բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման հետազոտության շրջանակներում հարցազրուցավարի թեկնածուների խումբը պետք է ձեւավորվի փորձառու հարցազրուցավարներից, հիմնվելով հետեւյալ բնորոշիչների վրա.

- թեկնածուները պետք է ունենան **առնվազն 5 հանրային հարցումների մասնակցության փորձ**
- թեկնածուները պետք է ունենան **դեմ առ դեմ հարցազրույցների անցկացման փորձ**
- թեկնածուները պետք է ունենան տարբեր սեռա-տարիքային խմբերի եւ կրթական մակարդակով անձանց հետ **հաղորդակցվելու լավագույն հմտություններ**:

Հարցազրուցավարի թեկնածուների լավագույն կազմը ձեւավորելու համար ցանկալի է, որ սույն հետազոտության պատվիրատուն անձամբ ներկա լինի կամ մասնակցի այդ գործընթացին:

Հարցազրուցավարի թեկնածուների կազմից հիմնական հարցազրուցավարների ընտրությունը պետք է կատարվի ռեսպոնդենտի ընտրության եւ հարցաշարի լրացման վերաբերյալ մեթոդավորման (ուսուցման եւ ցուցումներ) արդյունքների հիման վրա, որը պետք է անցկացվի ռեսպոնդենտի ընտրության եւ հարցաշարի լրացման ուղեցույցների հիման վրա: Հաշվի առնելով հետազոտության առարկայի մեծ ծավալը եւ բովանդակային կառուցվածքը, հետազոտող կազմակերպությունը հարցազրուցավարի իր թեկնածուների մեթոդավորման համար պետք է հատկացնի բավարար ժամանակ՝ հետեւյալ գործողություններն իրականացնելու համար.

- հարցազրուցավարի իր թեկնածուներին պետք է ներկայացնի հետազոտության նպատակը,
- հարցազրուցավարի իր թեկնածուներին պետք է ծանոթացնի հարցաշարին, հարցաշարի լրացման եւ ռեսպոնդենտի ընտրության ուղեցույցներին,
- հարցազրուցավարի իր թեկնածուներից յուրաքանչյուրի հետ հետազոտության հարցաշարով պետք է անցկացնի 1-2 հարցազրույցներ, որտեղ թեկնածումները հանդես կգան որպես ռեսպոնդենտ,
- հարցազրուցավարի իր թեկնածուներին պետք է դուրս բերի դաշտ՝ փորձնական հարցազրույցներ իրականացնելու համար, որոնց ընթացքում պետք է խստագույնս պահպանվեն ռեսպոնդենտի ընտրության եւ հարցաշարի լրացման մեթոդական ցուցումները:

Հարցազրուցավարի թեկնածուների կազմից հիմնական հարցազրուցավարները պետք է ընտրվեն մեթոդավորման վերոհիշյալ բոլոր գործողություններին մասնակցելուց եւ միայն այն բանից հետո, երբ հետազոտող կազմակերպությունը վստահություն կունենա հարցազրուցավարի իր թեկնածուների կողմից ռեսպոնդենտի ընտրության եւ հարցաշարի լրացման գործողությունների ճշգրիտ կատարման վերաբերյալ:

5.3.2 Հարցազրուցավարների աշխատանքի վերահսկողությունը

Հարցազրուցավարների աշխատանքի վերահսկողության համար հետազոտող կազմակերպությունը պետք է իր աշխատակազմում ունենա **վերահսկողներ**, որոնց քանակը կարելի է սահմանել ամեն 3-4 հարցազրուցավարին 1 վերահսկող հաշվարկով: Վերահսկողի գործառույթը խիստ կարեւոր է հարցազրույցները սահմանված մեթոդոլոգիայով անցկացնելու եւ հարցաշարերի՝ լրիվությամբ եւ անթերի լրացված ձեւով ստանալու համար: Վերահսկողների գործառույթները պետք է լինեն առնվազն.

- վերանայել ամբողջությամբ լրացված հարցաթերթերը եւ ստուգել, թե արդյոք ճիշտ են լրացված,
- ստուգել հարցաշարի այն դաշտերը, որտեղ նշված են տնային տնտեսությունների չափահաս անձանց անունները եւ նրանցից մեկի, որպես ռեսպոնդենտի, ընտրության ճշտությունը,
- համակարգել իր խմբի հարցազրուցավարների աշխատանքը եւ նրանց հետ ներկա լինել մի քանի հարցազրույցների,
- պարբերաբար հանդիպել իր խմբի հարցազրուցավարների հետ՝ աշխատանքը քննարկելու, բարելավելու եւ կազմակերպելու համար,
- չփորձել արդարացումներ գտնել հարցազրուցավարի սխալների համար, չծածկել սխալ կամ թերի արված աշխատանքը, միջոցներ ձեռնարկել վատ աշխատողների եւ թերությունները շտկելու ուղղությամբ,
- օգնել հարցազրուցավարներին լուծել ռեսպոնդենտների հետ ունեցած խնդիրները այն դեպքերում, երբ ռեսպոնդենտները չեն պատասխանում հարցերին կամ հրաժարվում են հարցազրույցին մասնակցել:

6 ԱՄՓՈՓԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հաշվի առնելով ֆինանսական կարողությունների գնահատման միջազգային փորձը, ինչպես նաեւ ՀՀ ՖԿԱՌ-ի շրջանակներում ձեւակերպված հիմնական սկզբունքները, ՀՀ ԿԲ-ը ստեղծել է ֆինանսական կարողությունների գնահատման նոր մեթոդաբանություն, որը բաղկացած է 4 հիմնական կառուցվածքային մասերից՝ Ֆինանսապես գրագետ մարդու նվազագույն հատկանիշների մատրից, Հարցաշար, Ֆինանսական կարողությունների գնահատման ենթաինդեքսների մատրից եւ Ֆինասական կարողությունների ինդեքս:

28 տարբեր ենթաինդեքսների համակարգի միջոցով այս մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս ֆինանսական կրթման քաղաքականություն մշակողներին առավել թիրախավորված եւ արդյունավետ ռազմավարական ծրագրեր իրականացնել, գնահատել եւ վերահսկել ՀՀ ՖԿԱՌ-ի արդյունավետությունը ժամանակի ընթացքում: Ավելին, այն հնարավորություն է տալիս առավել խորը վերլուծություններ կատարել ըստ ընտրանքի առանձին խմբերի (սեռ, տարիք, տարածաշրջան, եկամուտների մակարդակ, կրթություն, զբաղվածություն եւ այլն): Միեւնույն ժամանակ չպետք է մոռանալ, որ Հայաստանի բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման սույն մեթոդաբանությունը նախատեսված է **միայն ողջ Հայաստանի մասշտաբով** հետազոտության անցկացման համար եւ ընտրանքի առանձին խմբերի համար ներկայացուցչական չէ: Դրա լուծումը մեկն է. սահմանել ընտրանքի այն խմբերը, որոնքց համար ցանկալի է ունենալ ներկայացուցչական տվյալներ եւ ըստ այդմ մեծացնել ընտրանքի չափը: Պարզության համար կարելի է նկատի ունենալ, որ բացի ողջ հանրապետությունից, նաեւ մարզերի մասշտաբով ներկայացուցչական տվյալներ ունենալու համար հարկ կլինի ընտրանքի չափը 1,536-ից հասցնել մոտ 15 հազարի:

Բացի այս բավականին դժվար է միանշանակորեն դուրս բերել ֆինանսական կարողությունների 4 բաղադրիչների (գիտելիք, հմտություն, վերաբերմունք եւ վարքագիծ) փոխազդեցությունները եւ դրանք հասկանալու համար հետագայում առավել խորը հետազոտությունների, ֆոկուս խմբերի եւ այլ վերլուծությունների կարիք կլինի: Մասնավորապես հետագայում վերլուծության արդյունքում կարելի է առանձնացնել ենթա-թիրախներ, եւ դրանց հիման վրա դուրս բերել ֆինանսական կարողությունների բաղադրիչների փոխազդեցությունները:

Նշենք նաեւ, որ այս մեթոդաբանության պարզության շնորհիվ հնարավոր կլինի առավել հեշտ ապահովել հասարակական հաշվետվելիությունը: Հասարակ մարդիկ կարող են տեսնել եւ վերլուծություններ կատարել՝ հիմնվելով ֆինանսական կարողությունների գնահատման ենթաինդեքսների համակարգի վրա:

Ինչպես արդեն նշվել է, ներկայիս միջազգային մոտեցումները հնարավորություն չեն տալիս համեմատել երկրները միմյանց հետ: Սակայն եթե այս մեթոդաբանության շրջանակներում առաջարկվող ՖԿԻ-ի հաշվարկման սկզբունքները ադապտացվեն նաեւ այլ երկրների կողմից, հնարավոր կլինի իրականացնել երկրների միջազգային ռեյտինգավորում ֆինանսական կարողությունների մակարդակների հիման վրա:

7 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ներքոհիշյալ նյութերը կազմում են սույն մեթոդաբանության անբաժան մասը: Այս փաստաթղթում առկա են բազմաթիվ հղումներ ներքոհիշյալ 3 նյութերին եւ առանց դրանց սույն փաստաթղթի ճիշտ եւ հեշտ ընկալումը կդառնա անհնար: Ուստի ցանկացած օգտագործող պետք է իր տրամադրության տակ ունենա սույն փաստաթուղթը, որն է՝ **Հայաստանում բնակչության ֆինանսական կարողությունների գնահատման մեթոդաբանությունը**, ինչպես նաեւ՝

7.1 ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ՆԱԽԱԳԻԾ

7.2 ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

7.3 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՖԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄՈԴՈՒԼ